

891.99

Q-44.

ԱՐՐԱՀԱՄ ԱԳԱՅԵԱՆՑ.

Հ. Ա. Գրիգորյան

ԶԱՐ ՄԱՐԴՈՒ ՎԵՐՋԸ

ԴՐԱՄԱ ՀԻՆԳ ԴՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԸ:

00
1-ԱՂ

Եկեղեցաշարի տպարան Ե. Աւետիսեանի, Մոսկւա.
1911.

23 JUN 2005

19 NOV 2010

սպ.

ԱՐՐԱՀԱՐ ԱՂԱՅԵԱՆՑ.

891.99

Ա-44

64



ԶԱՐ ՄԱՐԴՈՒ ՎԵՐՋԸ

ԴՐԱՄԱ ՀԻՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ:



1001
230

Էլեքտրաշարժ տպարան Ե. Աւետիքեանի, Մոսկւա,
1911.

ՉԱՐ ՄԱՐԴՈՒ ՎԵՐՋԸ

Դրամա հինգ արարողածով:

ԳՐԻԾՈՂ ԱՆՁԻՆՔ.

ՄԵԺԼՈՒՄ ԿՈՒԼԿՈՒԼԵԱՆՑ.—Ձպսակուած, շատ հարուստ, փողի տոկոսով ապրող, 52 տարեկան, մռայլ ու տղեղ դէմքով, հազնուծ է հարուստ ու անճաշակ: Պինդժակը, ժիլէտը լինում են զանազան գոյներէջ, ծածկում է ցիլինդր:

ՄԱՆՈՒԿ.—35 տարեկան. ոչ աւարտած: Կուլկուլեանի հաւատարմատարր, հազնուծ է իրաւաբանի հագուստ լայն ու հին:

ՎԱՐԴԱՆ.—21 տարեկան: Ղարաբաղի հագուստով, առաջ Կարապետի ծառան, յետոյ Կուլկուլեանի. կոպիտ շարժմունքներով ու խորամանկ դէմքով:

ԼԵՒՈՆ.—Կուլկուլեանի ծառան, քիչ զարգացած, գունատուած դէմքով, 20 տարեկան:

ՅՈՒՍԿ.—Ես Կուլկուլեանի ծառան, 18 տարեկան, վախկոտ ու ամաչկոտ:

ԱՐԱՊԵՏ ՊԱՐՈՆԵԱՆՑ.—Հարուստ վաճառական, 57 տարեկան հազնուծ է կէսը ասիական, կէսը երուպական: Առողջ ու կարմիր դէմքով:

ՄԱԳԹԱՂ.—Կարապետի զինը, 50 տարեկան, թառամած ու համակրելի դէմքով:

ԵՐՈՒ ՈՍՏԻԱՆ.—Ոստիկանի հագուստով:

Типография Е. Аветикова.

МОСКВА, Больш. Лубянка, Варсонофьевский пер., домъ Бауеръ.

1911.

ՍԱՄՈՒԼ.—Ուսանող. Կարապետի միակ զաւակը 23 տարեկան, գունատուած ու դուրեկան զէմքով, հազնում է ուսանողի հազուստ նոր ու կեղտոտուած, հազուստի կոճակները տեղ-տեղ պոկուած:

ՄԱՆՈՒՇԱԿ.—Կարապետի աղախներ, 26 տարեկան, կարմիր ու կոպիտ զէմքով:

ԲԱՐՍԵՂ ԱԻԷՏԵԱՆՑ.—Կարապետի ընկերը, 50 տարեկան, հազնում է ասիական լայն հագուստ:

ԱՍՏՂԻԿ.—Բարսեղի կինը 42 տարեկան հազնում է աւելի երիտասարդ և ճաշակով, քիչ զարգացած, դուրեկան զէմքով:

ՇՈՒՇԱՆ.—Բարսեղի աղջիկը, 20 տարեկան, զրաւիչ ու զեղեցիկ զէմքով, հազնում է համեստ:

ՋԱՔԱՐ.—Ուսանող, Բարսեղի երեխայի ընկերատուը, 23 տարեկան, ուսանողի աղքատ հազուստով:

ՌՈՒԲԷՆԵԱՆՑ ԻՍՍԱՅԱԿ.—Հեռու ազգական Բարսեղի կնոջ, 55 տարեկան, հազնում է սև:

ՆԱՅԱՊԵՏ.—Մակլէր, 35 տարեկան: Եւրոպական հին հազուստով:

ՍԻՄԷՈՆ.—Պարապում է ճրգերի առևտուրով: Կովկասի հազուստով, 38 տարեկան:

ՍԻՐԱՆՈՅՇ.—Մի ոմն Պետրոսի կին: 28 տարեկան. հազնում է համեստ, ճաշակով, զրաւիչ ու զեղեցիկ զէմքով:

ԼՈՒՍԻԿ.—Սորա աղջիկը, 7 տարեկան:

ԵՐՈՒԱՆԴ.—Արհեստաւոր:

ՍՈՆԱ.—Խեղճ կին:

Ժամանակակից զէպը 191... թ.:

ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ.

Բեմը ներկայացնում է Կարապետի և իր ընկերոջ կանտորան 3 մուտքով. սեղան, էտաժերկա, զրքերը դարսած. բազմոց, աթոռներ և այլն, պատուհան, քեմի նախասենեակ:

ՏԵՍԻՒ 1.

Կարապետ և Բարսեղ:

ԿԱՐԱՊԵՏ. (անհամբեր նայում է պատուհանին): Սա չեկաւ: **ԲԱՐՍԵՂ.** Զարմանալի մարդ ես, ապրանքը տեսար, ձեռնտու է, իսկոյն պէտք է խեղդէիր. էհ...

ԿԱՐ. Ի՞նչ է՛հ, դու էլ ինձ մօտ էիր թէ չէ:

ԲԱՐՍ. Որսի ժամանակ ընկերոջը չէ՛ն նայիլ, որսը պատահեց իսկոյն պէտք է թրրախի, խփես սպանես:

ԿԱՐ. Նոր եկած մարդ է, քաղաքին անծանօթ, կգայ կխեղդուի միւսների պէս:

ԲԱՐՍ. (աչքերը աղօթքի ձևով) Տէր-Աստուածը բերանիդ լսի...

ԿԱՐ. (նայելով պատուհանին, ուրախ): Որսը զալիս է: Զէ, նա չէ:

ՏԵՍԻՒ 2.

Նոյնը և Նահապետ:

ՆԱՅԱՊԵՏ. Բարեւ, ի՞նչպէս էք:

ԿԱՐ. Լա՛ւ:

ՆԱՅ. Որ հարուստ մարդկանց տեսնում եմ, սիրտս ուրախանում է:

ԲԱՐՍ. Եթէ հարուստ մարդիկ չլինեն, աղքատները քաղցած կմնան:

ԿԱՐ. Ճիշտ է, ես էլ աղքատ եմ կարծում:

ՆԱՅ. Առհասարակ հարուստները միշտ միատեսակ և լաւ են մտածում, աղքատների ասածը, մտածածը ահա (փչում է) քամի, փչի հա, փչի:

ԿԱՐ. (նայելով պատուհանին, ուրախ): Գալիս է, գալիս է... (Նահապետին խփում է):

ՆԱՅ. Ո՛ւհ, ո՛ւհ, ո՛ւհ:

ԲԱՐՍ. Ոչինչ քեասիր մարդիկ սովոր են լինում ծեծին: (Ինքը ևս խփում է):

ՆԱՅ. (փախչելով անկիւն): Ո՛ւհ, ո՛ւհ, ո՛ւհ:

ՏԵՍԻԼ 3.

Նոյնը և Սիմէօն, և յետոյ Բարսեղ:

ԿԱՐ. (Սիմէօնին): Ծախեցի՞ր ընկոյզը (Նահապետը խորամանկ մօտենում է):

ՍԻՄ. Ձէ, չծախեցի:

ԲԱՐՍ. (տանում է Կարապետին մի կողմ): Ես Նահապետին դուրս տանեմ, դու դորան խեղդիր: (Նահապետը իսկոյն Սիմէօնին հասկացնում է, որ դրսումը կսպասի, իրեն ընկոյզ հարկաւոր է):

ԲԱՐՍ. (Նահապետին քաշելով տանում է): Արի, խօսք ունիմ ասելու:

ՆԱՅ. (Սիմէօնին ծածուկ): Կսպասեմ դրսումը:

ԿԱՐ. Բէր կշռի՞, որդի, զընդզընգալի ոսկիներն ստացիր ու Աստծուն փառք տուր, որ ինծպէս մարդուն պատահեցար:

ՍԻՄ. (ղժուարանալով): Համարեա ծախուած է:

ԿԱՐ. (զայրացած): Ի՞նչ... քեզ մի այնպէս ծախուած ցոյց կտամ, փոխանակ Կովկաս՝ Տրապիզոն կերթաս: Ձեռք տուր, էհ, հայ մարդ ես, 50 կոպէկ էլ փթում աւելացնում եմ, դէհ, գնա բեր:

ԲԱՐՍ. (զալիս է, զարմացած): Ի՞նչ 50 կոպէկ:

ԿԱՐ. (Սիմէօնին քաշելով դէպի դուռը): Գնա, գնա, եղբայր, որդի, իմ հայ: (Սիմէօնը գնում է):

ԲԱՐՍ. Ձէ՞ որ նա խեղդուելու էր եկել...

ԿԱՐ. Ես էլ այդպէս էի կարծում: Ինչ պատահեց, չհասկացայ:

ՏԵՍԻԼ 4.

Նոյնը և Նահապետ:

ԿԱՐ. (Նահապետին) ուղիղ ճակատիս նայիր, դու ընկոյզ բերող մարդուն հիմա չտեսնո՞ւ:

ՆԱՅ. Այո, նա ինձ հիմա դրսումը պատահեց ու հազար մի բան խօսեց ձեր հասցէին: Վերջը—[Թէ արի ընկոյզը ծախենք մենք օգտուենք: Տեղն ու տեղս կրակ զարծայ ու մի լաւ հայհոյեցի:

ԿԱՐ. (Բարսեղին): Սա սուտ է ասում, դնանք մանրամասը հեռախօսով իմանանք: (Գնում են, սենեակի լուսը քչացնելով):

ՆԱՅ. Էս անտէր սուտն առանց ոտների ա, էլի՜. մանաւանդ սուտը սուտով դրսուելը շատ դժուար է, շուտ հրաժարուեմ (արագ գնում է):

ՏԵՍԻԼ 5.

Ցոլակ և Լևոն:

ԼԵՒՈՆ (գող է գող նայում է բեմին): Աղա՛, մի կտոր հացի փող տուէ՛ք, քաղցած ենք... Արի՛, Ցոլակ, մարդ չկայ (մտնում են փնտրում, գտնում են հաց, ուտում ու խցկում գրպանները):

ՑՈԼ. Իսկ վաղը ի՞նչ պէտք է ուտենք...

ԼԵՒՈՆ. (համարձակ): Ոչինչ, ուրախ կաց, ա՛յ վաղուայ հացի փող (վերցնելով սեղանից դանակը):

ՑՈԼ. (փնտրելով): Ձեն հաւատում, որ քաղցած ենք...

ԼԵՒՈՆ. (փնտրելով երբեմն դուրս նայելով): Այո՛, կուշտ մարդը դժուար կհաւատայ, մի քիչ առաջ ես կարծում էի [Թէ աշխարհում բոլորը քաղցած էին (ուտելով հացը). բայց հիմա— ոչ: Մարդս փախենալով, որ մի օր կարող է քաղցած մնայ, նա իր համար մի քանի հարիւր տարուայ պաշար է հաւաքում, ի դուր է վախենալը. երբ մարդուս ստամոքսը կարիք է զգում, նա անգուլթ կերպով հրամայում է մարդուն ամենայն ինչ անել, միայն ստամոքսի պահանջը շուտ լրացնել: Խիղճը լուծւում է, իմանալով ստամոքսի արդար պահանջը:

ՑՈԼ. (ղռան մօտից): Գողեր են գալիս... (ընկնում է Լեւոնի գիրկը):

ԼԵՒՈՆ. Գնանք շուտ: (Պատուհանով փախչում են):

ՏԵՍԻԼ 6.

Վարդան, քիչ յետոյ Կարապետ և Բարսեղ:

ՎԱՐԴԱՆ. (նայելով պատուհանից): Գեօղեր են է՛, լաւ

ա վեր շուտ վրայ հասալ, թէ չէ կ'թլանին քստեղերը: (Աւելում է): Էս խաղախները զրմնալի մարթիք ըն, օրէկան էս կանտորը հարիւր մարդ ա կիամ, հարիւրէն հետ էլ հարիւր ջուռա սոտ են խօսում, ամմա վեր եսըմ սոտ խօսում, շան օյին են դնում կլխիս: Հալբաթ ամեն տեղ տըհէնց ա օրէնքը էլի... գիադէն պեղմա դորթ խօսալ, աղէն—սոտ:

ԿԱՐ. (գալիս է Բարսեղի հետ, Վարդանին): Ոչ ոք չի՞ եղել, Վարդան:

ՎԱՐԴ. Վէչ, աղա, կ'թողնեմ հանցու գեօղ մտնի քստեղ:

ԲԱՐՍ. (լոյսը շատացնում է): Լաւ խաբեց էդ մակլերը մեզ, թող մեր խաբար ծիրանը ծախի նա, ես գիտեմ ինչ կանեմ: (Վարդանը գնում է):

ՏԵՍԻԼ 7.

Սիմէօն և Նոյնք

ԲԱՐՍ. (Սիմէօնին): Հը՛, դըստումը սովդէն չի տըաբեց հա՛, որ յետ ես եկել, մեզ հարկաւոր չէ, զնա՛, զնա՛:

ԿԱՐ. (տանելով Բարսեղին մի կողմը): Գնա, հեռախօսով իմացիր նրան ընկոյզ հարկաւոր է, որ հիմա գնենք:

ԲԱՐՍ. (սպառնալով Սիմէօնին գնում է):

ԿԱՐ. Իմ ընկերը չար մարդ է, և քեզ չի սիրում: Գնա՛ շուտ, ես կգամ փողերը կտամ, ապրանքը կստանամ:

ՍԻՄԷՅՈՆ. Ձեր ընկերոջից ծածո՛ւկ:

ԿԱՐ. (քաշելով դէպի դուռը): Իհարկէ, այս բանը ես կը իմանամ դու և Աստուածը: (Սիմէօնը գնում է): Օֆերիմ ես...

ԲԱՐՍ. (գալիս է): Ընկոյզը ուղում են, 200 ռուբլի վաստակում ենք, բաշի հաշուի մէջ էլ մի բան կպոկենք, Փառք Աստուծոյ: Շնուտ կբերի:

ԿԱՐ. Ինչ կբերի, նա քեզ հայհոյեց, գող անուանեց, ես պէտք է նրան սպանելի...

ԲԱՐՍ. Ես գնամ նորա հերը անիծեմ (ուղում է գնալ):

ԿԱՐ. Նա քեզ չի սիրում, ի՞նչ գնաս, ես կգնամ կվերջացնեմ:

ԲԱՐՍ. Լաւ, ես ցոյց կտամ այն անիրաւին:

ԿԱՐ. (հառաչելով): Էհ, փուչ աշխարհք. ունայնութիւն ունայնութեանց:

ԲԱՐՍ. Պապս ասում էր, իրեն պապը ախոռում շաքաթը երկու սատանայ էր բռնում, երեւում է, որ այն ժամանակները կատուների նման մարդկանց մէջ նրանք ման գալիս են եղել, միւսնոյն ժամանակ այսքան խաբեբայութիւն չի եղել, ինչպէս հիմա:

ԿԱՐ. Այդպէս է, եղբայր, այդպէս է, մեզ նման հաւատարիմ ընկերներ ճրտեղ կճարուի, ո՛չ մի տեղ...

ՏԵՍԻԼ 8.

Նոյնք և Մանուկ պորտֆելով:

ՄԱՆՈՒԿ. (Բարսեղին): Պարոն Կուկուլեանցը խնդրում է, որ վերսիւների ժամանակն է, բարեհաճէք վճարել:

ԲԱՐՍ. Ինքը շնուտ կըգայ:

ՄԱՆ. Այո՛... (գլուխը ծռած նայում է. Բարսեղը զանգահարում է, Վարդանը բերում է օղի):

ՄԱՆ. (խկոյն խմում է): Հիմա գնալու եմ դատարան, պարոն Կուկուլեանցի գործն է. շատ մութը գործեր են, առանց օղի խմելու ամաչում եմ խօսել: Բայց որ չեմ խմում (խմում է) հէնց մէկը ներսից ասում է, խօսա՛, լաւ ես խօսում, ոչինչ, սուտ խօսելը ամօթ չէ, էլի խօսա: (Նայում է իր ժամացույցին) օյ, օյ, օյ, ուշանում եմ (գնում է, շէմքից յետ գալիս շիշով խմում): Պարոն Կուկուլեանցը սրա համար ինձ շատ է սիրում, որ մաքրասեր եմ. առօրինակներդէհէն (գնում է):

ԿԱՐ. Ես գնում եմ ընկոյզի հետեից (գնում է):

ՏԵՍԻԼ 9.

Սամուէլ, Բարսեղ և Նահապետ:

ՆԱՅ. (Սամուէլին): Ի՞նչպէս էք, լաւ էք:

ՍԱՄ. (վրդովուած): Այնպէս եմ զգուել այդ «Ի՞նչպէս էք, լաւ էք»-ից, որ (զսպում է): Ո՛չ, լաւ չեմ (զարկելով իր կրծքին) այստեղս ցաւում է, կարո՞ղ ես բժշկել:

ԲԱՐՍ. (Տանելով Նահապետին մի կողմը): Շառլատան աղայ է, մի՛ նեղանալ: Ծիրանը ծախեցի՛ր, փողը տուր (Նահա-

պետին փողը տալիս է): Այս 20 ռուբլին ընծայում եմ քեզ, միայն (փող է տալիս) ընկերոջս կասես, որ, 100 ռուբլի զիջում արի՝ ապրանքը փչացած էր: Այս բանը՝ ես կիմանամ, դու և Աստուածը (զնուած է Բարսեղը):

ՆԱՀ. (փողը դարսելով քսակը զլուխը ցած): Մեր վերջը ի՞նչ կլինի:

ՍԱՄ. Վերջը, հր... այ վերջը: (Հանում է ատրճանակը, մօտեցնում աչքին, խսկոյն զնուած զրպանը):

ՆԱՀ. (չնկատելով): Ձէ՛, փողը ամենից առաւել է: Նա այնպիսի բանալի է, որ դռնով ուղես կարող ես բանալ ու մտնել:

ՍԱՄ. (ինքը իրեն): 14 տարեկանից այդ բանալիով էլ դուռ չի մնացել, որ չբանամ, մտնեմ: Ժուլֆիքս, բալէտ, ըէն-դէուայ, վէշեր, վերջն էլ դժողը, դժողը (զլիկցը սեղմում է):

ՆԱՀ. Պարոն Կուլկուլեանցը միշտ կասէ. «փողը նրա համար է, որ մարդս իր բոլոր սրտի ցանկութիւնները կատարի ու մեռնի»:

ՍԱՄ. (կարծես մէկը խայթեց, նստած տեղից թռչում է, բռնում նրա թևից շնչասպառ): Նորից ասա՛, հասկացա՞ր ասածդ...

ՆԱՀ. (Սամուէլի ձեռքից ազատուելով): Վա՛հ, թամամ խաթաբալա է սրա հետ խօսելը էլի՛ (զնուած է):

ՍԱՄ. (քարացած, կիսածայն): Կուլկուլեանցը ասել է. փողը նրա համար է, որ սրտիդ ցանկութիւններ կատարես ու մեռնես (ուշքը հաւաքելով): Այս մարդը հասկացա՞ւ արդեօք, որ իմ մահուան վճիռը երեսիս կարգաց (մեքենայաբար): Այո՛, որդիս, ցանկութիւններս բոլորը կատարել եմ...

ՏԵՍԻԼ 10.

Սամուէլ և Բարսեղ:

ԲԱՐՍ. Հայրիկդ շատ ուշացաւ:

ՍԱՄ. Փողը ինչո՞ւ համար է:

ԲԱՐՍ. (զարմացած) Ինչպէ՞ս...

ՍԱՄ. Այո՛, մեծ մարդ ես, հարցնում եմ, փողը ինչո՞ւ համար է:

ԲԱՐՍ. Փողը մի այնպիսի սուր է, որ, երկու բերան ունի, որտեղով խփես և ինչի խփես կկտրի:

ՍԱՄ. Ո՛չ, հասկացար... (Արագ զնում է):

ԲԱՐՍ. (զանդահարում է, գալիս է Վարդանը): Մէկ էլ որ տեսել եմ քեզ դռան տակից ականջ դնելիս, կամ սուտ խօսելիս, էդ հագիդ շորերն էլ կհանեմ ու դուրս կանեմ, գիտդէն ի՞նչ ա, սուտ խօսելը ինչ ա: (Վարդանը զլուխը շարժում է):

ՏԵՍԻԼ 11.

Նոյնք և Կարապետ:

ԲԱՐՍ. Ընկոյզ ծախողի մօտ եղա՞ր...

ԿԱՐ. Այո՛, էն անպիտանը, ծախել է, զնացել Կովկաս:

ԲԱՐՍ. (զայրացած): Ուրեմն այն անիրաւը մեզ խաբէց...

ԿԱՐ. Այո՛, խաբէց: Դու ծիրանի փողը ստացա՞ր...

ԲԱՐՍ. Այո՛, 100 ռուբլի պակաս, զիջումն է արել Նահապետը:

ԿԱՐ. (զայրացած) 100 կտոր կանեմ նորան, սուտ է:

ԲԱՐՍ. Ո՛չ, սուտ չէ... ապրանքը շատ էր փչացած:

ԿԱՐ. Ձեմ հասկանում, ինչո՞ւ է Աստուած խաբէրայ մարդկանց ստեղծել...

ԲԱՐՍ. Ո՞վ զիդա, էն՝ ինչ որ մեր հաշւով սե է, գուցէ Աստուծոյ հաշւով սպիտակ է...

ԿԱՐ. Գուցէ, ո՞վ զիդա Աստուծոյ բանը: Գնանք ճաշելու:

ԲԱՐՍ. (Վարդանին): Որ աղա Կուլկուլեանցը զայ, խսկոյն կկանչես:

ՎԱՐԴԱՆ. Լա՛ւ, աղա: (Գնում են): Երկուսն էլ պրզաւոր ստան խօսում, դռան տական ականջը տրալ, լոխ գիւղիւմը... 100 մանէթ Պարսեղ աղան ա ջրբումը տրալ. 200 մանէթ էլ Կարապետ աղան, մին-միւսն թաղուն: Աղա Կուլկուլին էլ թափշուրա արել, հանցու խաղախներիս սեկրետը լոխ իրան ասըմ, փողա տիամ խի չըմ ասիլ... Վեր խաղէին տեռնամ, տեսնամ

նրանց թաւիտ կարորմբ սոտ-սոտ խօսիմ: (Նստում է տիրոջը նմանեցնելով) Ընդոյզ ծրխողի մուտ եղի՞ր... Էն մինն էլ ասրմա, նա ծախիլա, զինացել. էն մինն էլ պլաումա (զայրացած) ուր, ուրեմին էն անիրաւը միզ խաբից: Նա ասումա, ծիրանի փողը խտացար, էն մինն էլ ասումա, հա... այո, 100 ուրլի զիշտում արի... Մի տարի էլ վէր դուլուղ անիմ, լափ խաղային կտեռնամ:

ՏԵՍԻԼ 12.

Ծածկած ցիլինդր Կուլկուլեանց, Շուշան, Աստղիկ և Վարդան:

ԿՈՒԼ. (Վարդանին): Գնա, աղաներիդ կանչի՛ր:

ՎԱՐԴ. Աչքիս երա աղա-Կուլկուլով: (Գնում է):

ԱՍՏՂ. Ա՛հ, իզուր եկանք: (Շուշանին) ասացի որ, հայրիկդ խանութում չի լինիլ: (Կուլկուլեանցին): Բարե ձեզ (բարեում է և Շուշանը):

ՇՈՒՇ. (Կուլկուլեանցին): Ձէք իմանում, հայրիկս շուտ կգայ:

ԿՈՒԼ. (սիրալիք): Ես նոյնպէս սպասում եմ, չեմ իմանում:

ԱՍՏՂ. (իր ժամացոյցին նայելով): Շուտով կկողպեն խանութները:

ԿՈՒԼ. Պարոն Բարսեղը շատ բաղդաւոր է:

ԱՍՏՂ. Զորօրինակ:

ԿՈՒԼ. Օրինակ, որ ձեզ տեսնում եմ ուրախութիւնիցս սիրտս թրթռում է... Բաս պարոն Բարսեղի սիրտը ի՞նչ կը լինի, որ այդպիսի գեղեցիկ կին ու աղջիկ ունէ: (Շուշանը ամաչում է):

ԱՍՏՂ. (իրեն չհասկացաւ. Շուշանին) Գնանք, հայրիկդ երեւի շատ կուշանայ:

ՇՈՒՇ. (զսպելով): Երբ որ ինձ մի բան է հարկաւոր, համբերութիւնս հատնում է: Իսկոյն...

ԱՍՏՂ. Դու էլ երբ մի բան ես ուզում, էն ժամին, էն բոպէին պէտք է լինի, թէ չէ ու (զսպում է):

ԿՈՒԼ. Միք նեղանալ, զնամ հեռախօսով իմանամ այս բոպէին (զնում է):

ԱՍՏՂ. Այն օրից, երբ Զաքարը մեր երեխի բեպետիտորն

է դարձել, սկսել ես ամսական մի նոր հազուստ պահանջել, անուշահոտ իւղերն էլ խո չրի պէս ես գործածում:

ՇՈՒՇ. Ո՛չ Զաքարն է մեղաւոր, մայրիկ, ո՛չ էլ ես, այլ ինձ հարկաւոր է լաւ հագնուել. մարդիկ առաջ շորերին են են նայում, յետոյ երեսին: Տեսնում ես, Զաքարը ինչ գեղեցիկ ու խելօք տղալ է, բայց որ հազուստը հին է, կարծես, ո՛չ գեղեցիկ է և ո՛չ էլ խելօք:

ԱՍՏՂ. (խորհրդաւոր): Գիտեմ ինչ ես ասում, գիտե՛մ:

ՇՈՒՇ. (վրդովուած): Գիտես-չգիտես, պէտք է այս բոպէիս զնես, որ վաղը առաւօտ, թէյի ժամանակ հագնեմ:

ԱՍՏՂ. Հայրիկդ որ չէ՛ գալիս, փողը ումնից ուղեմ:

ՇՈՒՇ. Պարոն Կուլկուլեանցից:

ԱՍՏՂ. Ամօթ է, աղջիկս, ամօթ է:

ԿՈՒԼ. (զալիս է): Մի քանի տեղ հեռախօսով խօսեցի, ո՛չ մի տեղ չկար պարոն Բարսեղը...

ՇՈՒՇ. (զայրանալով): Տէր Աստուած, խանութները փակելու են (անց ու դարձ է անում):

ԱՍՏՂ. (ամաչելով): Պարոն Կուլկուլեանց, խնդրեմ 30 ուրլի տաք, ամուսնուս կասեմ վաղը կվերադարձնի:

ԿՈՒԼ. (քսակը հանելով): Փողը ի՞նչ բան է, որ չտամ, համեցէք (տալիս է փողը):

ԱՍՏՂ. (վերցնում է) 100 ուրլի չի հարկաւոր, վերցրէք: (Տալիս է յետ կէս փողը):

ԿՈՒԼ. (չվերցնելով): Ոչի՛նչ, ոչի՛նչ, թող 100 լինի:

ՇՈՒՇ. (քաշելով Աստղիկի թէկից): Առատուր մի անիլ, զնանք, խանութները կողպեցին: (Ինքը զնում է, Աստղիկը փողի կէսը զնում է սեղանին ու զնում. Կուլկուլեանցը շէմքում ուզում է համբուրել Աստղիկին):

ԱՍՏՂ. (ոտը գետնին զարկելով): Հեռացիր, անպիտան, լի՛րբ: (Ձեռքի փողերը զարկում է Կուլկուլեանցի երեսին):

ՇՈՒՇ. (նախասենեակից) մայրիկ, շուտ եկ, խանութները կողպեցին:

ԱՍՏՂ. (հպարտ գնում է):

ԿՈՒԼ. (մի քանի վայրկեան լուռ): Ինձ ասեն լի՛րբ, անպիտան, ու փողերը երեսիս զարկէ՛ն, ո՛վ... (գոռալով) ախր ո՛վ... մի կի՛ն, որի մարդը մինչև կոկորդը պարտ է ինձ... Սպասի՛ր, աղա Կուլկուլեանցը այն պտուղներէից չէ, որ քեզ չլացացնի: (Հաւաքում է գետնից փողերը):

ՏԵՍԻԼ 13.

Կուլկուլեան, Բարսեղ և Կարապետ:

ԲԱՐՍ. Այդ ինչ փողեր էք հաւաքում, պարո՛ն Կուլկուլեանց, բարև:

ԿԱՐ. Բարև, փողի տոկոսով ապրող մարդիկ այդպէս գիտեն: Բանկից փողերը կհանեն, մի երկու օր հետք կխաղան, ինչպէս հաւերը հողի հետ, յետոյ կտանեն նորից բանկը կդնեն, չէ՞, պարոն Կուլկուլեանց:

ԿՈՒԼ. (Բարսեղին): Ձեր կիսն ու օրիորդը այստեղ էին. նրանց փող էր հարկաւոր 30 ռուբլի, տուեցի, բայց չուղեցին:

ԲԱՐՍ. Իսկ փողերն ինչո՞ւ էր գետնին թափուած:

ԿՈՒԼ. (լուրջ, Բարսեղին): Շատ կասկածելի հարցեր էք տալիս. ես ազնիւ մարդ եմ, պահանջում եմ, որ հետս նոյնպէս ազնուաբար վարուեն: (Զայրացած անց ու դարձ է անում: Նրանք զարմանում են):

ԲԱՐՍ. Ներեցէ՛ք, պարոն Կուլկուլեանց, ես չհասկանալով ասացի:

ԿԱՐ. (Կուլկուլեանին): Լա՛ւ, հաշտուեցէ՛ք, ներումն է խնդրում:

ԲԱՐՍ. Պարոն Կուլկուլեանց, խնդրում եմ մէկ վերսիլի փողը ստանաք միւսները սպասէք: (Փողը տալիս է. Կուլկուլեանցը հաշւում և դարսում է զրպանը):

ԿՈՒԼ. (լուրջ. Բարսեղին ապրիս է թուղթ): Ստացէ՛ք վերսիլը, չունէք, կսպասեմ, բայց հետս այնպէս էք խօսում, վարւում, որ կարծէք թէ ես եմ ձեզ պարտ, և ոչ դուք ինձ:

ԲԱՐՍ. Լաւ, եղբայր, ներումն եմ խնդրում, էլ ի՞նչ ես ուզում:

ԿՈՒԼ. (յանկարծ սիրալիր, Բարսեղին): Ձեզ և ձեր ընտանիքին այնպէս եմ հոգով սրտով սիրում, որ չեմ կարող չներել:

ԿԱՐ. Ահ, ընտանիք ասացիք, որդուս չիշեցի: (Տխրում է):

ԿՈՒԼ. Ձեր որդուն միայն փողը կփրկի, այդքան կարողութիւնը ունի համար է: Փող միք խնայիլ ձեր որդուց:

ԿԱՐ. Հէնց այդ եմ զարմանում, որ փողը նրանից չեմ խնայում, բայց օրէցօր մաշւում է հալւում, տան երես էլ չի տեսնում, չեմ էլ իմանում ո՞րտեղ է լինում:

ԲԱՐՍ. Եւրոպայում հարուստների որդիքը մինչև ուրիշներին չեն ծառայում աչքան, որ փողի զաղրը իմանան, իրենց հայրը նորանց կօպէկ չէ տալիս:

ԿԱՐ. Ես որդուս այն աստիճան եմ սիրում, որ ամիսը մի միլլիօն տան, դարձեալ չեմ թողնիլ ուրիշներին ծառայի:

ԿՈՒԼ. Կեցցէ՛ս, կեցցէ՛ս, խելօք մարդ ես, փողը նրա համար է, որ բոլոր սրտիդ ցանկութիւնները կատարես ու մեռնես, ոչ թէ ծառայես:

ՏԵՍԻԼ 14.

Նոյնք և Վարդան:

ՎԱՐԴ. Մին մարդ ա եկել, ասումա Կարապետ աղին, Բարսեղ աղին կանչիր խրսալու պէն ունիմ, (Կարապետ և Բարսեղ: Ցտեսութիւն և գնում են):

ԿՈՒԼ. Ձե՛ս մոռացել, Վարդան, ասածներս:

ՎԱՐԴ. Վե՛չ աղա, թագա պեն հայա սա եա. Կարապետ աղան 200 մանէթ ա ջբումն տրալ: Բարսեղ աղան էլ 100 մանէթ մին-մինան թագուն:

ԿՈՒԼ. Ապրես, այդ ինձ հարկաւոր կգայ, գլխաւորը իմացիր— Բարսեղ աղի կինը կամ աղջիկը ինչ են խօսում տանը իմ մասին, կամ նրանց մօտ ո՞վ ա գալիս, գնում:

ՎԱՐԴ. Զոխտ աչքերիս երա, աղա...

ԿՈՒԼ. (քսակը հանում է): Ստացի՛ր այս փողը, միայն լաւ աւանջ դիր դռան տակից, մի վախենար, որ դուրս գցեն, ես կրկնակի ռոճեկով կպահեմ քեզ:

ՎԱՐԴ. (համբուրում է փողը, թռչկոտալով զրպանը խրցելում): Քեզ պէս աղիս հրմար ծովին տական էլ խաբար կբերիմ: Ազա՛, էն Սիրանոյշի հմար վեր հարցնումիր է՛... նա պեղծա գայ հիմի, (ցոյց տալով սեղանի թերթը) սրանք տանի պիշիշի մաշինի երան հանցու զրի՛...

ԿՈՒԼ. (յանկարծ ցնցւում է) Վարդան, որ դայ, (շնչասպառ) դու դրսու՛մը կսպասես (լուռ). դրսու՛մը կսպասես, լսեցի՛ր, ով որ դայ, իսկոյն ինձ իմաց կտաս...

ՎԱՐԴ. Գեոգում ուստա, աղա՛:

ՏԵՍԻԼ 15.

Նոյնք և Սամուէլ, յետոյ Սիրանոյշ:

ՍՍՄ. (Վարդանին): Ո՛ւր է հայրս:

ՎԱՐԴ. Քնացալըն գիւղիւմ չրմ (Սամուէլ վրդովուած առարկաները նետում է այս ու այն կողմը):

ԿՈՒԼ. (Վարդանին մի կողմը): Դու՛րս գնա դու: (Վարդանը գնում է): Խնչպէս էք, լաւ է՞ք:

ՍՍՄ. (շատ դառն): Շատ լաւ եմ, ուրախութիւնիցս ուզում եմ երկինք համբարձուեմ:

ԿՈՒԼ. Ինչու չէ, Եղիա Մարգարէն ձեզնից ինչով էր աւել, որ համբարձաւ:

ՍՍՄ. Կարո՞ղ էք 100 ուրլի տալ:

ԿՍԻԼ. Հայրիկդ, որ այնքան փող է տալիս քեզ, նա իմ շնորհիւ է. բաս ես չեմ տալ: (Տալիս է փող և թերթ) ստորագրեցէք: (Սամուէլը ստորագրում է, փողը դնում զրպանը: Կուլկուլեանը դնելով զրպանը թերթը, մի կողմը) հիմի հոգիդ ձեռիս է:

ՍԻՐԱՆ. (զալիս է, Սամսոնը յանկարծ ցնցւում է):

ՍՍՄ. (Սիրանոյշին, գլուխը սեղմած): Փախէ՛ք ինձանից,

եւ կարող եմ ձեզ խաբել, ո՛չ, ո՛չ, ես արժանի չեմ ձեզ... (աւրագ դնում է: Վարդանը երեւում է, Կուլկուլեանցը ձեռքի նըշանով հեռացնում է Վարդանին):

ՍԻՐ. (սեղանից վերցնելով թերթ): Խնդրեմ ասէք, որ ես այս թերթերը տարայ գրելու:

ԿՈՒԼ. (կանգնում է շէմքում, սենեակի լոյսը քչացնելով): Ահա 6 տարի է, որ դուք ամուսնացած էք, չեմ կարողանում գոնէ մի ժամ ձեր պատկերը մոռանալ. այլևս անկարող եմ այս տանջանքներին դիմանալ...

ՍԻՐ. Խնդրում եմ ինձ հանգիստ թողնէք, բաւական է, վերջին անգամն եմ ասում, մոռացէ՛ք ինձ:

ԿՈՒԼ. Լինելով բարձր ամեն բանով ձեր ամուսնուց, չեմ կարող հաւատալ ձեր ասածներին: (Նայում է դուրս):

ՍԻՐ. Ինչ ուզում էք լինել, ես ամուսին ունեմ, որին սիրում եմ, թողէ՛ք ինձ հանգիստ: (Ուզում է գնալ):

ԿՈՒԼ. (խանդարում է, հպարտ): Վերջապէս դա չիմարութիւն է, չի կարող պատահի մերժէք մի այնպիսի մարդու առաջարկութիւնը, որը ամսական աւելի է ստանում փողի տոկոս, քան ձեր ամուսինը մի ամբողջ տարի, այն էլ ուրիշի խանութի փողին լպստելով:

ՍԻՐ. (եռանդուն գնում է շէմքում կանգնում): Բաւական է, զղւում եմ ձեզ տեսնելիս, թքել եմ ձեր երեսին էլ, ձեր փողի վրա էլ... իմ ամուսնուս ոտի տակի ցեխը ձեզնից մաքուր է և լաւ (գնում է):

ԿՈՒԼ. (զոռալով): Սպասի՛ր, անգղամ, կենդանի պէտք է թաղեմ քեզ և քո մարդուն... օհօ, աղա Կուլկուլեանցի երեսին թքի, ո՞վ... մի դեադի կնիկ. միտդ պէտք է խորովեմ ես, միտդ... (բաւական լուռ): Որպէսզի ասածս կատարեմ, հարկաւոր է փող... (զրպանին զարկելով) լի՛քն է... իսկ փող աշխատելու համար հարկաւոր է խելք, (դիտին զարկելով) լի՛քն է... ինձ պակասում է անտէր ու քողցած մարդիկ ունենալ... (սենեակի լոյսը քչացրած է):



ՏԵՍԻՆ 16.

Կուլկուլեան, Յոլակ և Լևոն:

ԼԵՒՈՆ. (գող է գող բանում է դուռը): Աղա՛, քաղցած ենք, մի կտոր հաց տւէք:

ԿՈՒԼ. (զարմացած): Քաղցած...

ԼԵՒՈՆ. Արի՛, Յոլակ, էլի մարդ չկայ: (Յանկարծ պատահում են Կուլկուլեանցին, ուղում են փախչել):

ԿՈՒԼ. (սիրալիր): Միք փախենալ, որդի՛ք, Քրիստոսը հէնց ձեզ պէսներին էր սիրում...

ԼԵՒՈՆ. Աղա՛, որ Քրիստոսի ասածը չէք մոռացել, ուրեմն լաւ աղա էք... ողորմութիւն արա, աղա՛ ջան, հայրենիքից փախած ենք, աէր չունենք (չոգում են):

ԿՈՒԼ. (շէմքից դուրս նայելով, սիրալիր): Կանգնեցէք, կարօտեալ որդիք, ուրեմն դուք փախած գողեր էք, Աստուած ձեզ շատ է սիրում, որ ինձ մօտ է ուղարկել...

ԼԵՒՈՆ. Մեր քաղաքում ձեզ պէս մի աղա մարդ կար, նա գողացաւ, դորա համար փախանք... մեզ չեն հաւատում, աղա՛ ջան, չեն հաւատում...

ՅՈՒ. Վերեւ Աստուած, ներքեւ դու...

ԼԵՒՈՆ. Վերեւ էլ դու, ներքեւ էլ դու, մեղք չունենք, աղա՛:

ԿՈՒԼ. Երևում է ձեր ասածներից, որ շատ մեղաւոր էք, այդ ոչինչ, որդիք, ինձ մօտ շուտով դուք հարիւր հազարների տէր կդառնաք, եթէ իմ պայմանս միայն ընդունէք. Գաբրիէլ և Միքայէլ հրեշտակները Աստուծոյ հրամանով հոգիներ կառնեն, դուք էլ համաձայն էք (վաղելով շէմքից դրսին նայում է): Դուք էլ համաձայն էք, որ իմ հրամանով հոգիներ առնէք:

ՅՈՒ և ԼԵՒՈՆ. } (Մէկը միւսի հետեւից): Ոչինչ չենք արել, աղա,

մեզ գող են ասում, այսուհետեւ միւսնոյն է, կանենք...

ԿՈՒԼ. (շտապ գրում է տալիս թերթը): Այս հասցէով գնացէք, և ինձ կսպասէք այնտեղ... (ճանապարհում է ծածուկ դռնով):

ԿՈՒԼ. Այս մարդկանց Աստուած ուղարկեց ինձ. գողէ՛ր են, աւելի լաւ, հէնց ինձ այսպիսիներն են հարկաւոր, որ աշխարհքս քանդեմ ծայն չհանեն... Դէ՛հ, տիկի՛ն Սիրանոյշ, ինձ պէս աղա մարդու երեսին թքում ես, ասում ես ամուսին ունեմ, սիրում եմ, յանկարծ, որ չունենաս անտէր ու քաղցած մնաս, այն ժամանակ էլ կհամարձակուես երեսիս թքել: Կամ դու, տիկի՛ն Աստղիկ, որ մարդուդ միայն մահը ձեռիցս կաղատի այնքան է ինձ պարտ: Այդ գիտէ՛իր արդեօք, որ հետս յանդուգն վարուեցիր: Եթէ այսպիսիների բերանը չցեխեմ էլ ո՞վ ինձ աղա Կուլկուլեանց կասէ, ոչ ոք: Ո՛չ, ես այդ թոյլ չեմ տալ, աղա եմ եղել, միշտ էլ աղա կմնամ: (Լուռ հանում է թերթը, նայում): Սա էլ 100 ռուբլի ստացաւ, միայն ազդր ստորադրեց. սա վաճառականութիւն է, տոկոս մոկոսի հաշիւ չկայ, վերեւ ինչքան գումար ուղենամ կզրեմ, (հրճուելով) Խնչ է հարկաւոր աշխարհի բարիքը վայելելու համար—խելք, սուր և փող, դորանք ես ունեմ: Դէ՛հ, աղա Կուլկուլեանց, քոնն է աշխարհը, քանդիր, կեր, խմիր, քէֆ արա, դու դանակ—աշխարհը դմակ, հա կտրի, հա կեր...

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր.

ԱՐԱՐԻԱԾ Բ.

Կարապետի տունը, հարուստ կահաւորուած, երեք մուտքով, բազմոց և այլն:

ՏԵՍԻՒՆ 1.

Մանուշակ մենակ.

ՄԱՆՈՒՇ. (աւելում է սենեակը): Աղաւախն ասացին.— «Թռչունների մէջ ո՞րն է գեղեցիկը», ասաց. «իմ հուսար»): Էնպէս են երես տուել իրենց տղին, որ էլ չեն կարողանում կապը պահեն. ձեր հախնա, հինգ տարի է ծառայում եմ, մի ռուբլի էլա ռոճիկս չեն աւելացնում. բայց իրենց որդուն հարիւրներով են տալիս, նա էլ մինչև մի բաժակ թէյ խմելը, ծախսում է, մէկ էլ նորից ուզում: Գիշերուայ կիսին մէկ էլ կտեսնես, պարագնի զանգը թր՛ռռ... թր՛ռռ... դուռը կբացեն, կարծես, օձը կծելա, պալտօն կհանի կծղի պոլին ու այնպէս դռները կթրխկացնի ու ծայներ կհանի, կասես մի պոլի սալդաթա տուն մտել: Րէվոլվերը էնա զրպանումը էսօր էզուց մի խաթա է անելու: Մինչև մատաղ չգոհեն, նա չի խելօքանալ մէկ ա (դնում է):

ՏԵՍԻՒՆ 2.

Կարապետ և Ռուբէնեանց:

ՌՈՒԲ. Մի ուսանող փող չունէ...

ԿԱՐ. (ընդհատելով): Եթէ փող չունէ ինչո՞ւ է սովորում: Ես էլ եմ ուզում գործարան բանալ, դէհ, ինձ համար էլ փող ճարէ:

ՌՈՒԲ. Ձեմ հասկանում, ինչո՞ւ էք նեղացած խօսում հետս:

ԿԱՐ. Ներիր, խելք՛չի մնացել գլխումս, որդիս մեր օրը սևացրել է, ի՞նչ անեմ, եղբայր, ի՞նչ: Մայրն ամեն օր երազներ է տեսնում... Շատ ենք վախենում: Կուլկուլեանցն ասում է փող մի խնայել, կուղղուի. բայց աւելի է փչանում, փողը չի օգնում: Հոգուս չափ սիրում եմ, ի՞նչ անեմ, միակ զաւակս է...

ՏԵՍԻՒՆ 3.

Նոյնը, Սամուէլ և յետոյ Մազթաղ:

ՍԱՄ. (կանգնած լսելիս է լինում հօր վերջին խօսքերը): Խօսքդ իմ մասին է, չէ՞, հայրի՛կ:

ԿԱՐ. Ձէ, որդի, չէ:

ՍԱՄ. Այո, հայրի՛կ, Կուլկուլեանցը լաւ խորհուրդ է տուել, ինձ շատ փող տուր կուղղւեմ, միայն հողի տակին (հառաչում է):

ՄԱԳԹ. (զալիս է): Ըհ... որդիս այստե՞ղ է, քո ողորմութիւնդ շատ լինի Սասունձ... առաջուայ ժամանակներում եկեղեցում ասեղ գցելու տեղ չէր լինում, հիմա մարդիկ վատացել են, եկեղեցին թողած, ժողով մողով են դնում (Սամուէլին): Ո՞րտեղ էիր, բալի՛կս:

ՍԱՄ. (իներ իրեն) Ա՛հ, երբեմն այստեղ (կրծքին դարկելով) մի ինչ որ կայ, խանդարում է և չի թողնում օդ շնչեմ, հէնց այն բոպէին ուզում եմ... (զսպում է, ուզում է ատրճանակը հանել):

ՄԱԳ. (Սամուէլի ճակատիցը համբուրում է): Ես գիտէի, որ իմ սիրուն բալին փող է հարկաւոր... (փող է տալիս): Վերցրու փողը, այսօր դա քեզ բաւական է (լացալով): Միայն բանի կենդանի եմ... (աչքերը թաշկինակով սրբում է):

ՍԱՄ. (օգնում փողը դողացնելով): Դարձեալ փող... (գոռայով) տա՛ր... նորից տա՛ր... ուզում ես անպատճառ մինչև դժոխքը հասցնել ինձ... (կիսածայն) ևս մի երկու քալ, ամեն բան վերջանում է, (փողը դնում է զրպանը):

ՄԱԳ. (ուրախանալով, մի կողմը): Որդուս դարդը հասկացայ (Սամուէլին): Որդիս, որ այդպէս դժոխքից վախենում ես, ինչո՞ւ չես ինձ ասում... Վա՛յ, մէկի տեղ, չորս տասը եկեղեցի կկառուցանեմ, քեզ դժողբից կաղատեմ: Ամբողջ կարողութիւնս կնուիրեմ բոլոր սրբերին, որ բարեխօս լինեն Սասունձոյ մօտ: (Դուրս գալով) մի վախենալ, որդի, մի՛ վախենալ:

ՍԱՄ. Գիտեմ, մայրի՛կ, գիտեմ, ամեն բան կանես, բայց չի օգնի:

ԿԱՐ. Որդի, ախր քո դարդը ի՞նչ է, ի՞նչ է պակասում քեզ, այն իմ վարվուռն սիրուն բալա, ինչու այդպէս շուտ թառամեցար: Թաղիր ծնողներդ, այնուհետև (զսպում է, աչքերը թաշկինակով սրբում):

ՍԱՄ. Դա դժուար է իմանալ, հայրիկ, ով ում առաջ կթաղի: Մայրիկի տուած փողը քիչ է...

ՄԱԳ. (Կարապետին շտապեցնում է, նա հանում է քսակը, նայում ու հառաչում, Մազթաղը քսակը Կարապետից խլում է մօտեցնում Սամուէլին):

ՍԱՄ. (հանում է փողը) 200 ռուբլի միայն (ու արագ զնում է):

ԿԱՐ. (կանչում է): Սամուէլ, Սամուէլ, Աստուծուն է յայտնի թէ այդ փողերը ինչ արիւն քրտինքով եմ աշխատել:

ՄԱԳԹ. (հառաչելով): Սուրբ Կարապետը ձիւնի նման սպիտակ հագած սուրբ ձեռին, եկաւ երազումս իմաց տուեց: Երեսո նորա ոտի տակը, զօրաւոր սուրբ է (խաչ հանելով երեսին) ասաւ թէ, իմ տակին մատաղ է հարկաւոր զոհել, թէ չէ որդիդ աւելի կ'լատանայ: (Ռուբէնեանցին) Հայր Աբրահամը ի՞նչ աեսակ զառը զոհեց:

ՌՈՒԲ. (հեզնօրէն): Պողաւոր:

ՄԱԳ. Հա՛, հա՛, բերանդ ապրի, մեր ազգիցն ես էլի, Աստուածաշունչը անդիր գիւնս: (Կարապետին) լսեցի՞ր, պողաւոր:

ԿԱՐ. Գառն արդէն զնել եմ:

ՄԱԳԹ. (Կարապետին և Ռուբէնեանցին): Գնանք, զնանք, տեսներք զառը պողաւոր է:

ՌՈՒԲ. Լաւ, կգամ (նրանք զնում են): Մի՞թէ մարդկութիւնը պէտք է այնքան յառաջադիմի, եթէ անցնի այնքան դար, ինչքան անցել է Հայր Աբրահամից մինչև այսօր, որ եղջիւրի և եղջիւրների նման բաների հաւատացող շատ շատերը կան ամեն ազգում... Երիտասարդի կեանքը վտանգի մէջ է, արեան հոտ է փչում արդէն, ծնողներն ուղղում են զառան արիւնով

կամ եղջիւրներով փրկեն: Բնական հետեանք է, չհասկանալով վնասել են և նոյն ձևով էլ ուղղում են օգնել (զնում է):

ՏԵՍԻՒ 4.

Մանուշակ, յետոյ Վարդան:

ՄԱՆ. Երեկոյ, առաւօտ ասում եմ մատաղ է հարկաւոր, հիմիկ նոր են խելքի եկել:

ՎԱՐԴ. (Մանուշակին զաղտնի ուղղում է համբուրել):

ՄԱՆ. (ծւում է): Ա՛հ, աչքդ դուրս զայ, հա, սիրտս ճաքեց. զառը բերի՞ր:

ՎԱՐԴ. Բիրիւամ, էս օրան դէնը խրդրինի թաւուր եմ խօսըլական:

ՄԱՆ. Թէ պղաւոր ա՛, աղա Սամուէլը կ'խելօքնայ, թէ չէ, — չէ:

ՎԱՐԴ. Լափ միծ-միծ է:

ՄԱՆ. Ի՞նչ տեսակ ես խօսում:

ՎԱՐԴ. Ինձ հրվանքմ չըս, ասըմս կոպրտս խօսում, տես հունցմ խօսում. (նստում է տիրոջը նմանեցնելով) ծիրանի փողը խտացա՞ր (եղանակը փոխելով) այո՛, ոչ. 100 ռուբլի դիշտում արի. ընկուղ պիրողի մօտ եղի՛ր, ո՛չ, այո, ծախիւա զինացել. (յանկարծ զայրանում է) անիրաւ:

ՄԱՆ. դժուելու վրայ ես, Վարդան, ինչեր ես խօսում:

ՎԱՐԴ. Տի մի խօսալ, թա խելք ունիս, շօտ պսակի հետս, թէ չէ էնքան ախ կանիս, սրտիդ եղը կհալի. մին հարուստ աղա կայ, դովլաթին կէսը ինձ ա տալու (մօտենում է, որ բռնի):

ՄԱՆ. (հեռանալով): Երբ կստանաս, հէնց էն օրը կպսակւենք:

ՎԱՐԴ. Տի եա հա՛, պենը. (զայրացած) քնա էլ օղըմ չըմ. տեսնանք հով կփշմանի:

ՏԵՍԻՒ 5.

Սամուէլ և նոյնք:

ՍԱՄ. (Վարդանին): Էն զառը ինչո՞ւ համար է:

ՎԱՐԴ. Պեղմա սուրբ Կարապետի անունի մորթենք, հանցու խելօքանաս, աղա:

ՍԱՄ. Եթէ չխելօքանամ:

ՎԱՐԴ. Մինն էլ կմորթենք, աղա:

ՍԱՄ. Եթէ էլի չխելօքանամ:

ՎԱՐԴ. Տա, վեչինչ, խաղախնի փողը բոլա, զասաբխանի պէս հարերդա կմորթենք, մչանք վեր կխելօքանաս:

ՄԱՆ. Եթէ խանուժը ինձ լսել էր, առաջուց էր մատաղ արել, չէիք զժվիլ, աղա:

ՍԱՄ. (լուռ, զայրացած նայում է գլուխը շարժում. նորանք իրանց անյարմար զգալով զնում են):

ՏԵՍԻԼ 6.

Մամուէլ և Կուկուլեանց:

ԿՈՒԼ. Բարև, ի՞նչպէս էք, հալրիկը տա՛նն է:

ՍԱՄ. (մօտենում է, պատուհանից նայում, երգում է).

«Դարդս լացէք»:

ԿՈՒԼ. (մի կողմը): Գիդեմ դարդը: (Մամուէլին) Լաւ երգեցողութեան ըոպէին գալը գառանը չի ուտիլ:

ՍԱՄ. 200 ռուբլի կարո՞ղ էք տալ:

ԿՈՒԼ. Լա՛ւ: (Տալիս է թերթ և փող). այս թերթը, այս էլ փողը, ստորագրեցէք:

ՍԱՄ. Ի՞նչ գրեմ:

ԿՈՒԼ. Դուք միայն ստորագրեցէք. (Մամուէլը ստորագրում է) դուք թերթի վերևը ստորագրեցիք. (տալիս է թերթը ցոյց տալիս). այ, այստեղ է հարկաւոր (վազելով դրսին նայում է):

ՍԱՄ. (ստորագրում, գնում է):

ԿՈՒԼ. (վերցնելով թերթը) „ГДѢ рука, тамъ и голова“ (շտապով գրում է). «ես ներքոյ ստորագրեալս, ստացայ Մեծ-լում Կուկուլեանցից 2000 ռուբլի, պարտաւոր եմ վերադարձնել պահանջած ըոպէին». այս էլ նրա ստորագրութիւնը: Երկաթը պէտք է տաք-տաք ծեծես, այսպէս... մի ըոպէում 200-ը 2000 դարձաւ, փողը խելքով կաշխատեն, խելքով, ոչ թէ բրդ-տինքով. եկել եմ 100 ռուբլու տեղ 500 ստանամ, այս էլ նոյն պէս կստանամ:

ՏԵՍԻԼ 7.

Կուկուլեանց, Կարապետ, խտոյ Մանուկ:

ԿԱՐ. Բարև. վաճառականների մէջ այո, ոչ չի մնացել:

ԿՈՒԼ. Եթէ բոլոր մարդիկ ինձ պէս, ձեզ պէս լինեն, 1000 տարէն մի անգամ էլ չէր բացւիլ դատարանների դռները, նոյն իսկ ձեր ընկերը 100 ռուբլի գողացել է ձեզանից:

ԿԱՐ. (զարմացած): Մի՞թէ: Ա՛յ, բռնանայ քեզպէս ընկերը, բռնանայ. (Կուկուլեանցի ձեռքը սեղմում է) շնորհակալ եմ, ազնիւ եղբայր, զգուշացրիր ինձ:

ՄԱՆ. (դալիս է, պորտֆէլից հանում է թերթեր). բարև ձեզ. այսօր գործս լաւ անցաւ, 3 իսպալնիտելնի լիստ հանեցի, համեցէք. (թերթը տալիս է Կուկուլեանցին):

ԿՈՒԼ. (թերթը տեղակելով): Ա՛յ, իսկական ատվակատը այսպէս պէտք է լինի, օրեկան 3—4 իսպալնիտելնի լիստ է բերում. կեցցէս, կեցցէս դու, պարոն Մանուկ. (մէջքին զարկելով):

ԿԱՐ. (Կուկուլեանցին): Վերսկը ձեզ հէ՛տ է (զանգահարում է):

ԿՈՒԼ. (ծոցից հանելով): Ա՛յո. (տալիս է թերթ):

ԿԱՐ. (տալով փող): Համեցէք որդուս պարտքը, և այդ 500 ռուբլին, որ ձեզանից ստացել է, մի օրում է ծախսել: Ի՞նչ անեմ... (Մանուշակը բերում է սուրճ):

ՄԱՆ. Սուրճն ինձ վնաս է:

ԿԱՐ. (Մանուշակին): Սուրճը յետ տա՛ր, օղի բեր:

ՄԱՆ. (Մանուշակին): Ոչ ի՞նչ, թող սուրճն էլ լինի, դու գնա օղի բեր. (Մանուշակը դնում է խմում են սուրճը):

ԿԱՐ. (Կուկուլեանցին) Հաշիւներս մաքրեցինք ուրեմն...

ԿՈՒԼ. Ձեր որդուն էլի 2000 ռուբլի տուեցի հիմա:

ԿԱՐ. (չհասկացաւ, հառաչում է): Այդպէս է, եղբայր, որդուս անունը մի տալ, արիւնս գլխիս է խփում: (Մանուշակը բերում է օղի ու սպասում. Մանուկը խմում է ու Մանուշակին սիրալիր նայում):

ԿՈՒԼ. Շատ խելօք որդի ունէք, բաղդաւոր էք դուք, միայն

ուղած ըոպէին փող միք խնայելու տեսնում էք 2000 ռուբլի, ուղեց, իսկոյն տուեցի. (բոլոր ժամանակ Մանուկը անփութ ուտում է խմում):

ԿԱՐ. (զարմացած) Ի՞նչ, 2000 ռուբլի՞...

ԿՈՒԼ. (թերթը ցոյց տալով): Եթէ չէ՞ք հաւատում, ահա, ձեր որդու ստորագրութիւնը:

ԿԱՐ. (նայում է ու ծնկներին խփում, մնում քարացած լուռ): Սո՛ւտ է, շինովի բան է, չեմ հաւատում... (զարկելով Մանուկի մէջքին): Ի՞նչ կասես...

ՄԱՆ. (խմելիս է լինում օղին, թափում է վրան. սրբելով): Արաղը զլխիս հարամ արիր:

ԿԱՐ. Ատակատ մարդ ես, ի՞նչ կասես, չեմ հաւատում:

ՄԱՆ. (անփութ): Եթէ չէք հաւատում, սուտ կլինի (աչքով է անում Մանուկին):

ԿՈՒԼ. (Մանուկին): Ձե՞ որ ստորագրութիւն կայ...

ՄԱՆ. (ոտը ոտի վրայ ձգելով): „Гдѣ рука, тамъ и голова“.

ԿԱՐ. (գոռալով): Քո հերն էլ անիծելի, քո ըուկայի գալալի հերն էլ: Որդուս որ փող տուեց, ինչո՞ւ ինձ չհարցրեց:

ՄԱՆ. (ուշք չէ դարձնում, սիրալիր հայեացք Մանուկա-կին):

ԿԱՐ. (այդ նկատում է. Մանուկին): Գնա՛, հեռացիր այստեղից. (Մանուկը գնում է. Մանուկին): Ասա՛, ինչո՞ւ չհարցրեց...

ՄԱՆ. (խմելով օղին): Ուրեմն ստորագրութիւնը силу теряет:

ԿՈՒԼ. (Մանուկին): Եթէ որդին չափահաս լինի:

ՄԱՆ. Այդ դէպքում силы не теряет:

ԿԱՐ. (գոռանով): Քո սիլի հերն էլ անիծած, քո հերն էլ կորէք իմ տանից, անիրաւներ:

ԿՈՒԼ. (Կարապետին): Ես աղա Կուկուլեանցն եմ, զիտե՛ս,

մէջքիցդ կհանեմ այդ փողերը: Գնանք, Մանուկ. (ինքը գր-նում է):

ՄԱՆ. Այս ըոպէիս. (խմում է օղին. գնում և շէմքում Մանուկին պատահում, բռնում է համբուրում. նա ծւռում է):

ԿԱՐ. (անց ու դարձ է անում. նեղացած): Անիրաւներ, 2000 կոպէկ չեմ տալ...

ՄԱՆՈՒԾ. (գալիս է): Աղա, խանութն ասաց, ես գնում եմ եկեղեցի, Վարդանի հետ ուղարկի գառը:

ԿԱՐ. Գնա կանչիր: (Գնում է, Վարդանի հետ գալիս քիչ յետոյ):

ՎԱՐԴ. Հը՞նչս հրամայում, աղա՛:

ԿԱՐ. Գառը տար եկեղեցի, գլխովը 3 անգամ շուռ տուր ու աղը տուր տէրտէրին, ասա սուրբ Կարապետի անունով է. երբ կօրհնի, կուտեցնես գառանը ու կմորթես. հերին, մորթին կտաս տէրտէրին, ոտն ու գլուխը ժամկոչին. կէսը կը խորովէք, մերոնք բոլորը այնտեղ են, նորանք կուտեն. կէսն էլ կբերես մեր տուն. ջիգեարն ու աղիքը կբաժանէք խեղճերին:

ՄԱՆ. Աղա՛, ջիգեարն էլ ասա քոջս տալ:

ԿԱՐ. Նա, ջիգեարն էլ սորա քոջը կտաս, յետոյ ինչ-որ տակին կմնայ բոլորը կբաժանես աղքատներին:

ՎԱՐԴ. Ձուխտ աչքիս երա, աղա՛:

ԿԱՐ. Դէ՛հ, գնացէ՛ք: (Գնում են):

ՏԵՍԻԼ 8.

Կարապետ, Ռուբէնեանց, յետոյ Սամուէլ:

ՌՈՒԲ. Ուղում եմ ձեզ հետ լուրջ խօսել: Ձեր որդու կեանքը վտանգի մէջ է...

ԿԱՐ. չիմա կապատուի, սուրբ Կարապետի անունով գառն ենք զոհում:

ՍԱՄ. (գալիս է վրդովուած):

ԿԱՐ. Որտե՞ղ էիր որդի:

ՍԱՄ. (լացակումած չոգում է, հօր ոտների վրայ գնում

զլուխը): Հայրիկ, հայրիկ, աղատիր... օգնիր... խեղդւում եմ, օղ չկայ, ճշ:

ԿԱՐ. (գուրգուրում է, իր աչքերը թաշկին ակով սրբում):
Ճաշին ռոտեղ էիր, որդի:

ՍԱՄ. (կանգնում է): Որ կենդանի տուն եմ վերադառ-
նում, այդ էլ բաւական է:

ԿԱՐ. Բաս, զաւակս, հայրդ չպէ՛տք է իմանայ տեղդ.

ՍԱՄ. Իմանում ես իմ որտեղ լինելը, քո փողերն են ինձ
ուղարկել: Շատ սիրելուցդ ինձ թունաւորել ես. և քո մեղքդ
նորանումն է, որ չես թաղցրել սէրդ ինձանից: Շնորհիւ քո
փողերի աշխարհի ամեն անկիւն ոտի տակ տուի, չմնաց մի
բան, որի կարօտը քաշեմ ու նրա համար ապրեմ:

ԿԱՐ. (հառաչում է): Խնչքան էլի փող ստացար Կուլկու-
լեանցից:

ՍԱՄ. (զարկելով գլխին): Ձե՛մ կարող չիշել, այստեղի ա-
նիւնները չեն բանում, հայրիկ:

ԿԱՐ. Ականջներս խլանան, չլսեմ «հայրիկ» խօսքը, լաւ է
քան էն արիւն քրտինքով վաստակած փողերը տանես (զսպում է):

ՍԱՄ. Ո՛չ արիւն եմ տեսել, ոչ քրտինք. Փողն ինձ այն-
պէս է հարկաւոր, ինչպէս միանգամից երկու ֆունտ աղ կերած
մարդուն՝ ջուրը:

ՌՈՒԲ. Պարոն, խնայեցէք ձեր հօրը, չէ՞ որ նա ձեզ սի-
րում է:

ՍԱՄ. Կապիկը իր զաւակին սիրելուց այնպէ՛ս սեղմեց
կրծքին, որ սպանեց: Նոյնն է արել հայրս ինձ:

ՏԵՍԻԼ 9.

Նոյնք և Մանուկ:

ՄԱՆ. (Կարապետին): Պարոն Կուլկուլեանցը ասել է, եթէ
այս բոպէիս ձեր որդու պարտքը չտաք, վաղը ձեր տունը սու-
ղէրնի պրիստաւ կբերեմ. (Կարապետին) իրաւունք կտա՞ք մի
քիչ կոկորդս թրչեմ, պարոն Կարապետ:

ԿԱՐ. Կարելի է: (Պահարանից Մանուկը հանում է օղի
և ուտելու բաներ, դարսում սեղանի վրայ ու հանգիստ ուտում,
խմում է):

ՍԱՄ. (յանկարծ բռնում է հօր թւից): Մի՞թէ չես վհա-
րել փողը, հայրիկ. (թուլանում է, ընկնում բազմոցին, աչքերը
հառում մի կէտի). ցոյց կտայ նորան և կիմացւի, որ իմ առած
ընծաները, ուրիշի փողով է եղել:

ՌՈՒԲ. (տանելով Կարապետին մի կողմը). վերջացրու Կուլ-
կուլեանցի հետ, թէ չէ՛, զրկւում ես որդուցդ:

ԿԱՐ. (Մանուկին): Տո՛ւր ստորագրութիւնը:

ՄԱՆ. (հանգիստ խմում է): Ի՞նչ ես ուզում, պարոն Կա-
րապետ:

ԿԱՐ. Շուտ, տո՛ւր որդուս ստորագրութիւնը:

ՄԱՆ. (շատ հանգիստ): Հա՛... լաւ չիշեցի, կեցցեմ ես. (խր-
մում է բեխերը ոլորում): Նա աղա Կուլկուլեանցի ծոցումն է...

ԿԱՐ. (զլխիցը բռնած արագ զնում է):

ՍԱՄ. (հանում է ատրճանակը): Կեանքիս վերջին թելը
աղա Կուլկուլեանցը կտրեց: (Ատրճանակը մօտեցնում է աչքին):
Յայտնեցէք ծնողներիս որ...

ՌՈՒԲ. Աստուած իմ, (թռչում է, ատրճանակը խլում.
Մանուկը քիչ զարմանում է, բայց հանգիստ ուտում, խմում
և ծխում):

ՍԱՄ. (աշխատում է ատրճանակը յետ վերցնել): Յետ
տուէք, ուրիշ ճանապարհ չկայ...

ՌՈՒԲ. Ո՛չ, կայ... (Մանուկին) Գնա պարոն Կարապետին
կանչիր:

ՄԱՆ. Գլխիս հարամ մի՛ք անիլ, թողէք հալալ ուտեմ.
(հանգիստ ուտում է):

ՌՈՒԲ. Ուրիշ ճանապարհ կայ. դուք զնացել էք միայն
մարմնոյ ցանկութիւն կատարող ճանապարհով. բայց կայ հո-
գու ցանկութեան ճանապարհ, որ դեռ չէք իմանում:

ՍԱՄ. (զարմացած): Հոգու ցանկութեան ճանապարհը ճիշդ է:

ՌՈՒԲ. Մինչև մութ տեղը լոյս չէ վառուում, ոչինչ չէ երևում... Մինչև մի բանի չքաւորների չօգնես, ինձ չես հասկանալ: Փորձիր օգնել, իսկոյն կզգաս նրա բաղդըութիւնը: Եւ յետոյ, այն ինչ որ կտեսնես, փշոտ ու տգեղ տեսքով, կծուած ու դառն հայեացքով, մինչև անգամ զարհուրելի, հաւատաւ, որ դրանք դոսից միայն այդպէս կերևան: Մօտեցիր դրանց անվախ, շօշափի՛ր, լաւ տես, իմացիր, ինչ որ դոսից զարդարուած են, նորանք վատ են և նորանք են քեզ թունաւորել...

ՍԱՄ. (ծեռքը դէպի ատրճանակը): Թագքը՛ք դորան, թագքը՛ք... Ձեր ասածները երբեմն ես այստեղ զգացել եմ, (կրծքին զարկելով): Միայն պարզ չէ եղել այդ զգացմունքը ինձ համար: Հիմա հասկանում եմ: (Կուրծքը ցոյց տալով): Այստեղ մի շատ ծանր բան միշտ ճնշում էր ինձ, այո՛, շատ էր ճնշում և նա, կարծես, հէնց հիմա հալւեց ու էլ չկայ, (սեղմում է Ռուբէնեանցի ձեռքը): Ի՞նչ կարող եմ տալ փոխարէնը ձեզ, դուք ինձ փրկեցիք:

ՌՈՒԲ. Այն երջանկութիւնը, որ հիմա ես եմ զգում սրբօտիս մէջ, նորանից աւել ոչինչ չէք կարող տալ ինձ:

ՍԱՄ. Հասկանում եմ: (Նորից սեղմում ձեռքը):

ՏԵՍԻՆ, 10.

Նոյնը, Կուկուլեան և Կարապետ:

ՍԱՄ. (զրպանից հանում է փող): Հայրի՛կ, հիմա գնում եմ այս փողով վառեմ մի լոյս, որ կարողանամ տեսնել այն, ինչ որ մինչև այսօր չեմ տեսել: (Արագ գնում է):

ԿԱՐ. (զարմանում է. Կուկուլեանցին): Ձէ՛, չեմ տալ, 2000 ռուբլի չի կարող լինի:

ՌՈՒԲ. (Կարապետին): Յիշի՛ր որդուդ զրութիւնը:

ԿՈՒԼ. (մի կողմ, գլխին խփելով): Այ իշի գլ՞ւխ, ասա 20,000 գրի էլի:

ԿԱՐ. (Կուկուլեանցին): Յոյց տուր ստորագրութիւնը...

ԿՈՒԼ. Աստուծոյ պատուիրաններից մէկը, սուտ չխօսելն է, կարծում էք խաբոււմ եմ... ահա... (Յոյց է տալիս թերթը):

ԿԱՐ. Գրի՛, որ փողը լիովին ստացար:

ԿՈՒԼ. (զրում է, թերթը յանձնում):

ԿԱՐ. (դնում է զրպանում): Հիմա որտեղ ուղղում ես գնա...

Կամ 100 ռուբլի ստացիր հաշտուենք:

ԿՈՒԼ. (մնում է քարացած, լուռ): Դուք տեսել էք խօզին, որ կոկորդը ծակում են: Երդում եմ պատուով, որ քեզ այնպէս կանեմ... մի ժամ ժամանակ եմ տալիս, լաւ մտածիր: Գնանք, Մանուկ: (Ինքը գնում է):

ՄԱՆ. Այս բոպէիս, (շշի օղին բոլորը բաժակի մէջ է ածում խմում): Ահ...

ԿԱՐ. (թերթը պատռում է, թափում յատակին. ոտքով զարկում): Այ քեզ 2000, այ քեզ 2000, այ քեզ 2000: (Այս ասելիս Մանուկը մօտենում է ձեռք տալիս):

ՄԱՆ. Շնորհակալ եմ, պարոն Կարապետ, տունդ, օջախդ լիքը լինի, որ ես էլ դամ, ուտեմ, լիանամ ու գնամ: (Գնում է):

ԿԱՐ. (հառաչելով): Փառք Աստուծոյ, աղատուեցայ: (Տալիս է փող Ռուբէնին): Ստացիր այս փողը, ոչ տեսել եմ, ոչ լսել...

ՌՈՒԲ. Ո՛չ, տեսածս չեմ կարող չտեսնել: (Ձէ վերցնում փողը):

ԿԱՐ. Բաս ի՞նչքան կուզես...

ՌՈՒԲ. Երկու հազար:

ԿԱՐ. (զոռալով): Երկու հազար ռուբլի՞, քե՛զ...

ՌՈՒԲ. Ո՛չ, փողի տիրոջը:

ԿԱՐ. (զայրացած): Գնա՛, կորի՛ր, նորա ընկերն ես, դ՞ուրս:

ՌՈՒԲ. Ես ճշմարտութեան ընկերն եմ:

ԿԱՐ. (զոռալով): Սուտ է, հեռացի՛ր իմ տանից, կորի՛ր:

ՌՈՒԲ. (ցոյց է տալիս ատրճանակը):

ԿԱՐ. (վախից մտնում է բաղմոցի յետև և փողը մեկնում):

Ես չեմ վախենում, պարտ եմ ստացիր: Տէր Աստուած, այս ինչ օրն ես գցել ինձ...

ՌՈՒԲ. (վերցնում է փողը, ցոյց տալով ատրճանակը): Շատ ցաւալի է, որ սա աւելի ուժեղ է, քան ճշմարտութիւնը, մարդիկ սրանից աւելի են վախենում, քան իրենց խղճից: Սրան վախեցնելու կամ սպանելու նպատակով չեմ ցոյց տուել, այլ սա ձեր որդունն է, նորան աղատեցի մահից:

ԿԱՐ. (մօտենում է): Ներիր ինձ, եղբայր... Դուք աղատել էք իմ և կնոջս կեանքը: (Ձեռքը սեղմում է): Շնորհակալ եմ: Ո՞ր է հիմա որդիս:

ՌՈՒԲ. Հանդիստ եղէք, նորան խիղճը իր մօտ կանչեց, նա չի կորչել:

ԿԱՐ. Այդ խիղճը, որ ասում էք, այսուհետեւ փող չի՞ ուղիղ որդիս:

ՌՈՒԲ. Մի ծաղկից ճանճը մեղր է պատրաստում, իսկ օձը՝ թոյն... Ձեր որդին փողից թոյն է պատրաստել. հիմա էլ պէտք է մեղր պատրաստի:

ԿԱՐ. Ձեր ասածներից սրտիս մէջ մի ինչ որ շարժւում է: (Հառաչում է) Է՛... աշխարհք, աշխարհք...

ՌՈՒԲ. Տանեմ այս փողն յանձնեմ Կուլիլուկեանցին, նրա սպառնալիքը ի դուր չէ, դուցէ նա ճիշտ է ասում, որ ձեր կոկորդը կարող է ծակել. նա մութ մարդ է, նորանից սպասելի է: (Գնում է):

ԿԱՐ. (մատր բերանումը մտածում է): Թէ լաւ մարդ է՛... ինչո՞ւ 2000 ռուբլին տարաւ: Կամ ճի՞շտ է, արդեօք, որ մահից աղատել է որդուս:

ՏԵՍԻՒՆ 11.

Կարապետ, Զաքար և Մանուկ:

ՄԱՆՈՒՇ. Մէկ պարօն է ուզում ձեզ տեսնել, ազա՛:

ԿԱՐ. Թո՛ղ գալ: (Մանուշակը գնում է):

ԶԱՔԱՐ. Ես պարօն Բարսեղի երեխայի բեպիտաորն եմ,

15 ռուբլի պարտ է ինձ, խնդրեմ ասէք, որ տալ:

ԿԱՐ. (չհասկացաւ): Դա լափ շինովի սուտ է: Ստորագրութիւն ունե՞ս:

ԶԱՔ. (զարմացած): Ի՞նչ ստորագրութիւն:

ԿԱՐ. (շնչասպառ): Բաւական է, որդուս հետ չխօսես. ձեզպէսներն են նրան խաբում:

ԶԱՔ. (զայրացած ձեւեր է անում):

ԿԱՐ. (մի կողմը): Այսպէսները մէկի տեղ երկու Ատրճանակ կունենան. (վախենալով նայում է):

ԶԱՔ. (զայրացած): Դուք ինձ ի դուր էք վիրաւորում: Ձեր որդուց ինձպէսները վաղուց են հրաժարուել: Նա խաւարի մէջ է, և այն խաւարի դռները ձեր փողերն են բացել նորա առաջ. զնաց նա, կորաւ: Ահա թէ բնութիւնը ինչպէս է ձեզ պատժում: Ահա ձեր սուտ զօրթ հարստութիւն զիզելու հետեանքը. դէհ, հիմա սիրտս հանդիստ է:

ԿԱՐ. Իսկ ստամոքսդ ի՞նչպէս է, նա էլ հանդիստ է՞...

ԶԱՔ. Ես ստամոքսի մասին չեմ մտածում, իսկ դուք, որ ինձպէս կարօտեալներին մերժում էք, խիղճներդ հանդիստ է լինում:

ԿԱՐ. Ես էլ խղճի մասին չեմ մտածում: (Ցոյց տալով դէպի շէմքը): Դէհ, զնա, Աստուած քեզ էլ բարի տալ, ինձ էլ:

ԶԱՔԱՐ. (ձեռքերը կրծքին նայում է): Կարապետը վախէ՝ վախ հեռանում է: Սորանց համար խիղճն ու Աստուածը այնքան են տարբերում մէկը միւսից, ինչպէս ջուրն ու կրակը:

ՏԵՍԻՒՆ 12.

Ռուբէն, Զաքար և Բարսեղ:

ԲԱՐՍ. (Զաքարին կատաղած): Գնա՛, հեռացիր, պիղծ անպիտան:

ԶԱՔ. (զայրացած ուզում է յարձակուի. Ռուբէնը Զաքարին դժուարութեամբ դուրս է տանում ու ինքը յետ դալիս):

ԲԱՐՍ. (փնտրում է թերթ): Մարդս աչքերը կորցնի լաւ է, քան խելքը:

ՌՈՒԲ. (սեղանից վերցնում է թերթ): Սա խօսքն փրկողն է:

ԲԱՐՍ. (զայրացած վերցնում է թերթը): Դու ես պատճառը, այ, կուրացել եմ, բոլորովն ուսանողը օջախս պղծել է, երկու օր է խենթի պէս փողոցները չափում եմ:

ՌՈՒԲ. Ի՞նչ է պատահել, եղբայր:

ԲԱՐՍ. (սպառնալով): Գնա՛, թէ՛ չէ...

ՌՈՒԲ. (սառնասիրտ): Կսպասեմ մինչև զայրույթդ կանցնի:

ԲԱՐՍ. (զլխիցը սեղմելով): Վա՛յ, վա՛յ, վա՛յ, մնում է վերցնել թուղը և խեղդուել... ո՛չ, ո՛չ, սորան դիմանալ չի կարելի: (Ընկնում է բազմոցի վրայ):

ՌՈՒԲ. Կապացուցեմ, որ ի դուր ես կասկածում:

ԲԱՐՍ. (բռնում է Ռուբենի ձեռքից): Աղաչում եմ, տրաքում է սիրտս, ասա՛, մի՞թէ ի դուր եմ կասկածում:

ՌՈՒԲ. Առաջ պատմիր, ի՞նչ է պատահել:

ԲԱՐՍ. Իմ հրեշտակ կինս սատանայ է դարձել. զաղտնի կերպով վերարկու է գնել այդ ուսանողի համար, այդ ապացուցեց պարոն Կուլկուլեանցը. նա սուտ չի ասիլ և ուրիշ շատ բաներ ասեց. ականջներին չեմ հաւատում, Աստուած իմ: Իսկ դձուր, դձուր ինչո՞վ կարող էք ապացուցել, որ կինս իմ դէմ արդար է. երկու օր է սիրտս սատանայ է մտել: (Ձեռքը կրծքի ամեն կողմը տանելով): Այստեղին է խփում, այնտեղին է խրփում, կամ յանկարծ այնպէս է սեղմում: (Ծռմուռաւում է) օ՛յ, օ՛յ, օ՛յ... այստեղ օդ չկայ, օդ. (ուզում է գնալ):

ՌՈՒԲ. Սպասիր, մինչև սիրտդ չմաքրես, օդի պակասութիւնը ամեն տեղ կզգաս:

ԲԱՐՍ. Զգում եմ, որ սրտիս միջին սատանայ է պարում, ու սիրտս ուզում է տրաքուի:

ՌՈՒԲ. Մի տեսակ ճանճ կայ, թեւերը չուած, փնտրում է հոտած տեղ, որ մտնի մէջը բնակի: Սատանան էլ նոյն ճանճի նման փնտրում է կեղտոտ սիրտ, որ մէջը մտնի բնակի: Կերեւա՛յ, որ սիրտդ մաքուր չէ, որ սատանան մտել է: Այդ ոչինչ.

ես մի ոչ ունեմ, որ կարող եմ սատանան հէնց այս բոպէիս հանել սրտիցդ:

ԲԱՐՍ. Աղաչում եմ, եթէ հնար կայ, շուտ հանիր այս դժողբի ծննդին, այրում է սիրտս:

ՌՈՒԲ. (կանգնում է առաջին): Այս բոպէիս, միայն լաւ լսիր և ուղիղը խոստովանելի: Սառնասիրտ ես ստոյգել, արդեօք, որ կինդ հաւատարիմ չէ բեզ. կամ դու ինքդ արդար ես կնոջդ դէմ. հիմա սատանան շնչիդ հետ դուրս կգայ, այն դէպքում, եթէ ճշմարիտն խոստովանես:

ԲԱՐՍ. (մտածելով հետզհետէ ուրախանում է): Ե՛ս... կնոջս դէմ... ո՛չ... ո՛չ, հաւատարիմ չեմ... նոյնպէս արդար չեմ, որ հիմնուեցայ միայն Կուլկուլեանցի ասածների վրայ ու չուզեցայ լսել կնոջից մի խօսք անդամ, գուցէ և նա արդար է:

ՌՈՒԲ. (ձեռքը օդի մէջ բարձրացնելով): Տեղացիւր չար հոգի, հիմա յետ դառ, դնա տունդ. Կուլկուլեանցը բեզ խաբել է. բոլոր ասած սատանան հէնց նա է, որ սիրտդ է մտնում:

ԲԱՐՍ. (զարմացած նայում է վերև, կողբերին): Գնաց, Աստուած իմ սիրտս հանգստացաւ. նորից չի՞ դալ այն չար հոգին:

ՌՈՒԲ. Կայ մի զէնք չար հոգու դէմ կուլկուլ. սիրիր բոլոր մարդկանց. եթէ այդ դժուար է կատարել, կայ ևս մի ուրիշ զէնք, ումից նեղանում ես, առաջ բեզ դատիր, յետոյ նրան: Ասածս Կուլկուլեանցին չէ վերաբերում, նա չար սատանայ է, որին պատահելով, միայն հարկաւոր է «հրաժարիմք» ասել ու հեռանալ:

ԲԱՐՍ. (շնչասպառ Ռուբենեանցի ձեռքը սեղմում է): Ծնորհակալ եմ, դուք ինչպէս մի բարի հրեշտակ, փախցրիք սրտիցս սատանային... օրհնուէք դուք: (Արագ գնում է):

ՏԵՍԻՒՆ 13.

Ռուբեն և Կուլկուլեանց:

ԿՈՒԼ. (բարեւում է): Ե՛ր պարոն Կարապետին մէկ ժամ ժամանակ տուի, տեսներ ինչ կասէ: Տեսա՞ր նա ինչպէս ինձ խաբեց. արիւնս եռ է զալիս բարկութիւնիցս. (զայրացած):

ՌՈՒԻՔ. Մէկ մարդ, որ միշտ սովոր է ուրիշին խաբել, անտանելի է լինում նորա դրութիւնը, երբ իրեն են խաբում: ԿՈՒԻԼ. (գոռալով): Դո՛ւ, քաղցած անախտան, համարձակ-ւում ես ինձպէս աղա մարդուն խաբեբայ անուանել...

ՌՈՒԻՔ. Ձեր իսկական անունը ստոր է, ստոր: Այդ («աղան»), որ ձեզ ասում են ամենքը, նա այն քողի վրայ է գրուած, որի տակ թագնւում էք, կգայ արդեօք այն օրը, որ կարողանամ դէն ձգել այդ քողը, թէ չէ:

ԿՈՒԻԼ. (դառն ծիծաղում է): Հա՛, հա՛, հա՛, վախեցնում ես ինձ, դու իմ աչքում ցցուած ես ասեղի պէս... վաղուց է, որ ուզում եմ վախիդ նստեմ, և դա անհրաժեշտ է:

ՌՈՒԻՔ. Այո՛, ես ձեր աչքում ասեղի նման ցցուած եմ, ճիշտ է. բայց ինձ այնտեղից հանելու համար, հարկաւոր կլինի առաջ ձեր աչքերը հանել: (Փողերը ձեռքին): Այս պարոն Կա-րապետն է տուել երկու հազար ռուբլին, որ ձեզ յանձնեմ. (հեզնօրէն) աղա՛ Կուկուլեանց:

ԿՈՒԻԼ. (յանկարծ ուրախանում է): Ա՛յ, հիմա կներեմ:

ՌՈՒԻՔ. (փողը զարկելով նրա երեսին): Վերցրու այս փը-շերը, աչքերդ կօխիր, որ աւելի կուրանաս:

ԿՈՒԻԼ. (ուրախ փողերը գետնից հաւաքելով): Ամեն մի քրիստոնէի պարտականութիւնն է ներել, ոչ թէ մի անգամ, այլ եօթնիցս-եօթն անգամ... ներում եմ, եղբայր, ներում եմ. ձեզ էլ եմ ներում. (փողերը հաշւում է, լուռ դարսում զրպանը): Ես աղա Կուկուլեանցն եմ, ինձ նեղացնել չի կարելի: (Ծիծա-ղում է): Խէ՛, խէ՛, խէ՛:

ՌՈՒԻՔ. (լուռ մտածում է վեռողական): Ո՛չ, չեմ կարող հաւատալ, որ ձեզ պէս չար մարդիկ պէտք է միշտ լինեն. դուք ախտ էք ժողովրդի համար, որին հարկաւոր է ոչնչացնել:

ԿՈՒԻԼ. Լա՛ւ, միք նեղանալ. (փող է տալիս) ստացէք այս փողը, բայց կաշառակերին ես չեմ սիրում:

ՌՈՒԻՔ. (վերցնում է փողը զարկում նրա երեսին ու գնում):

ԿՈՒԻԼ. (Գլուխը շարժելով հաւաքում է փողերը):

ՎԱՐԱԳՈՅՐ:

ԱՐԱՐՈՒԱԾ Գ.

Բարսեղի տունը, հիւրասենեակը միջակ կահաւորւած (ոչ հարուստ, ոչ աղ-քատ) 3 մուտքով, պատուհաններով, բազմոց և այլն:

ՏԵՍԻՆ 1.

Վարդան մենակ:

ՎԱՐԴ. (սրբում է սենեակը): Ինձ էշի պէս պընցնումըն, համ տներումը, համ կանտորումը. ասենք խաղեալներմ տըռնա-լու վերջը սիւս լաւ ա՛: Լոխ գիդումըմ հիմա: Կընտօրի գլխա-ւէր պէնը սա եա, լեզուդ կփոխիմ, սոտ ասիլիս էլ էն թաւիւր սոտ կասիմ, միթամ զորթըմ ասըմ... որ տեսնամ սոտս քիար չանըմ, եօրթըմ կոտըմ... սա իստի: Տան գլխաւէր պէնն էլ սա եա, ըռաւետը կաթնաւ չայ խմելիս, կտեսնամ տռան զանգը զնգըրին, ձեռներս կըքերքիս տիրած կհրցնիմ, էտ հովա տի վը-ռադ-վռադ զիւնդ տուողը. կտեսնամ վեր Կոկոլովնա, կնկանս զոնթիկն էլ ձեռին, հինչա, հինչ չի. կասի թա, կնիկդ քընա-ցելա ձեր ըրելի վարժապետին հըմար պալտօ առել, չաշ-միշ իլած էլ, զոնթիկը թողել մաղաղինում. քեզ նամուս չունես կասի, պէդմա կնկա շոր հաղնիս կասի. կըպլանամ, կըն-կանս ուշունց կըտամ, չամալ թողնիլ հանցու պերանը պեց անի մի պէն ասի, ըռըլսին մին, երկու կըթխիմ, կընամ էլ տոն չըմ կեալ... հը, ամեն պան գիւտումըմ, հօ խաղայինը պզաւեր չի ըլում:

ՏԵՍԻՆ 2.

Սամուէլ և Վարդան քիչ լստոյ Զաքար:

ՍԱՄ. Քանի՞ օր է, որ աղան տանը չէ...

ՎԱՐԴ. Տա իմ պէնը չի, գիւտըմ չըմ:

ՍԱՄ. Խանումը հրտեղ է...

ՎԱՐԴ. Քընացալըն...

ՍԱՄ. Ո՞րտեղ:

ՎԱՐԴ. Տա իմ պենը չի, գիւղըմ չըմ:

ՍԱՄ. (լուռ): Աղա Կուկուլեանցը ի՞նչեր է խօսել աղիդ հետ...

ՎԱՐԴ. Գիւղում չի... (զնոււմ է):

ՍԱՄ. Ինծպէսների հոգին թշւառների հառաչանքից թու- նաւորում է... բժշկելով նրանց վիրաւորւած սրտերը կբժշկւի և հոգիս. ես այդ հիմա զգում եմ. այո՛, ազնիւ Ռուբէնեանց, բո ցոյց տուած ճանապարհը բաղցը է ու անվերջ. ես դա փոր- ձեցի: Իսկ դու, դու կեանքիս վերջին թելը կտրող ու Բար- սեղի ընտանիքը բանդող աղա Կուկուլեանց, ինչե՛ր ևս արած կլինես դու կեանքիդ մէջ: Դու անգութ, չար արարած, բեզ- պէսների ճանապարհը կարծ է, կարծ շուտով կհասնէք այն մութը անդունդին ու կանհետանաք, թողնելով այս աշխարհում միայն ձեր քայլերի արիւնոտ հետքերը...

ՉԱՔԱՐ. (զալիս է առանց բարեւելու զխարկը ձեռին):

ՍԱՄ. Ի՞նչ մասնածիւղում էք սովորում:

ՉԱՔ. (կտրուկ): Բժշկական:

ՍԱՄ. Ո՞ր կուրսումն էք:

ՉԱՔ. (կտրուկ): Որ կուրսում դուք էք:

ՍԱՄ. Ընկերս, սիրելիս, ինչո՞ւ սառն էք վերաբերւում հետս:

ՉԱՔ. (զաքմացած): Ես... ընկե՛ր... ո՛չ, դուք մեր ընկերը չէք կարող լինել...

ՍԱՄ. Հասկանում եմ... ես ձեզ չեմ մօտեցել, այո՛: Իսկ դուք, մօտեցե՛լ էք արդեօք, գուցէ մենք, հարուստներս այնպէս չենք, ինչպէս ձեզ է թւում հեռուից...

ՉԱՔ. Ի՞նչ էք ուզում ասել...

ՍԱՄ. (գժուարանալով): Ներեցէք... դուք փողի կարիք չէք զգում:

ՉԱՔ. Եթէ ձեր ասածները անկեղծ են, զնայէք այս հաս- ցեով. (տալիս է թուղթ): Մեր ընկերներից մէկը դիֆտիրիտով հիւանդ է, օգնեցէք:

ՍԱՄ. (վերցնում է թերթը նայում): Ես երկու ժամ ա- ռաջ այնտեղ էի...

ՉԱՔ. (զլխարկը մի կողմը նետելով, զարմացած): Դուք... Այն դուք էք եղել բժիշկ հրաւիրողը և մի ամբողջ ժամ խօ- սել էք հիւանդի հետ... չէ՞ որ կարող էիք վարակուել. (սեղմում է Սամուէլի ձեռքը) հաւատում եմ, հիմա էլ պէտք է ինձ ա- զատէք, ընկերս: Բարսեղի կինը ինձ համար վերաբերու է գնել, զրանից մի այնպիսի ծայրայեղ դրութիւն է ստեղծուել իմ և Բարսեղի կնոջ ու աղջկայ համար, որ մահով պէտք է վերջանայ, եթէ այս փորձը չի յաջողուի: Միայն յանձն առէք, որ վերաբ- րուեն դուք էք գնել:

ՍԱՄ. Մեծաւ ուրախութեամբ, ընկերս. և յայտնի՞ է ձեզ արդեօք, որ այս բոլորը Կուկուլեանցի արածն է:

ՉԱՔ. Մի՞թէ այն դարշելին է արել:

ՍԱՄ. Այո՛, նա է արել. բոպէն թանկ է, ես զնամ Բար- սեղը մեզ մօտ է, խելօք սուտը ներելի է... (Փող է տալիս Չա- քարին ու գնում):

ՉԱՔ. (նայելով փողին, մեքենայաբար): Փող տուեց... Մի՞թէ սա Սամուէլ Պարոնեանցն է: (Լուռ, յանկարծ զայրանում է): Աղա Կուկուլեանց, ո՞րն է մեղաւոր, լեզուդ, թէ գլուխդ... Ո՞րը պէտք է առաջ կտրեմ: (Արագ գնում է):

ՏԵՍԻՒ, 3.

Վարդան, քիչ լետոյ Մանուկ և Աստղիկ:

ՎԱՐԴԱՆ. (նայում է Չաքարի հետեւից): Պալտօն առալըն, էլի ձեռը չի քաշում. լիհա փետր երունես էնքան տաս, վեր օռչի, ռումբի տեռնա: Սերտը դուզ չի խրնումին հետ, աղան ալ գլուխս եր կալալ, տանան փախալ: Ամմա հոգի օնիմ աալու, էն ղնումն էլ հրցնելու են, էս պէները լոխ աղա Կօլկօլովի սար- քածնա, ինձ էլ իրեք մանէթա տուել, հանցու պերանս պեց չա- նիմ ըստի-ինտի...

ՄԱՆ. (զաղտնի ասում է): Աղա Կուկուլեանցը բեզ կան- չել է իր մօտ, բան է ասելու:

ՎԱՐԴ. (Մի կողմ): Մին թաս արադ տաս, լոխ կմոռանայ. (Մանուկին) հրնչս օգրմ:

ՄԱՆ. Հէր օրհնուած, հիւր եմ եկել, առաջ մի քիչ բան բեր ուտել-խմելու, յետոյ հարցրու:

ՎԱՐԴ. Աղա Կօլկօլովը հինչա օգրմ ինծանայ:

ՄԱՆ. Եթէ խանութիդ դայ, տեսնի հիւրի համար ուտելու ոչինչ չես բերել. նա իրաւունք ունէ քեզ վռնդէ և ոսճիկդ էլ չտայ: Ինչպէս ատուակատ զգուշացնում եմ քեզ, զնա՛, շուտ բեր:

ՎԱՐԴ. Լաւ ատուակատրս, սուգերումն էլ ես տի խօսում:

ՄԱՆ. (զայրացած): Յիմար, դու բերդից չես վախենում:

ՎԱՐԴ. Խի պիտի վախենամ, բազամ աշխարհի իրաւունքը քու ձեռինն:

ՄԱՆ. (լուռ մտածում է, յանկարծ սիրալիր): Դէ՛, զնա բեր Վարդան, դու լաւ տղայ ես, ես կատակ եմ անում:

ՎԱՐԴ. Ջրհեղեղի օրն էլ, դու օտիլ խմելի հմար կմտածես, դու տի մարդրս:

ՄԱՆ. (նեղացած անցուդարձ է անում): Յիմար, աւանակէ՛:

ԱՍՏՂ. (զայլիս է, լսում Մանուկին): Ի՞նչ է պատահել:

ՄԱՆ. (շփոթւում է): Ոչինչ... ես... վերջապէս... (ուշքը ժողովելով, սիրալիր) խնդրեմ հրամայէք մի քիչ բան բերէ ուտելու և... (զսպում է):

ՎԱՐԴ. Խանրմ դրան ուղարկելա, հանցու խաբարներ իմանայ, օգրմս աղա Կօլկօլովին էնքան թակիմ, հանցու օռչի ումբի տեռնա:

ԱՍՏՂ. (լուռ մտածում է ու հառաչելով): Գնա մի քիչ բան բեր ուտելու: (Վարդանը գնում է, Մանուկը թռչկոտում է): Ասացէք խնդրեմ, Կուկուլեանցը մարդ է, թէ սատանայ:

ՄԱՆ. Թէև մարդ է, բայց սատանայից վատ է և չար:

ԱՍՏՂ. Եւ դուք այգպիսի մարդկանց գործերը դատարաններում պաշտպանում էք:

ՄԱՆ. (անփոյթ): Ինձ համար մէկ է, ով ինչ ուղղում է անէ, իմ ցաւս այն է, որ Վարդանը ուշ է բերում ուտելու

բանը: (Վարդանը ափսէով բերում է ուտելու բան և օղի, Մանուկը խսկոյն խմում է): Աղա Կուկուլեանցի ասելով, դուք, սորա-նորա համար վերարկու էք դնում, իբր ձեզ լաւ չէք պահում, շատ բաներ է ասել ձեր ամուսնուն, նա էլ բոլորը հաւատում է:

ՎԱՐԴ. (լուռ նայում է Մանուկին, ու թքում գնում):

ԱՍՏՂ. Ինչո՞ւ ամուսնուս չէք հասկացնում, որ Կուկուլեանցը անազնիւ մարդ է:

ՄԱՆ. (խմելով): Գիժ եմ, որ հանգիստ գլուխս գցեմ զայմաղալի մէջ (խմում է ու ծխում):

ԱՍՏՂ. (ինքն իրան): Դուք մարդիկ, որ ամեն մի քայլում մոռանում էք կին, երեսայ, նորից խօսք տալիս, նորից մոռանում, և այդպէս մինչև ծերանալը շարունակում. ահազին զերանք ձեր աչքի միջին չէք տեսնում, չէք էլ փորձում նայելու... Իսկ մեր աչքի փոքրիկ ձեզը խսկոյն նկատում էք, այո՛, որպէսզի անիրաւութիւնը պաշտպանել, հարկաւոր է ոյժ, և այդ ոյժը, մարդիկ, ձեր կողմն է, օգտուեցէ՛ք, կզայ ժամանակ, զուցէ և նա հեռու չէ, երբ այդ ոյժը ամօթ ու անխիղճ կհամարուի. անազնիւ Կուկուլեանցը դժուարեղ է ամուսնուս, փողոցները գցել, երկու օր է տուն չէ գալիս... ո՞վ է մեղաւոր, կասեն կինը, ի՞նչ անեմ, վերցնեմ թուր ու... (զսպում է. աչքերը թաշկինակով սրբում):

ՏԵՍԻՆԱ 4.

Նոյնը, Շուշան, լստոյ Զաքար:

ՇՈՒՇ. Մայրիկ այդ ի՞նչ է, լաց ես լինում...

ԱՍՏՂ. Թոյլերի միակ ոյժը լացն է, լացը...

ՇՈՒՇ. (լացակումած): Մայրիկ, դու սիրում ես Զաքարին, նա իմն է, իմը... (չոգում է, գլուխը թաղում մօր ոտներում. Մանուկը շիշը ամբողջը դատարկում է, խմում, ձեռքը նորանց վրայ թափ տալով գնում):

ԱՍՏՂ. (զուրգուրելով): Սիրելի զաւակս, սո՛ւտ է, սո՛ւտ... Ինչո՞ւ ինձ չես հաւատում, հայրիկիդ ես հաւատում...

ՇՈՒՇ. Պարոն Կուկուլեանցն էլ է հաստատում, որ վերարկու ես գնել Զաքարի համար:

ԱՍՏՂ. Այո, չեմ թագցնում, գնել եմ... Եթէ խեղճին օգնելը յանցանք է, խօսք չունեմ, մեղաւոր եմ, բայց էլ ուրիշ մեղք չունեմ, հաւատա, զաւակս...

ԶԱՔ. (զայլիս է): Ես ձեզ չեմ խանդարում...

ԱՍՏՂ. Երկու օր է, երեսայի հետ չէք պարապում, ի՞նչ է պատահել:

ԶԱՔ. Տկար էի, գնացինք Սամուէլի հետ վերարկու գնելու, մրսեցայ...

ՇՈՒՇ. (շնչասպառ): Յեառոյ, գնեցի՞ր:

ԶԱՔ. Այո:

ԱՍՏՂ. (բարձր): Ո՛չ, ո՛չ, սուտ է, ես եմ գնել:

ՇՈՒՇ. (զայրացած): Դուք սիրում էք մէկ-մէկու, դու իմ մայրը չես, այլ ստախօս մի կին: Իսկ դուք, թշառ պարոն, անիծէք, որ մեր ընտանիքը պղծեցիք. (լալով գնում է):

ԶԱՔ. (չոգում է կանչում): Շուշան, լսիր, յետ դառ (մընում է բարացած):

ԱՍՏՂ. Ինչո՞ւ սուտ խօսեցիր, այ տղայ:

ԶԱՔ. Ուզում էի վերարկուի հարցը հողի տակով անել:

ԱՍՏՂ. (զայրացած): Գորշէլի Կուկուլեանցին է հարկաւոր հողի տակով անել, Կուկուլեանցին... (զնում է):

ԶԱՔ. Ճիշտ է, Կուկուլեանցին է հարկաւոր հողի տակով անել:

ՏԵՍԻՒ 5.

Ռուբէնեանց և Զաքար:

ՌՈՒԲ. Լաւ է, որ պատահեցի. ասած խնդրեմ. քեզ բերեցի այս ընտանիքը, ինչպէս մի ազնիւ երիտասարդի, խօ չեմ սխալուել...

ԶԱՔ. Ձեր պատասխանը յետոյ կտամ, Շուշանս անիծեց ինձ. հիմա պէտք է Կուկուլեանցին գնամ հողի տակով անեմ. (արագ գնում է):

ՌՈՒԲ. Կարեւոր խօսք ունեմ ասելու, յետ դառ. (Զաքարը շէմքում կանգնում է): Ստամբուլի դրուժիւնը ի՞նչպէս է:

ԶԱՔ. (սպառնալով): Դուք ինձ տանջում էք, տանջում:

ՌՈՒԲ. չիմա կուրախացնեմ, միայն մի պայմանով, որ չըխանդարես խօսելու. Կուկուլեանցին որ սպանես, շատերը կը խղճան նրան, բայց նա դորան արժանի չէ, նորա գերեզմանի վրայ պէտք է 10 մղոնի բարձրութեամբ անէժք կանգնի արծանի փոխարէն:

ԶԱՔ. Ո՛չ, նորա վերջը իմ ձեռքով պէտք է լինի, միայն շուտ ասացէք:

ՌՈՒԲ. Դէ, լսիր. իզուր ես այդպէս վրդովւում. աւարտելուց յետոյ բացի այսպիսի դէպքեր պատմելուց էլ ինչ պէտք է անես, է՛հ... մի քանի գիտնականների մասին կխօսես, լրագիրը բոլորի առաջ կպատուես երբ մի յօդուած, կամ հեռագիր քէֆով չի լինիլ. այսպիսի նեղ օրերը երազի պէս կլիշես: (Զաքարը անհամբեր ձևեր է անում) կմոռանաս, որ քեզպէս կարօտեալները էլի կան, հարկաւոր է օգնել:

ԶԱՔ. Քարոզ լսելու ժամանակ չէ (ուզում է գնալ, բեմի յետեւից լսում է ձայնի ձայներ):

ՌՈՒԲ. Այս ի՞նչ ձայներ է (զնում է, Զաքարը սպասում է):

ՏԵՍԻՒ 6.

Մէկ թւից բռնած Ռուբէնը, միւսից աստղիկը բերում են Շուշանին քիչ յետոյ Բարսեղ:

ԶԱՔ. (չոգում է): Շուշան, աղաւնեակս, իմ Շուշան...

ՇՈՒՇ. (տալիս է արկղիկ Զաքարին): Վերցրու, երգումդ կատարիր:

ԶԱՔ. (վերցնում է արկղիկը բացում): Աստուած ի՛մ, սա թոյն է, շատ ես շտապել... Շուշանիկս, շուտ է... շուտ... (ուզում է թոյնը ընդունի):

ՌՈՒԲ. (խլում է Զաքարից, Շուշան նշան է անում, որ արկղիկը յետ տալ Զաքարին):

ՉԱՔ. (աշխատելով յետ խել թոյնը): Տւեցէք, երդուել ենք միասին մեռնենք:

ԱՍՏՂ. (Ռուբէնեանցին): Այդ թոյնից ինձ բաժին չի հասնի:

ՌՈՒԲ. Պարոն Բարսեղը բոլորիդ էլ սիրում է և նա այս րոպէ-
իս կգայ: (Նորանք երեքն էլ միասին ասում են) սիրում է՝... կգայ՝...

ՌՈՒԲ. Ահա և նա: (Գալիս է Բարսեղը):

ԲԱՐՍ. (Աստղիկին): Աստղիկս, երկու օր հեռանալուց յե-
տոյ եմ զգում, որ առանց քեզ չեմ կարող ապրել, մանաւանդ,
որ արդարը միայն իրաւունք ունէ արդարութիւն պահանջել,
բայց ես, (զսպում է) ահ... բացատրիր, Աստղիկս, հովացրու սիր-
տըս, հաւատում եմ քեզ: (Շուշանին) ների՛ր և դու զաւակս,
ես յանկարծ ցնորուեցայ, երբ Կուլիկուլեանցը հաղորդեց մօրդ
արարքը, և չուզեցայ լսել մի խօսք անգամ մօրդ բերանիցը,
հիմա կլսեմ, մայրդ ազնիւ է, սուտ չի խօսիլ:

ՇՈՒՇ. (փաթաթւում է մօր և հօր հետ): Մայրի՛կ, մա-
րի՛կ, ներիր ինձ, ներիր:

ԲԱՐՍ. (Զաքարին): Ներիր և դու երիտասարդ (Շուշանը
իրեն վատ է զգում, ընկնում է բաղմոցի վրայ):

ԲԱՐՍ. (վախեցած): Ի՞նչ պատահեց:

ԱՍՏՂ. (Բարսեղին): Միտելի ամուսինս, այս երկու սրտերը
միացել են. (ցոյց տալով Զաքարին և Շուշանին): Օրհնենք սրանց,
այս րոպէն հաշտութեան ու միութեան ըոպէ է: (Զաքարին):
Չլինես կասկածոտ ինչպէս իմ ամուսինը, նրան հարկաւոր է մի
քամի, որ ականջին փչի, այնուհետև պատրաստ է ինձ իրեն
հետ միասին գցի կրակի մէջ այրի: (Բարսեղին): Հաւատայ ինձ,
ամուսինս, Կուլիկուլեանցը քեզ խաբում է, նա անազնիւ է. վա-
խենում եմ այս խօսակցութիւնը ինձ հեռու տանէ. թողնենք,
կասեմ քեզ նրա պղծութիւնը: Հիմա, մենք ծնողներս, սրանց
սրտերը ցանկանանք այնպէս ամուր կապուի, որ Կուլիկուլեանցի
պէս կեղտոտ մարդիկ չկարողանան քանդեն:

ԲԱՐՍ. ձիշտ է, Աստղիկս, ինչ որ (կրճբին զարկելով)
այստեղ հաւաքուած էր, դու բոլորը ասացիր (փաթաթւում է)
և այս բոլորիս ուրախացնողը այս մարդն է (Ռուբէնեանցի
ծեռքը սեղմելով). մատաղ լինեմ քո ծնուած օրին ես: (Ռուբէ-
նեանցը Զաքարին ու Շուշանին մօտեցնում է ու նշան անում,
որ օրհնեն ծնողները):

ԲԱՐՍ. (օրհնելու ձևով): Եթէ մինչև իմ մահը օրհնեմ,
նոյն է թէ ասեմ, սիրեցէք միմիանց:

ԱՍՏՂ. Կաւելացնեմ դորա հետ և հաւատացէք միմեանց:
(Շուշանը իրեն նորից վատ է զգում. մի թևից Զաքարը, միւ-
սից Աստղիկը տանում են Շուշանին. գնում է և Ռուբէնեանցը):

ԲԱՐՍ. (մենակ): Աստուած, դու Ռուբէնեանցի օշախը
օրհնես, օրս սեւացել էր, չուրը պէտք է ընկնէի. Գո ողորմու-
թիւնդ շատ լինի, Աստուած, դու քո ստեղծածին չես կորցնում:

ՏԵՍԻՆ 7.

Բարսեղ և Կուլիկուլեանց:

ԿՈՒԼ. Պա՛հ... քեզ որ տեսնում եմ, կարծում եմ փող գտայ...

ԲԱՐՍ. Մարդկերանց սիրելը փողից լաւ է, եղբայր Կուլ-
կուլեանց:

ԿՈՒԼ. Իհարկէ, օգուտը մարդկերանցից է, թէ չէ՝ բարից,
չրից, հողից ի՞նչ օգուտ: Լսի՛ր, Վարդանը ասում է իբր կինդ,
երբեմն, գնում է մի ինչ որ տեղ և բաւականին ուշ տուն
վերադառնում: Այո՛, քո սեփական կինդ, որ ամբողջ բաղաբը
պէտք է վերադ ծիծաղի, և էլի զարմանում եմ, որ տուն ես
վերադարձել, չէ որ կինդ նամուսդ ոտի տակ տւեց: Դու պէտք
է կնոջ շորեր հագնես, արժանի չես դու տղամարդի շորեր
հագնելու:

ԲԱՐՍ. Ռուբէնեանցը ճիշտ ասաց, որ դու սատանայ ես,
նորից ես ուղում սիրտս մտնես, ո՛չ, ո՛չ, ես հաշտուել եմ, Շու-
շանիկիս էլ նշնել այն ուսանողի հետ. սիրտս հանգիստ է, թող
ինձ...

ԿՈՒԼ. Քեզ շատ սիրելուցս, նորից եմ ասում, եթէ այս անգամ էլ չլսես, ոտս տանդ չես տեսնիր: Ապացուցեցի, որ կինդ քեզ խաբում է. նոյնպէս կապացուցեմ, որ ընկերդ 200 ռուբլի քեզնից գողացել է, դու կոյր ես ոչինչ չես տեսնում և էլ այդ ուսանողը կաշառել է Ռուբէնեանցին, որ նա քեզ խաբի և կերևի ասածներիցդ, որ արդէն խաբուել ես, ուսանողը վարակիչ հիւ-
ւանդ է, խելքի եկ. նամուս ունեցող մարդը դուրս կանի բո-
լորին, կամ ինքը կհեռանայ, ներիր ինձ, քեզ նամուս չունես:

ԲԱՐՍ. (Իրեն կորցնելով բռնում է Կուլկուլեանցի կոկորդից): Այ չար գազան, վարակիչ շուն, ուզում ես գերեզման տանել մեզ բոլորիս: (Կուլկուլեանցը հազիւ ազատուում նրա ճանկե-
րից): Ներիր ինձ, խելքս կորցնելու վրայ եմ, շնորհակալ եմ, նորից դու ինձ խելքի բերիր, ընկերս էլ է ինձ խաբում, ճիշտ է. (գոռալով) սէրը սուտ բան է, սո՛ւտ, սո՛ւտ, անիրաւ-
նե՛ր, դժուրս, դժուրս, (զնում է):

ԿՈՒԼ. (ձեռքը բսելով կոկորդին): Վահ, բիչ էր մնում, որ անիրաւը խեղդէր ինձ: Քո հէրն էլ անիծուի, քո փէսին էլ, բոլորին էլ: Ես ի՞նչ անեմ: (Լուռ մատը բերանումը մտծում է, հրճուելով) օհ, ինչքան դուրեկան բան է, բաժանուած ընտա-
նիքում ժամանակ անցկացնելը, դրախտա էլի, դրախտ... Այս անգամ լաւ սարքեցի, կեցցեմ ես: (Յանկարծ դայրանում է) բայց այս քաղցած Ռուբէնեանցը սարքածս անդադար բանդում է. ո՛չ, սա քանի կենդանի է ազատ չեմ կարող շնչել: (Վճռական) ո՛չ և ո՛չ. սորան հարկաւոր է շուտ հողի տակով անել:

ՏԵՍԻԼ 8.

Կուլկուլեանց և Սամուէլ:

ՍՍՄ. Պարոն Բարսեղը չեկա՞ւ տուն:

ԿՈՒԼ. Եկաւ էլ, զնաց էլ... ձեզ որ տեսնում եմ, ախոր-
ժակս բացւում է:

ՍՍՄ. Իսկ ի՞նչ սիրտս է բացւում, երբ ազնիւ Ռուբէնեանցին եմ տեսնում: Օ՛հ, եթէ աշխարհս իմը լինէր, ամբողջը կընծայէի նորան. Կարող էր 200 ռուբլի տալ:

ԿՈՒԼ. Քե՞զ... փո՞ղ... ոչ տեսանես Եզիպտոս, կոպէկ չեմ տալ. Ռուբէնեանցը քեզ խաբում է, իսկ դու նրան սիրում ես, փողն էլ ինձանից ուզում, զարմանալի է: (Սամուէլը ուզում է զնալ Կուլկուլեանցը ծիծաղում է) հա՛, հա՛, հա՛, քեզ էլ որ փող չը տամ, բաս էլ ինչու համար եմ ապրում. համեցէք: (Տալիս է փող):

ՍՍՄ. (վերցնում է փող և երկու թերթ): Այս երկու խապալնիտէլնի լիստը ծախեցէք ինձ:

ԿՈՒԼ. Այ, դու դոն-ժուան, գիտեմ միաքեզ, գիտեմ, (ցոյց տալով մի թերթը): Սորա տիրոջ աղջկայ թշերիցն ես գժուել: (Ցոյց տալով միւսը) և սրա տիրոջ կնոջ կազմուածքիցը. հէ՛, հէ՛, հէ՛... լաւ: Ես գրեմ սորանց վրայ, որ փողերը լիովին ստացայ: (Գրում է, յանձնում. Սամուէլը զնում է գրպանը) դու էլ 10 վէբսիլի վրայ ստորագրի, քեզ համար միւլենոյն է, գիտեմ:

ՍՍՄ. Ո՞րտեղ են վէբսիլները:

ԿՈՒԼ. Այս բոպէիս: (Գլուխը ցած վէբսիլները քսակից ջո-
կում է մի կողմը դնում): Այս մէկ, այս երկու, այս երեք, այս չորս (շտապով նայում է շէմքից դրսին), այս հինգ:

ՍՍՄ. Ես շուտ կգամ. (Գնում է, Կուլկուլեանցը չէ նկա-
տում):

ԿՈՒԼ. (շարունակում է) այս վեց, մի փոքր էլ համբերի, այս բոպէիս: Այս եօթը, ութը, այս էլ իննը, մէկը մնաց, այս էլ տասը: (Հաւաքելով ձեռքի մէջ ձեռքը մեկնած) համեցէք. (տեսնում է չկայ, մնում է քարացած, ձեռքիցը թափում է յա-
տակին թերթերը): Վահ, ինձ կողոպտեա՛ն, այն էլ մի լաւիտ, որ ծախի չափ խելք չունի: Դէ՛հ, արի ու խղճայ այսպիսիներին: (Լուռ): Այ, քեզ բա՛ն... ի՞նչ էի մտածում, ինչ դուրս եկաւ, ի՞նչ պէտք է պատասխանես դու Աստուծոյ անեղ դատաստանին: (Գոռալով) կաշիդ էլ պէտք է մաշկեմ ծախեմ... սպասի՛ր... (Լուռ մտածում է յանկարծ ուրախանում է): Ըհ՛ր... լաւ մտածեցի, նա սիրում է Ռուբէնեանցին, նորան մի քանի ռուբլի կբաշխեմ, և նա ստորագրել կտայ վէբսիլները (թռչկոտում է):

ՏԵՍԻՍ 9:

Կուլկուլեանց և Ռուբէնեանց:

ՌՈՒԻՔ. (ցոյց տալով թափուած թղթերը): Սա ի՞նչ է:

ԿՈՒԻԼ. Դա Սամուէլը բերեց և ձեր անունով փող ստացաւ:

ՌՈՒԻՔ. (հաւաքում է թղթերը նայում): Այստեղ 15 հազար ռուբլու վերսիլ կայ, բայց ինչո՞ւ չէ ստորագրել:

ԿՈՒԻԼ. Նորա ասելով դուք պէտք է ստորագրէք: (Ռուբէնին մի քանի վայրկեան լուռ նայում է): Լսեցէ՛ք, այն 2000 ռուբլին, որ տուիք, նա եւ 200 ռուբլու տեղ ստացայ, Սամուէլը փող տարաւ հիմա, չի հասկանում, չիմար է նա և ձեզ վերին աստիճանին սիրում է: Դուք այդ վերսիլները նորան ստորագրել տուէք, ձեզ փող կը բախշեմ, նա ձեզ չի մերժիլ, հասկացա՛ք:

ՌՈՒԻՔ. (զսպելով): Ինչո՞ւ 200 տեղ 200,000 չէիք պահանջում: (Մի կողմ) և այդ անիրաւութիւնը ես եմ արել:

ԿՈՒԻԼ. Ձեզպէս մէկ աղնիւ ու խելօք մարդ չկար, որ այս չիմար գլխին հասկացնի, ոչինչ, հիմա էլ կարելի է:

ՌՈՒԻՔ. Դուք Աստուածանից չէ՞ք վախենում:

ԿՈՒԻԼ. (յանկարժ քարանուծ է): Սա ինչ բան է, դուք ուղում էք խելքս գլխիցս հանել, իհարկէ վախենում եմ, սատանայական բաներ էք խօսում:

ՌՈՒԻՔ. Ձարութիւնը նման է մի որթի, որ ուտում է ոչրնչացնում մարդու խիղճը: Ձեր մէջ այդ խղճից մի շատ չնչին բան դեռ մնացել է, և նա ձեզ հետ խօսեց հիմա, մի՞թէ չզգացիք:

ԿՈՒԻԼ. Ձգացի ի՞նչպէս չէ, ուրեմն ստորագրե՛լ կտաք:

ՌՈՒԻՔ. Ո՛չ, բարեկամ, դուք անբաղդ էք, որ ձեր կեանքի բնթացքում ինձ պատահեցիք, ձեր առաջ մի երկաթէ պարիսպի պէս պէտք է կանգնեմ և դուք պէտք է այդ պարիսպի տակ ստանաք ձեր արժանի պատիժը: (Ձեռքի թերթերը նետում է գետին):

ԿՈՒԻՔ. (սպառնալով): Կանի՞ծեմ ձեզ:

ՌՈՒԻՔ. Ձեզպէսների անէծքները օրհնանք է, իսկ օրհնանքը անէծք:

ԿՈՒԻԼ. 1000 ռուբլի կստանաք աղա Կուլկուլեանցից, խենթ էք դուք, չէք հասկանում:

ՌՈՒԻՔ. Այո, մենք բոլորս խենթ ենք, որ ձեզպէսներին չենք կարողանում խելօքացնել:

ԿՈՒԻԼ. (զայրացած): Բաւական է, առաջարկում եմ, ո՞րն է ձեզ համար հեշտ, իմ պայմանը, թէ մահը:

ՌՈՒԻՔ. (հպարտ): Անշուշտ մահը...

ԿՈՒԻԼ. Լսեցէ՛ք ևս մի գաղտնիք, որ համոզուէք թէ ասածս կկատարեմ. իմ ձեռովն է կատարուել Պետրոսի սպանութիւնը:

ՌՈՒԻՔ. (ցնցւելով): Դ՞ուք: (Գլխիցը սեղմում է): Ահա ևս մի դժոխային նորութիւն:

ԿՈՒԻԼ. (հպարտ): Այո՛, լաւ նայեցէք... Մեծլում Կուլկուլեանցս. հիմա համոզւեցիք, որ նոյն վիճակն ձեզ էլ է սպասում, կարո՞ղ էք կրկնել ձեր ասածը:

ՌՈՒԻՔ. Հազար անգամ կկրկնեմ, իմ մարմինս իմա չէ, որ սարսափեմ, նա ձեզ պէս մարդակեր-զաղաններինն է, որ ամեն բոպէ կարող էք խել ինձանից: Իմ սեփականութիւնն իմ կամքն ու հողին է, որոնց չէք համարձակուիլ ձեր արիւնոտ ձեռքերով մօտենալ, և ինձ համար ցաւ չէ այսօր կամ վաղը մեռնելը, այլ իմ ցաւս այն է, որ ձեզպէս Յուդան ապրում է հասարակութեան մէջ, բայց նորանք չեն աւանում. դուք այն անգութ ներոնն էք, որ մեռնելու բոպէին չպէտք է լինի մէկը, որ մի կաթիլ ջուր մօտեցնի ձեր գարշելի շրթունքներին (զայրացած քայլում է):

ԿՈՒԻԼ. Վերջապէս ես կարող եմ վիրաւորւել:

ՌՈՒԻՔ. Վայրենի, այ դու դժոխք հիմնող, որ դու կարող ես վիրաւորուել, բաս Պետրոսին որ սպանեցիր, նրա որբ կինն ու երեխան ի՞նչ անեն:

ԿՈՒԻԼ. (իր ձեռքերը կոտրատելով. մի քանի վայրկեանից լետոյ չողում է): Տեսէք, աղա Կուլկուլեանցը կեանքում առա-

չին անգամ ծնկաչոյ աղաչում է ձեզ, խղճացէք ինձ, ասած գաղտնիքներս չտարածէք, ես անիրաւ մարդ եմ, գիտեմ, ներեցէք աղաչում եմ: (Աչքերը սրբում է թաշկինակով):

ՌՈՒԲ. Եթէ ես ներեմ, հասարակութիւնը չի ներիլ ձեզ:

ԿՈՒԼ. Ոչ ոք իմ գաղտնիքը չի իմանում: Միայն դուք ներեցէք: Տեսէք, ինչպէս շունը իր տիրոջ հագուստը կլիզի, աղաչում եմ ձեզ, կլիզեմ ձեր հագուստը, (համբուրում է նրա հագուստը) դուք բարի էք, չմատնէք ինձ: Գնամ 2000 ռուբլին բերեմ յետ տամ ձեզ: (Գնում է շէմքից բռունցքը սեղմած կատաղի սպառնալիքներ անում. Ռուբէնեանցը չէ նկատում. Կուլկուլեանցը գնում է):

ՌՈՒԲ. Ասում է՝ աղաչում եմ ինչպէս մի շուն և 2000 ռուբլին ուզում է յետ տայ: Հաւատամ, արդեօք, որ այսպիսի մարդը կարող է ուղղւել: (Լուռ մտածում է): Յամենայն դէպս, դեռ շուտ է սորա դէմ մի վճռողական բայլ անելը:

ՏԵՍԻԼ 10.

Ռուբէնեանց և Սամուէլ:

ՍԱՄ. Բարեւ, իմ թանկագին ուսուցիչ, Կուլկուլեանցից 1500 ռուբլու իսպալնիտեւնի լիստ ստացայ և 200 ռուբլի փող, ուզում էի ստորագրել, հրաեղ զնաց նա:

ՌՈՒԲ. Այլևս դու նորան պարտ չես, նա 200 ռուբլու տեղ, քեզանից 2000 ռուբլի է ստացել:

ՍԱՄ. Ահա թէ ինչու այդ խաբեբան ինձ տեսնելիս միշտ փող է առաջարկում. գիտէ՞ք այդ 1500 ռուբլին ինչ արի...

ՌՈՒԲ. Ինձ յայտնի է թէ ինչ կանես, լսի՛ր, եթէ ես չըկարողանամ դէն ձգել այն քօղը, որի տակ թաղնուած է Կուլկուլեանցը, թողնում եմ քեզ այդ և յուսով եմ, որ իմ տեղ դու կանես: Թող աշխարհի գիտնականները Աստուծոյ զոյուլութիւնը բացատրեն ինչպէս կուզեն, յամենայն դէպս, լաւ է արդար մեռնել, քան մեղաւոր: (Սամուէլի ճակատից համբուրում է):

Մնաս բարեւ, սիրելիս, զնա այդ ճանապարհով մինչև մահդ:

ՍԱՄ. (բարացած մի քանի վայրկեան, կիսածայն): Գնա

այդ ճանապարհով մինչև մահդ, մնաս բարեւ: (Եռանդուն): Անշուշտ մի փորձանք կայ. ո՛չ, ո՛չ, չեմ թողնիլ, այն հոգին, որ հիմա իմ մէջն է, նա դու ես ինձ տուել. նորան կտամ միայն քեզ համար: (Արագ գնում է):

ՎԱՐԱԳՈՅԸ:

ԱՐԱՐՈՒԱԾ Գ.

Կուլկուլեանցի ընդունարանը, շատ հարուստ կահաւորած, երեք մուտքով և այլն:

ՏԵՍԻԼ 1.

Կուլկուլեանց, Լևոն և Վարդան:

ԿՈՒԼ. (մենակ): Առաջ պէտք է թշնամու հետ բարեկամանաս, յետոյ գերեզմանը փորես: (Շեշտելով): Ե՛ս, աղա Կուլկուլեանցս, մի քաղցած գեաղի առաջ չողեմ, շան պէս շորերը լիզեմ... (դառն ծիծաղում է): Հա՛, հա՛, հա՛, ափսոս, այդ կատաղած Ռուբէնեանցին տասը զլուխ չունի, որ մէկը-մէկի հետեւից կտրեմ, որ աւելի սիրտս հովանայ: (Զայրացած անց ու դարձ է անում ու ժամացոյցին անհամբեր նայում):

ԼԵՒՈՆ. (վախեւիվախ): Եկայ:

ԿՈՒԼ. (զանդահարում է, դալիս է Վարդանը. Լևոնին): Մեծի կամբը որ կատարէք, Աստուած էլ ձեր կամբը կկատարի, բնկերդ ի՞նչ եղաւ: (Վարդանին): Եթէ հարցնող լինի, ասա աղէն տանք չէ, զնա...

ՎԱՐԴ. Զոխտ աչքիս երա, աղա: (Գնում է):

ԼԵՒՈՆ. Յոյակը չէկաւ, ասում է յաւուր զատաստանի առաջ ի՞նչ պէտք է պատասխանեմ:

ԿՈՒԼ. Քանի անգամ ասել եմ, որ Դաւիթ թագաւորը, Սողոմոն իմաստունը շատ մարդիկ են սպանել, բայց իրենց աղօթքով հիմա արքայութիւնումն են: Գլխաւորը աղօթքն է, որդիս, աղօթքը:

ԼԵՒՈՆ. Յոլակն ասում է, որ Պետրոսին սպանեցի, նա գերեզմանից դուրս է եկել, շատերին էլ հետը դուրս բերել և որտեղ գնում եմ, ասում է, դորանց եմ պատահում, դորա համար փախել է անտառները, որ էլ չպատահի:

ԿՈՒԼ. Ձեռ ասում՝ յիմար, սրանից էլ լաւ աշխատանք չի լինիլ, դա բոլորը սուտ է:

ԼԵՒՈՆ. (գողալով աչ ու ծախ նայում է): Ո՛հ, սուտ չէ, ես էլ տեսայ, մէկը մեզ փողոցում մատով ցոյց տւեց, մէկն էլ ծիծաղեց, երկուսն էլ ասացին՝ բռնեցէք, դրանք են Պետրոսի սպանողները. փախանք մի մութը փողոցի անկիւն, յանկարծ... (վախից կուչ է գալիս) մի պատուհանից Պետրոսը ասաց, գիշերս ձեզ մօտ էի, բայց դուք չէիք տեսնում, այո՛, ես տեսայ, նա ինձ անկողնի մէջ բռնեց այսպէս, (իրեն կորցրած բռնում է Կուլիւկեանցի կոկորդից սեղմում. Կուլիւկեանցը հազիւ ազատւում է: Լեւոն շնչասպառ): Ես մեռակ կսպանեմ Ռուբէնեանցին. մեզ փող է հարկաւոր, ուղում ենք փախչել մարդակերների մօտ, խօսքանք ձեզնից վատ չեն լինիլ:

ԿՈՒԼ. (զայրացած կիսածայն): Ձեռքներդ շղթայեած երկուսիդ էլ Սիբիր կուղարկեմ, ձեզ պէս գողերի տեղը Սիբիրն է, Սիբիրը... դժուր, դժուրս այստեղից, հարկաւոր չէ:

ԼԵՒՈՆ. Ո՛հ, դրութիւնս այնպէս է, որ անպատճառ մէկին պէտք է սպանեմ: (Ձեռքը ամեն կողմը տանելով). սորան, նորան, քեզ, ինձ:

ԿՈՒԼ. (վախեցած լեռ-լեռ է գնում): Ի՞նձ...

ԼԵՒՈՆ. Կսպանէի քեզ, եթէ իմանայի դժոխքի ծնունդներից միայն դու ես մնացել, և կեանքդ կոպէկ չարժէ, ձրի չենք սպանիլ, ասացի, որ մեզ փող է հարկաւոր, ի՞նչքան ես խոստանում, շուտ ասա:

ԿՈՒԼ. (Կատաղի): Դուք ձեր բարեբարին մոռանում էք. գողեր, մարդասպաններ, ձեզ պէտք է Սիբիր ուղարկեմ, Սիբիր, դժուրս այստեղից... դժուրս:

ԼԵՒՈՆ. (հանում է դաշոյնը, Կուլիւկեանցը վախից կրպչում է պատից): Առաջուայ պայմանին համաձայն եմ, ի՞նչ կասես:

ԿՈՒԼ. (գողալով): Ես էլ, ես էլ եմ համաձայն:

ԼԵՒՈՆ. Ուրեմն տաս օր ժամանակ, վաղուանից... առաջի օրը սպանեմ—1000 ռուբլի, քանի ուշ օրեկան 20 ռուբլի պակաս, 100 ռուբլի էլ կանխիկ. տուեցէք 100 ռուբլին:

ԿՈՒԼ. (գողալով պորտմանից հանում է փող և թուղթ դնում սեղանին ու խսկոյն կպչում պատից): Կցանկամ յաջողութիւն, վերցրէք փողը և նրա հասցէն: (Ձեռքով նշան է անում դէպի դուռը, որ Լեւոնը գնայ): Դէ՛հ... Աստուած քեզ հետ...

ԼԵՒՈՆ. (փողը թուղթը դնում է զրպանում, դառը ծիծաղ): Հա՛, հա՛, հա՛...

ԿՈՒԼ. (արւեստական ծիծաղում է): Հա՛, հա՛, հա՛:

ԼԵՒՈՆ. (դաշոյնը ձեռին մօտենում է, Կուլիւկեանցը խսկոյն մտնում է բազմոցի լեռն): Եթէ բոլոր աշխարհի օձերի թոյնը հաւաքես միասին, քո թոյնը էլի շատ կլինի նրանցից: (Լուռ: Կուլիւկեանցը զուխը բարձրացնում է ու խսկոյն թափնում): Դու՛մարը պատրաստիր, (հեզնօրէն) աղա՛ Կուլիւկեանց: (Արագ դնում է):

ԿՈՒԼ. (վախենալով աչ ու ծախ նայում է): Դէ՛հ, արի ու աղամի որդուն լաւութիւն արա... փողոցում քաղցած, անտէր ընկած էին. աղա էսպէս, աղա էնպէս, որ հրամայես աշխարհքը կբանդենք, սաղ-սաղ մարդկերանց կուտենք. է՛հ, ես էլ ասացի երեւի ճիշտ են ասում, խիղճս եկան, տուն տւեցի այդ գողերին, հաց, ջուր, հագուստ. վերջն էլ համեցէք, քիչ մնաց, որ իրենց բարեբարին սպանէք: Լաւ են ասել, թէ՛ օձը տաքացնողին կկծի... այսպիսի գող, աւագակները վերջը շան պէս են սատկում: (Լուռ անց ու դարձ է անում):

ՏԵՍԻՍ 2.

Կուլկուլեանց, Վարդան, յետոյ Սիրանուշ և Լուսիկ:

ԿՈՒԼ. (զանգահարում է, գալիս է Վարդանը): Մաքրիր սենեակը. (գնում է):

ՎԱՐԴ. (մենակ): Խաղաղներս դուրս բցեցին, ասումն խի ես դռան տակն ականջս դնում, պա, խաղաղին փռնած պենները չպեղմա իմանամ, չէ վեր իմ սերտս էլա օդում խաղաղն դառնալը, հիմա աղա Կուլկուլի մօտըմ ծառայըմ, ոչ թա տռան տակն, պօլին տակնալիմ ականջ տնելու, տեսնամ սա յինչ յունարի տէր մարթա, վեր էսքան կարողութիւն ու էսքան մեծ անում ունի. մարթ էլ աղա տեռնա... սրա պէս աղա է... (գլուխը շարժում է), պա, պա, պա, փողերը ջվալներովա, ջվալներով: Ամմա շատ կէշ պեներա փռնում. էն սրերէն տակին կենող զաչաղներն էլ իստի պեներ չեն անիլ, վեր սա եա անում:

ՍԻՐԱՆՈՅՇ և ԼՈՒՍԻԿ (գալիս են, Լուսիկի ձեռքին խաղալիք): Աղադ տանն է:

ՎԱՐԴ. (կտրուկ): Հա, այո...

ԱՍՏՂ. Գնա կանչիր. (Վարդանը գնում է):

ԿՈՒԼ. (գալիս է): Օհ, իմ աչքի լոյսը այստեղ է, բաւական է ինչքան լացիր, ինչքան տանջուեցիր, նա գնաց, մեռաւ: (մօտենում է, Սիրանուշը հեռանում է):

ՍԻՐ. Ո՛չ, ո՛չ, նա չմեռաւ, սրտիս մէջ ապրում է իմ Պետրոսը. (Կուլկուլեանցին): Նորից փողի եմ եկել ձեզ մօտ:

ԿՈՒԼ. (Լուսիկին, ձեռքի խաղալիքին): Այս ի՞նչ բան է, Լուսիկ: (Սիրանուշին): Աչքիս վերայ:

ԼՈՒՍ. Սա հայրիկն է գնել, շատ... պէտք է գնի, շատ:

ԿՈՒԼ. (ցնցում է, գուրգուրում է Լուսիկին):

ՍԻՐ. (ինքն իրեն): Ո՛վ, Յուդա, այ դու անօրէն, ախր ինչո՞ւ սպանեցիր Պետրոսիս, դու ո՞վ ես, եթէ մարդ ես, նա մարդու վնաս չէր տուել, եթէ սատանայ ես, ինչո՞ւ հէնց նրան սպանեցիր. (աչքերը սրբում է թաշկինակով): Գուցէ սա երազ է, ո՛չ, նեցիր. (աչքերը սրբում է թաշկինակով): Գուցէ սա երազ է, ո՛չ, ես իմ ձեռքովս օրհնած հողը ածեցի Պետրոսիս երեսին: Եթէ

զանգատեմ ինչ որ սրտիս մէջ հաւաքւած է, ոչ որ չի լսիլ... այլ հաւաքելու եմ բոլորը (կրծքին զարկելով) այստեղ, որ միանգամայն ինքը իրեն պատուի սիրտս ու այնպէս տրաքւի, որ ձայնը երկինք հասնի, թէ չէ փոքր ձայները ոչ որ չի լսում, ո՛չ, չեն լսում: (Լաց է լինում):

ԼՈՒՍ. Մայրիկ, հայրիկը ո՞րտեղ է գնացել:

ՍԻՐ. (գուրգուրելով): Հեռու է գնացել, բալիկս, շատ հեռու, կդայ...

ԼՈՒՍ. Մայրիկ, գնանք հայրիկի մօտ:

ՍԻՐ. (համբուրելով): Այո, դժբաղդ բալիկս, մի քիչ էլ սպասենք, յետոյ...

ԼՈՒՍ. Մայրիկ, ինչո՞ւ չէ հայրիկը շուտ գալիս...

ՍԻՐ. (բռնեցըր դէպի վեր): Ո՞վ է եկել այնտեղից, որ նա գայ: (Գլուխը ձեռքերի մէջ թաղում է ու լալիս):

ԼՈՒՍ. (Կուլկուլեանցին): Հայրիկիս տեղը չէ՞ս իմանում:

ԿՈՒԼ. (ցնցուելով): Ա՛հ, (հառաչելով) արի գնանք քեզ շօկօլադ տամ: (Տանում է Լուսիկին ու մենակ յետ գալիս, հայելի առաջ կանգնում իրեն տնդդում) Ափսոս դու, աղա Կուլկուլեանց, որ շուտ ծերացար (հառաչում է):

ՍԻՐ. Պարոն Կուլկուլեանց, խնդրեմ Լս 50 ռուբլի տաք.

ԿՈՒԼ. չէ, հէ, հէ... այսքան պարտքը ե՞րբ պէտք է տաք, (ցոյց տալով վերսիլը):

ՍԻՐԱՆ. Վերջապէս տունս կժախեմ:

ԿՈՒԼ. Տանդ այսքան չեն տալ:

ՍԻՐԱՆ. (ղարմացած): Ի՞նչպէս, 600 ռուբլի՞ էլ չեն տալ:

ԿՈՒԼ. (ցոյց տալով վերսիլը): Լաւ նայիր, սա 600 չէ:

ՍԻՐ. (նայում է, յետ-յետ քաշւում): 600 ռուբլին ի՞նչպէս 6000 դարձաւ:

ԿՈՒԼ. (սառնասիրտ): Զեմ իմանում ինչպէս դարձաւ, սա վերսիլ է, հաճաք չէ...

ՍԻՐ. (գոռալով): Խաբէբայ, աւաղակ էք դուք: (Լաց է լինում, ձեռքերի մէջ զլուխը թաղում. Կուլկուլեանցը գաղտնի մօտենում է Սիրանուշին համբուրում):

ՍԻՐ. (զայրացած). Կեռացի՛ր, լիրբ...

ԿՈՒԼ. (ձեռքի մէկը բեխը ոլորելով միւսը դէպի դուռը մեկնած). Եթէ իմ համբոյրը քաղցր չէ՝ ձեզ համար, կարող էք գնալ:

ՍԻՐ. (վախեցած). Մի՞թէ 6000 ռուբլի պէտք է պահանջէք:

ԿՈՒԼ. 600 ռուբլին էլ չպէտք է պահանջէի, բայց դուք ինծպէս աղա մարդուն լիրբ, խաբեբայ, մինչև անգամ աւաղակ անուանեցիք. հէնց վաղը տունդ ծախելու եմ, փողոցում թողնեմ ձեզ:

ՍԻՐ. Վերև Աստուած կայ, վախեցէ՛ք: (Շուրջը վախեցած նայում է): Վա՛հ, երազն էլ այսպէս չի լինիլ... ասացէ՛ք, ի՞նչ անեմ:

ԿՈՒԼ. Շատ եմ ասել, չէք լսում:

ՍԻՐ. Յոյսս տունս էր, այն էլ դուք էք խլում. կապոտեցիք իմ ձեռքերս դուք, ես պատրաստ եմ մտնել կենդանի գերեզման, քան թողնել իմ որբ բալիկին հացի կարօտ: Խնդրեմ Լս 50 ռուբլի տաք:

ԿՈՒԼ. Խէ՛, խէ՛, խէ՛, (Սիրանոյշին համբուրում է, նա թույլ է տալիս, փող է տալիս, Սիրանոյշը վերցնում է): Ա՛յ, փողը ինչու համար է, (համբուրում է), ա՛յ փողը ինչու համար է, (համբուրում է), ա՛յ, փողը ինչու համար է (համբուրում է):

ՍԻՐԱՆ. (փողը տեղակելով): Գուցէ ձեզ իզուր վիրաւորեցի, բայց Պետրոսիս սպանեցի՛ն, տարա՛ն, սպանեցի՛ն: (Լալով դնում է):

ԿՈՒԼ. (մենակ): Մի Ժամանակ երեսիս թըում էիր, հիմա եկել ես Պետրոս ես հարցնում. նրան աղա Կուլիկուեանցը թաղել է, զնա, հանիւր գետնի տակից. ա՛յ, իսկական մարդը նա է, որ ասի ու կատարի: Կեցցեմ ես... (լուռ, շատ հպարտ): Վա՛հ, եթէ ես ամենից մեծ լինիմ, աշխարհս տալն ու վերայ կանեմ. մարդիկ կոյր են, չեն տեսնում, որ իրենց մէջ այսպիսի մի երկաթէ մարդ կայ: Մի՞թէ չեմ կարող ընտրուեմ ամենից մեծ: Իհարկէ կարող եմ. այն՝ ինչ որ անկարելի է, փողը կարելի է դարձնում, փող վաստակելն էլ շատ հեշտ է. մէկից կարող եմ 100-ի տեղ 10-հարիւր ստանալ. դորա մի մասը կցատկացնեմ մի այնպիսի հիմնարկութեան, որ ձայնը ամբողջ աշխարհը հասնի, թէև մէկ-երկուսի մօտ կխալտառակուեմ, բայց 100,000-ի մօտ էլ կփառաւորուեմ: Ո՞վ կարող է այսպէս խելօք ու իմաստուն մրտածէ: (Մատը բարձրացնելով): Միայն ինծպէս աղաները:

ՏԵՍԻՆ 3.

Կուլիկուեանց, Մանուկ և լետոյ Աստղիկ:

ՄԱՆ. (պորտֆէլից հանում է թերթ տալիս): Բարեւ, ստացէ՛ք այս իսպալնիտելնի լիստը, սորա համար Սարգիսը ուզում էր ինձ դատարանումը ձեծի, ասում է, սուտ է՝ 300 ռուբլի չէ, 60 ռուբլի է:

ԿՈՒԼ. Թող ինչ ուզում են ասեն: (Տալիս է թղթեր) այս իսպալնիտելնի լիստերը վերցրու, դու էլ պրիստաւի հետ կզնաս, տներումը ինչ որ կայ չկայ կդրես, թող ինչքան ուզում են լաց լինեն, մի ամաչիլ. խօս դողութիւն չես անում, ի՞նչ կայ որ...

ՄԱՆ. (թերթը տեղակելով, պահարանից հանում է օղի և ուտելու բան): Լա՛ւ... լա՛ւ... թէև մի քիչ սիրտս ցաւում է, երբ տան մէջը ծախելիս մայրը երեխին զրկած լաց է լինում... բայց... (հառաչում է ու խմում):

ԿՈՒԼ. (զայրացած): Անիրաւները փող ուղելիս ասում են՝ աղա մէկի տեղ հարիւր կտամ: Վերջն էլ, համեցէք, լաց են լինում. դրանց մէջքի կաշին էլ է հարկաւոր մաշկել ծախել, ոչ թէ միայն տան մէջը:

ԱՍՏՂ. (զալիս է): Կարծեցի ամուսինս ձեզ մօտ է, չէ՞ք իմանում նա որտեղ է:

ԿՈՒԼ. (հպարտ անց ու դարձ անելով): Ա՛յ քեզ զարմանալի բան, կինը չէ իմանում իր ամուսնու տեղը, Ես պէտք է իմանամ:

ԱՍՏՂ. Էլ ուրիշ ոչինչ չէ՞ք կարող ասել:

ԿՈՒԼ. Երկիւղալի է ձեզ հետ խօսելը ինծպէս աղա մարդուն դուք լիրբ անուանեցիք, չիշո՛ւմ էք, հիմա եկել էք (ծաղրելով) «ամուսինս ո՞րտեղ է»...

ԱՍՏՂ. Ձեր ծաղրից չեմ վիրաւորւում, որովհետև դուք 100 անգամ ստոր էք, քան ինքը ծաղրը... Միայն ուզում էի իմանալ, ինչո՞ւ ամուսնուս ու մեր բոլորիս կեանքը թունաւորում էք դուք, և ամենքը պէտք է կնոջը մեղադրեն, չեն իմանալ, որ մէջներում մի սև օձ կայ, որի անունը աղա Կուլիկուեանց է, նա է կծում ու խելքից հանում կասկածոտ ամուսնուս:

ԿՈՒԼ. (հպարտ): Օ՜... հօ... ինչ լաւ երգել գիտէք է՜... հայի կնոջից այդպէս շնորհք չէի սպասում:

ԱՍՏՂ. Այո՛, դուք սպասում էիք, որ մեր ու աղջիկ տանը նստենք սուգ անենք, որ դայիք ձեր դարձելի ձեռքերով սրբէիք մեր աչքերի արտասուները... Ո՛չ, սխալուում էք, աղջիկս զնաց իր սիրած երիտասարդի հետ հօրը չլսելով: Ես էլ կզնամ որտեղ սիրտս է ցանկանում. դեռ մի անգամ ևս պէտք է փորձեմ, ա-սեմ, որ Կուլկուլեանցը անաղնիւ մարդ է, նա քեզ խաբուում է: Առայժմ չհամարձակուէք ոտ դնել իմ տունը, թէ չէ, (ցոյց տալով մատները) այս մատներով կհանեմ ձեր կոկորդը ու շներին կտամ:

ԿՈՒԼ. (հեզնաբար): Այդ բոլորը ուղիղ է, միայն մի տեղ մի քիչ սխալուում էք, մեր տունը, որ ասում էք, նա ձերը չէ, այլ աղա Կուլկուլեանցինն է իր կահ կարասիքով և օրէնքով հաստատւած այստեղ դրած: (Չարկելով ծոցի գրպանին):

ԱՍՏՂ. (ցնցւում է ուշքը ժողովելով, ինքը իրեն): Հաս-կանում եմ. ահա թէ ինչու ամուսինս ինձ ասում էր, յարգանքով վերաբերւեցէք աղա Կուլկուլեանցի հետ, նա աղնիւ մարդ է, (հանգիստ մտածում է):

ԿՈՒԼ. Աշխարհս այնքան վատացել է, որ աղնիւ ու բարի մարդուն չեն սիրում: (Ծիծաղելով ուղղում է Աստղիկին համբուրի):

ԱՍՏՂ. (եռանդուն հեռանալով): Հեռացի՛ր, անպիտան, խաբելով միայն տունս կարող ես գնել:

ՄԱՆ. (հանգիստ ուտում, խմում և ծխում է, Կուլկուլեանցին): Էս արաղը ջիգարս այրեց, կարելի՞ է մի քիչ կանեակ խր-մել, որ ջիգարս հովանայ:

ԿՈՒԼ. (Մանուկին): Խմի՛ր, (Աստղիկին): Ցանկալի է իմա-նալ, ձեր սիրտը համածանց է լեզւի հետ, թէ հէնց լեզուներդ է եփ եկած ջրի պէս բլբլում (Մանուկը պահարանից հանում է նոր շիշ, խմում):

ԱՍՏՂ. Իսկ ես կցանկանայի իմանալ, որ սրտի մասին խօսում էք, սիրտ ունէ՞ք ձեզ արդեօք. կամ եթէ ունիք, նա նման չէ մի սատանայի գէմբի, որ կրակի նման կարմիր լեզուն հա-նած ծիծաղում է մարդկանց վերայ:

ԿՈՒԼ. Սիրտ էլ ունեմ, խիղճ էլ ունեմ, խելք էլ ունեմ, փող էլ ունեմ. ինձանից էլ լաւ մարդ չես ճարելու, մարդդ կորելա գնացել, ի՞նչ ես գլուխս ցաւեցնում: (Ուղղում է Աստղիկին բռնի):

ԱՍՏՂ. (եռանդուն գնում է շէմքում կանգնում): Եթէ հաւատայի, որ ձեռքիս մի հարուածով կարող եմ ջնջել ձեզ, առանց մտածելու կղարնէի:

ԿՈՒԼ. (արագ մօտենալով Աստղիկին որ բռնի): Ուր եմ երկար ու բարակ մտածում:

ԱՍՏՂ. (զոռալով երկու քայլ սպառնալով մօտենում է): Հեռացի՛ր ասում եմ: (Կուլկուլեանցը վախից յետ-յետ է քաշւում):

ՄԱՆ. (արաղի բաժակը տալիս է այդ մոմենտին Կուլկուլեանցին): Համեցէք, կեցցէ՛ս, լաւ պրծար: (Կուլկուլեանցը չէ խմում):

ԱՍՏՂ. Վախկոտ անիրաւ, հիմա համողւիք, որ քո ոսկին ու արծաթը կզրաւէ միայն անդամալուծներին ու յիմարներին, ձեր տան մէջ մի հայ կին ձեզ ցեխին է հաւասարեցնում, իսկ դուք վախենում էք. այդպիսի մարդուն ես կանուանեմ գող կա-տու: (Կուլկուլեանցը ցնցւում է, Աստղիկը գնում է):

ԿՈՒԼ. (Չայրացած): Օհօ... եթէ այդ խօսքերը նա ինձ ա-սէր մի քանի մարդու մօտ, ես նորա աչքերն ու լեզուն կհանէի: Ի՞նչ կայ որ, միայն ես լսեցի, ի՞նչս պակասեց, էլ էն աղա Կուլ-կուլեանցն եմ:

ՄԱՆ. Դուք կարծում էք ես այստեղ չեմ:

ԿՈՒԼ. Դու չեղածի հաշւում ես:

ՄԱՆ. (օղիի բաժակը ձեռին): Դու մարդ ես կուլ տա-լիս, իսկ ես արաղ. ես իմ կուլ տւածը կմարսեմ, բաց դու, դու օհօ... խիղճ չունես, խիղճ... (Աչքերը թաշկինակով սրբում է):

ԿՈՒԼ. (ձեռքով հրելով դուրս է դրում): Գնա քնիր, զնա՛: (Գնում է Մանուկը): Սպասիր դեռ, տիկին Աստղիկ, մարդուդ խրտնացրի, դա քիչ էր քեզ, երբ տունդ կծախեմ, փողոցում կմնաս, այն ժամանակ դու էլ ուրիշների պէս աղնիւ մարդ կասես ինձ, դու առաջինը վերջինը չես:

Վարդան և Կուլկուլեանց, յետոյ Երւանդ, Սոնա, Յոլակ և երկու ոստիկան:

ՎԱՐԴ. (բերում է ափսէի մէջ ծրար):

ԿՈՒԼ. (վերցնում է կարգում): «Մեծարգոյ Կուլկուլեանցին խնդիր: Խոնարհաբար խնդրում եմ որդկերանցիցս մէկը ձեր հաշւով մտցնէք ուսումնարան»։ (Վարդանին) այդ կինը երրորդ անգամն է ինձ դիմում, մինչև 300 ստորագրութիւն չի լինի, չեմ ընդունիլ. դնա ասա... (Վարդանը գնում է, յետ դալիս):

ՎԱՐԴ. Աղա, չոգած ըղանջանքա անում, մեղք ու կրակա, շատա լաց իլում, ես էլ եմ խնդրում:

ԿՈՒԼ. Դու էլ ես խնդրում (զայրացած): չեռացիր, անպիտան:

ՎԱՐԴ. (փախչում է): Խնդիրքը որ 100,000 մարդկերանցից չլինի նա, ի՞նչ լազաթ... (Վարդանը բերում է ծրար, Կուլկուլեանցը կարգում է): «Կայանալով ամսոյս 24-ին բարեգործական մասնաժողով, միաժայն ընտրում է ձեզ նախագահ և յատուկ խնդրում է, որ չմերժէք քարտուղար Ճշտապահեանց»։ (Վարդանը գնում է. Կուլկուլեանցը վերցնում է սեղանից թերթեր): Այս ինչ նամակներ են: (Կարդում է): «Մեծարգոյ պարոն Կուլկուլեանց: Ստանալով Աստուածամօր նկարը, ի նւէր եկեղեցւոյ, եկեղեցական ժողովը յայտնում է իր շնորհակալութիւնը. երեցիօխ հալախեանց»։ (Կարդում է միւս թերթը): «Պատուաբաժան պարոն Կուլկուլեանց. եկեղեցւոյ զանգ առնելու առթիւ, դիմեցի թեմիս առաջնորդին, թույլատրում է ձեր անունը գրել ոչ եկեղեցու դռան վրայ, այլ եկեղեցու աջ պատի վրայ, հակառակ ձեր ցանկութեան. և մեծութեամբ կէս արշինի, գտնում է, որ ձեր խնդրած 3 արշինը շատ մեծ և անյարմար: Մնամ ձեզ աղօթարար աւագ քահանայ Անմեղեանց»։ (Լուռ անց ու դարձ է անում): Ոչինչ, կէս արշին տախտակի վրայ էլ կարելի է մեծ-մեծ գրել: (Հրճւելով) զանգից լաւ նւէր չի լինիլ, լաւ մտածեցի, այնքան էլ մեծն եմ առնելու, որ ծայրը սաղ աշխարհքը հասնի, որ ասեն նա աղա Կուլկուլեանցի զանգի ծայնն է, լսեցէք... (Իբրեւ զանգ է զարնում և զանգի նման ծայն հա-

նում) բո՛ւ, բո՛ւ, բո՛ւ, (Վարդանը դալիս է, փախենում է հարցնի, Կուլկուլեանցը շարունակում է) բո՛ւ, բո՛ւ, բո՛ւ, (յետ է նայում տեսնում Վարդանին): չեռուից լսեցի՞ր:

ՎԱՐԴ. չի՞նչ լսեցի, աղա:

ԿՈՒԼ. Զանգի ծայնը, յիմար, աղա Կուլկուլեանցի զանգի ծայնը:

ՎԱՐԴ. Տի պէն չեմ լսել:

ԿՈՒԼ. (բռնելով Վարդանի ականջից): Խուլ անպիտան, բեզ ասել եմ, որ հետս հակառակ մի՛ խօսիր: (Լսում է դրսից պարադնի զանգի ծայնը):

ՎԱՐԴ. (ուզում է դնա): Աղա, մեր տուան զանգը տամբն:

ԿՈՒԼ. Սպասիր, ես կգնամ (գնում է):

ՎԱՐԴ. (ականջը տրորելով): Ականջս պոկեց թամամ, պահ, ստի էլ մի շառլատան մարդ չի ըլիլ, ասիւմա, վեր ինձ մօտ արդայով իսանա կեամ մարդու թիւլ չանես, սիւրբն աղջիկ ես կնիկ ինի թող կայ, կեշին էլ թիւլ չանես: Էտ բեանի խաթրու էլ մի քանի հետ քեթալիւմ կերել. ախր շառլատան քիօփօղլի, ես հինչրմ գիւգում, տու հոնցն ես օգում, վերին ես եմ հրվանքմ, տիւ չրս հրվանում, որին տիւ ես հրվանում, ես չրմ հրվանում: Մախլաս, խաթալու աղա եա:

ԿՈՒԼ. (դալիս է): Ա՛յ դու յիմար էծի դուլիս, էն օրիորդին ինչո՞ւ չես թողել դայ, բեզ ի՞նչ եմ ասել...

ՎԱՐԴ. Ասալըս կեշին թիւլ չանիս:

ԿՈՒԼ. (զայրացած): Կույր անպիտան. (մաղերիցը Վարդանին բռնում է, նա ցաւից կուչ է դալիս): Կորիր, անհասկացող աւանակ: (Վարդանը փախչում է): Համեցէք այսպիսի ծառային հաց տուր պահի: (Լսում է աղմուկ, Վարդանը դիմադրելով մտնում է Երւանդի հետ):

ԵՐԻԱՆԴ. (չոգում է): Աղա, լաւն էն է, որ տեղնուտեղը սպանես, քան վերջին զազանս ծախես:

ԿՈՒԼ. Գնա, 500 ստորագրութիւն բեր, որ աղքատ ես, չեմ ծախիլ...

ԵՐԻԱՆԴ. Առաւօտը պէտք է պրիստաւը գայ ծախի, աղա, զլխիդ զուրբան:

ԿՈՒԼ. (բեխերը ոլորելով): Կասեմ չի՛ դալ, զնա՛, (աչքով է անում Վարդանին, նա դժուարութեամբ դուրս է գցում. կանչում է). Վարդան (գալիս է Վարդանը): Արջի՛ ճուտ, ինչո՞ւ այդ մարդուն թողեցիր ներս...

ՎԱՐԴ. Աղա՛, լաւ չի, տու ես զիտում:

ԿՈՒԼ. Կորի՛ր, անպիտան (Վարդանը փախչում է). այս պիտին տաքացրած երկաթով է հարկաւոր ծեծել:

ՎԱՐԴ. (գալիս է): Աղա՛, մին կնիկա հրրցնում:

ԿՈՒԼ. Կարմիր է...

ՎԱՐԴ. Շատ կարմուրա աղա...

ԿՈՒԼ. (սիրալիւր): Ա՛յ, հիմա շատ ապրես, զնա կանչիր:

ՎԱՐԴ. Աղա՛:

ԿՈՒԼ. Զահրումար, շուտ կանչիր, կորի՛ր: (Վարդանը գնում է):

ԿՈՒԼ. (հալլի առաջ իրեն տնդդում է, բեխերը ոլորում երգում է) «գացէք տեսէք ով է կերել դեժ» և այլն:

ՍՕՆԱ. (երեսը գունատուած գալիս է Վարդանի հետ): Աղա, երեսանց տէր ենք, առաւօտը պրիստաւը գալու է մեր տան մէջը ծախի, օգնիր, աղաչում ենք. (չոգում է):

ԿՈՒԼ. (անցնելով ամեն կողմը, նայում է Սօնային ու ուսերը շարժում): Գնա՛, զնա՛, զնա՛... կասեմ չի՛ դալ: (Աչքով է անում Վարդանին նա հակառակելով դուրս է տանում, նախասենեակից լսում է Սօնայի ձայնը): «Թո՛ղ, աղան լաւ մարդ է, թո՛ղ անպիտան, աղան լաւ մարդ է»:

ԿՈՒԼ. (կանչում է): Վարդան: (Գալիս է Վարդանը): Կոյր անպիտան, դա կարմիր էր:

ՎԱՐԴ. Աղա, տիւսըմը քեարբիջի պէս կարմիր էր, լրհա որ քեզ տեսաւ, սառթնեց:

ԿՈՒԼ. Ինչո՞ւ:

ՎԱՐԴ. Յինչ գիշամ աղա, հալբաթ գիւղիւմա թա, մարդակեր ես, օտելու ես իրան:

ԿՈՒԼ. Յիմար աւանակ, կորի՛ր: (Վարդանը գնում է):

ՅՈՒ. (գալիս է խելագարւած, հագուստը պատառուած, բորիկ, երեսը ցեխոտ, Վարդանը հակառակելով մտնում է Յուլիի հետ). Թո՛ղ, սա իմ աղան է, (Կուլկուլեանցը կպչում է պատից, նշան անում Վարդանին, որ դուրս տանէ. Յուլիը աթոռով ուզում է խփի, Վարդանը փախչում է). այրուի՛ր. (նրստում է գետնին, աթոռը դնում իր զլին): Աղա, համեցէք նրստիդ զլխիս. (զլխի աթոռը ցոյց տալով. Կուլկուլեանցը երեսին խաչ հանելով փախչում է): Ո՛չ, ես չեմ սպանել, նա փախաւ, իմ տունը անսառն է, այրուի՛ր, հրեշտակ, օժէ՛ր, անտա՛ռ, այրուի՛ր, արի՛ւն (ու փախչում է, քիչ յետոյ Կուլկուլեանցը դողալով զլուխը մեկնում է բեմը բռնելով Վարդանի թևից, Վարդանը յետ է քաշւում, Կուլկուլեանցը Վարդանի մէջքին դառնում է, նա ընկնում է երեսի վրայ բեմի մէջ Վարդանը վախենալով զլուխը բարձրացնում է):

ԿՈՒԼ. (նախասենեակից): Հը՛, վախկոտ անպիտան, լաւ նայիր:

ՎԱՐԴ. (կանգնում է լաւ շուրջը նայում): Քնացելա, աղա՛...

ԿՈՒԼ. (գալով բեմ): Այստեղ ով կայ, որ վախենում ես, վախկոտ կատու...

ՎԱՐԴ. Բեա դո՛ւ, աղա՛:

ԿՈՒԼ. (ուզում է խփի, Վարդանը փախչում է): Վահ, Տէր Աստուած, սա ինչ պատժի մէջ ես զցել ինձ:

ՎԱՐԴ. (գալիս է): Ա՛ղա, էլ օղըմ չըմ ծառայըմ, փողս տօր քնամըմ...

ԿՈՒԼ. (ղայրացած): Ա՛յ իմ աղուհացը աչքերդ կուրացնի հա՛, կերել ես, խմել ես, գողացել ես, աղի պէս կեանք ես անցկացրել, դեռ փող էլ ես ուզո՞ւմ: (Թքում է):

ՎԱՐԴ. Աղա, խօսիր մեր մէջ մնայ, շատ ժօլիկ մարդըս:

ԿՈՒԼ. (ուզում է ծեծել, ոտը սայթքում է ու ընկնում, Վարդանը ծիծաղում է ու փախչում: Կանգնում է կաղի տալով նստում): Ահա՛, իմ արած լաւութիւնների վերջը (ոտը բռնելով): Ո՛ւհ, ո՛ւհ, ինձպէս բարեզործ մարդուն իմ ծառայողը՝ մէկ է, թէ իմ շունը, ժուլիկ ասի՛: (Գլուխը շարժում է) երկինքը որ

չքանդւեց, Աստուած որ նրան տեղն ու տեղը չչորացրեց, նշանակում է ոչ Աստուած կայ, ոչ երկինք: Սպասիր, հիմա Ռուբէնեանցի սպանողը գալու է, նորա ձեռքերը կապել տամ, ուղարկեմ բանտ, յետոյ քեզ հետ կխօսեմ:

ԵՐԿՈՒ ՈՍՏ. (մտնում են. նորանցից մէկն ասում է): Ո՞ր տեղ կհրամայէք որ սպասենք, աղա:

ԿՈՒԼ. (փող տալով ամեն մէկին): Ստացէք այս փողը, միայն այնպէս պիտի կկապոտէք, որ ոսկորները տեղիցը շարժուեն: (Նրանք գլխի շարժումով համոզում են: Նորանց թաղցնելով դուրսը դուռն տակ): Այստեղ կսպասէք, ես ժամանակը կասեմ. (նորանք թաղնում են): Պէտք է հոր փորողին իրեն գցես մէջը, որ սատանան էլ չի իմանայ զաղտնիքդ:

ԼԵԻՈՆ. (գալիս է ցեխոտ ու սարսափած): Գործս վերջացրի Ռուբէնեանցի հետ, 3 տեղից սիրտը դաշոյնով պատռեցի. նա ինձ անիծեց ու մեռաւ: (Հառաչում է) տւեցէք խոստացած գումարը:

ԿՈՒԼ. Շատ ապրես. ես կաղօթեմ, որ Աստուած քեզ ների: Սպասիր այս բոպէիս, զնամ 900 ռուբլին բերեմ տամ: (Վախելով գնում է. ԼԵՈՆը գլուխը սեղմած մնում է քարացած կանգնած: Ոստիկանները մտնում են թուր ձեռներին, զգուշութեամբ մօտենում են. ԼԵՈՆին բռնում գոգարութեամբ կապոտում):

ԿՈՒԼ. (գալիս է): Պինդ կապոտեցէք այդ մարդասպանին:

ԼԵԻՈՆ. Այսպէս արիւր դու ինձ... չմոռանաս, աղա Կուլկուլեանց (ԼԵՈՆին տանում են):

ՎԱՐԱԳՈՅՐ:

ԱՐԱՐԻԱԾ Ե.

Հետեւեալ դէպքը պատահում է 3 տարուց յետոյ: Բեմը ներկայացնում է Կուլկուլեանցի սեղանատունը, շատ հարուստ կահաւորած, մէջ տեղը ծաղի մեծ սեղան բաց արած դրած, երևում է և մի ուրիշ սենեակ (2 սենեակ):

ՏԵՍԻԼ 1.

Կուլկուլեանցը շատ հարուստ հազւած, իսկ Սամուէլը բաւական փոխած ու հազւած հասարակ:

ԿՈՒԼ. Ուրեմն այդպէս. կմնաս մի լաւ քէֆ կանենք իմ հարսանիքում: Հիմա պատմիր, այս 3 տարու՞մը ծնողներիդ մահից յետոյ ինչե՞ր անցան գլխովդ:

ՍՍՄ. Ծնողներիս մահից յետոյ, 3 մեծ զիւղում ուսումնարաններ ու հիւանդանոցներ բացի: Ինքս բժշկի և վերակացւի դեր եմ կատարում և երբ մի զիւղից միւս զիւղն եմ գնում, ուսումնարանի երեխերքը, տղայ ու աղջիկ խառնուած, գալիս են դիմաւորելու ինձ դաշտումը... Ինչպէս փոքրիկ դառնուկներ հայրիկ, հայրիկ ասելով շրջապատում են ինձ և մինչև ուսումնարանը անմեղ երգելով բերում: Նրանց աղբիւրի պէս բլբլան ձայները խառնում են թռչունների երգերի հետ, կարծես երկնից բիւր հրեշտակներ են իջել դաշտը: Եւ յետ դառնալիս նոյնպէս ճանապարհում են մինչև դաշտը: Երբ բաժանում ենք, քարացած նայում են հետեիցս: Գնում եմ հեռուից ու մէկ բլուրի վերայ կանգնում թաշկինակով մնաք բարեւի նշան անում. յանկարծ որոտում է դաշտը նրանց ձայնից,— երթաւ բարեւ հայրիկ ասելով շարունակում են, մինչև որ անհետանում եմ նրանց աչքից. և այս մատաղ սրտերի մէջ լոյս վառողը Ռուբէնեանցն է (յանկարծ Կուլկուլեանցն ցնցւում է): Այն, նա է, որ անգութ մահի ճանկերից ազատում է հայրերի ու մանուկների կեանքը, որոնք հարիւրներով բժշկւում են իմ հիւանդանոցում: (Լուռ հառաչում է): Ուղիղ անցաւ 3 տարի այն օրից, երբ չար Յուդան դաշոյնով պատռեց Ռուբէնեանցի սիրտը ու թափեց Քրիստոսի աշակերտների մէկի անմեղ արիւնը: (Աչքերը սրբում է թաշկինակով):

ԿՈՒԼ. (զրգուած): Ես միշտ աղօթում եմ հիւանդների համար:

ՍՍՄ. Աղօթքով օգնելը ձեզ ձեռնտու է. յետոյ:

ԿՈՒԼ. Յետոյ ի՞նչ գիտեմ, երեւի լաւանում են էլի:

ՏԵՍԻԼ 2.

Նոյնը, Զաքար և Մանուկ:

ԶԱՔ. (չքեղ հագնւած, համալսարանի նշանը կրծքին, բա-

ընում է միայն Կուլկուլեանցի հետ): Ի՞նչպէս էք, Թանկադին Կուլկուլեանց:

ԿՈՒԼ. Խնդրեմ ծանօթանաք:

ՉԱՔ. (անտարբեր): Կարծեմ Սամուէլն էք:

ՍԱՄ. (որ չէ նկատած լինում, յանկարծ ուրախանում է):
Չաքար, ընկերս, մի՞թէ ինձ չճանաչեցիր...

ՉԱՔ. (սառնասիրտ): Լաւ եմ ճանաչում, էլ ինչ կասես:

ՍԱՄ. Ո՞րտեղ ես մեր միւս ընկերները... սոս անպիտան,
5 նամակ եմ գրել զիւղից, ոչ մէկի պատասխանը չես գրել:

ՉԱՔ. Ամսական 500 ռ. ինձ չէ բաւականեցնում, ես մտածում
եմ եկամուտս կրկնապատկել, ոչ թէ քո նամակներին պատաս-
խանել. (մօտենալով Սամուէլի ականջին): Գիւղումը ի՞նչ կայ,
ի՞նչ... կարողութեանդ հետ խելքդ էլ ես բաժանել, այն քնքոյշ
սեռերը միայն քաղաքներումն են լինում, նրանց փափիկ ձեռ-
քերը, նրանց ծիծաղելու ու ծռմուռաւելու ձևերը, ո՛ւլ, ո՛ւլ, ո՛ւլ,
(Թռչկոտում է) հոգուն մեռնեմ, հոգուն... (ձեռքը դնում է Կուլ-
կուլեանցի ուսին) ի՞նչ կասես, պարոն Կուլկուլեանց:

ԿՈՒԼ. Այդպիսիներին միայն աղօթքը կփրկէ:

ՉԱՔ. Աշխարհի աղօթքը, գիտութիւնը, հարստութիւնը,
մի խօսքով որտեղ լաւ բան կայ, հաւաքես ու խառնես, միշտ
մի փափիկ օրիորդ չի դուրս գալ. (Սամուէլին) գիւղը չգնաս,
խելօք մարդարէ:

ՍԱՄ. Ո՛չ, ես տարեկան 4 անգամ գիւղից գալիս եմ յա-
տուկ Ռուբէնեանցի գերեզմանը համբուրելու:

ՄԱՆ. (կաղին է կոտրատում ուտում, օղի չէ խմում): Բայ,
բայ, բայ (իբրեւ դժբախտութիւն է պատահել, ամբողջ մարմնով
շարժւում, է նրանք հետաքրքրւում են):

ՉԱՔ. Ի՞նչ պատահեց:

ՄԱՆ. Մէկ դռը կաղին կերայ, ամբողջը զլխիս հարա-
մեց. (շարունակում է ուտել առանց օղի ու ծխում է):

ՉԱՔ. Մի դէպք պատմեմ Ռուբէնեանցից. մի անգամ ու-

սանող ժամանակ, իմ անուանակոչութեան օրն էր, կաշխատեմ
կարճ պատմել. 4 ուսանող հրաւիրել էինք օրիորդների, ոչ մէկիս
մօտ կուպէլ չկար, զնացինք հանգուցեալ Ռուբէնեանցի մօտ, իբր թէ
սենեակից դուրս են անում, փող չկայ, առանց խօսելու վերար-
կուն տւեց, թէ դրաւ դրէք, այդպէս էլ արինք. 20 ռուբլի
տւեցին, ուտելու ամեն ինչ զնեցինք. ճաշելու ժամանակ (ծիծա-
ղում է) հա՛, հա՛, հա՛, (Սամուէլը աչքերը սրբում է թաշկինակով):
Ծիծաղից մեռանք, երբ որ լաւ գրադուսում էինք, դէ՛հ, ասացի, սի-
րելի օրիորդներ, լսեցէք մեր ծիծաղի պատճառը. բոլորը պատ-
մեցի: Շատ ծիծաղելի մարդ էր. սա հազար անգամ պատմած
չլինեմ:

ՍԱՄ. Ռուբէնեանցի մասին միայն այդքանը, «շատ ծիծա-
ղելի մարդ էր», էլ ուրիշ ոչ ի՛նչ:

ՉԱՔ. Իհարկէ, չէ՞, պարոն Կուլկուլեանց:

ԿՈՒԼ. (ձեռքերը ջարդելով): Ո՛չ, ո՛չ, մեռելների մասին միք
խօսիլ, նորանք ինձ սպանեցին. չեմ կարող լսել չէ՛, չէ՛ (զնում է):

ՉԱՔ. Ա՛յ, իսկական մարդը պարոն Կուլկուլեանցն է, ամեն
տեղ ձայն ունի. ամենքը սիրում են, մի խօսքով, կեցցէ՛, սիրելի
մարդ է:

ՍԱՄ. Ես վատ կարծիք ունիմ դորա մասին:

ՉԱՔ. (հպարտ): Սխալւում ես, լաւ չես ճանաչում (Մա-
նուկին) չէ՞, պարոն Մանուկ:

ՄԱՆ. Ես կարծում եմ, հիւրասէր մարդուց լաւ մարդ
չկայ աշխարհում:

ՍԱՄ. Հունձը շատ է, մշակները սակաւ:

ՉԱՔ. Թող Քրիստոսի խօսքերը. ամսոյս 4-ին խնջոյք կայ
ինձ մօտ, արի, կտեսնես մեր նախկին ընկերներին, որոնց օգնում
էիր, նորանք քեզանից հազար անգամ հիմա բաղդաւոր և հարուստ
են. երևի բացի այդ հազուստից էլ ուրիշ չունես, որ դոնէ
մի անգամ էլա դաս մի օրինաւոր շրջան տեսնես: Ասում ես
գիւղից 5 նամակ եմ գրել չես պատասխանել. տեսնում ես ինչ-
քան հետդ խօսեցի (բեխերը ոլորելով) դէ՛հ, կգաս, սուտ մար-
դարէ, չամաչես:

ՍԱՄ. Աչքերիս, ականջներիս չեմ հաւատում, մի՞թէ մեր միւս ընկերներն էլ քեզպէս փոխուել են: Ո՞րտեղ մնաց ձեր խոստումը, անկեղծ սէրը դէպի թշուառները. վերջապէս, մի՞թէ մոռացաք Ռուբէնեանցին:

ԶԱՔ. (յանկարծ տխրում է, լուռ: Մերենայաբար): Լաւ լի- շողութիւն ունես, ես բոլորը մոռացել եմ, այո՛, մոռացել եմ: (Լուռ. յանկարծ զայրանում է): Դու մեր շրջանի մարդ չես, տրամադրութիւնս փչացրիր, քո տեղը հէնց դիւղն է, էն ար- ջերի մօտ. մէկը ինձ հարցնող լինի՝ ասի ինչո՞ւ եմ քեզպէսների հետ խօսում (նեղացած գնում է):

ՍԱՄ. (նայելով Ռուբէնեանցի նկարին): Ինչո՞ւ այն բոպէին դու Մարգարէ Ռուբէնեանց, որ դաշոյնը սիրադ պատուեց, չպատ- ուեց միաժամանակ և երկինքը, և աշխարհում ոչ մի բան չը- փոխուեց, բացի մի Յ քալ հարթ տեղ, որ բլուր դարձաւ: (Համբուրում է նկարը):

ՄԱՆ. Այսօր Կուլիկուլեանցի հարսանիքն է, մեռելներու մա- սին խօսելու օր է. ես գիտեմ, որ Կուլիկուլեանցը մարդասպան է:

ՍԱՄ. (ցնցւում է շնչասպառ): Նա ո՞ւմ է սպանել:

ՄԱՆ. Բոլորին. բայց իմս քէֆն է, քէֆը (գոռալով) հէ՛յ, հէ՛յ... (գնում է):

ՍԱՄ. Այս մարդը կարծես ուղում էր ասի այն, ինչ որ հոգիս վաղուց զգում էր:

ՏԵՍԻԼ 3.

Սամուէլ, Սիրանոյշ, քիչ լստոյ Շուշան:

ՍԻՐԱՆ. (պսակի զգեստով, յանկարծ շփոթւում է): Ա՛հ, դուք այստեղ էք (ուշքը ժողովելով): Բարեւ ձեզ. Յ տարին կար- ծէք տասը տարի է անցել, այնպէս էք փոխուել:

ՍԱՄ. ձիշտ է, Յ տարուալ ընթացքում շատ եմ փոխւել, և շատ էլ ցաւեր է անցել զլիսովս. հիմա ես ամենաերջանիկն եմ զգում ինձ գիւղումը: Ես սիրում եմ բնական կեանքը. միայն... (զսպում է) աս... (հառաչում է)...

ՍԻՐԱՆ. Դուք ուղում էիք մի ինչ որ ասել:

ՍԱՄ. Այո՛, ուղում էի ասել: Գիւղից շ մղոն հեռու մէկ

սար կայ խիտ անտառով պատած, իսկ սարի ամենածայրը, մի փոքր կլորիկ տեղ կանանչ է, ծառ չկայ: Երեկոյեան դէմ, երբ արեգակը կարծես չուղենալով իջնում է սարի ետեւ, հէնց այդ ժամանակ, ամեն օր շ սարի այժ դուրս կգան այդտեղ արա- ծելու. չար որսորդներից մէկը մի օր ընկնում է դրանց հետեւից, և դրանցից մէկը ընկնում է անտառի թփերի մէջ ու այնպէս է փաթաթւում, որ խեղճ կենդանին անկարող է լինում շարժել. որսորդը բռնում է դորան...

ՍԻՐԱՆ. (շնչասպառ): Յետո՛յ:

ՍԱՄ. Յետոյ միւս այժը մնում է մենակ, այլևս չէր երե- լում իր սովորած տեղում: (Սիրանոյշը յանկարծ լալիս է բարձր): Ի՞նչ պատահեց, ինչո՞ւ էք լալիս:

ՍԻՐԱՆ. Ես էլ այն խեղճ այժի նման ընկել եմ ցանցի մէջ: Ահա այն ցանցը (ցոյց տալով պսակի զգեստը, աչքերը սրբում է թաշկինակով):

ՍԱՄ. (Սիրանոյշի ձեռքից համբուրում է): Ես կազատեմ ձեզ այդ ցանցից, դնանք խաւարի մէջ կորած անմեղ երեխաների մօտ, նորանք որք են, հայր ու մայր կլինենք նորանց համար:

ՍԻՐԱՆ. Ես ձեզ յարգում եմ և հիանում ձեր զաղափարի վրայ: Բայց ուշ է, Կուլիկուլեանցից զաւակ ունեմ, ծնողներն իրաւունք չունեն իրենց սիրոյ կամ ուրիշ պատճառների առ- թիւ, որք թողնեն իրենց զաւակներին ու փախչեն: Այդ քայլը պէտք է անել, որ դեռ զաւակ չկայ. յետոյ ուշ է, ուշ... Կեն- դանին մինչև անգամ չի թողնում իր զաւակին անտէր:

ՍԱՄ. Ես ձեզ սիրել եմ այն օրից, երբ Յ տարի առաջ ձեզ տեսայ հօրս խանութում: Հոգոյս չափ հիմա էլ սիրում եմ ձեզ: Բայց ազնւութիւնը բարձր է սիրուց: Այո՛, զաւակ ունենալուց յետոյ ուշ է. ամեն մարդ իրեն սխալի համար պէտք է ինքը տուժէ, և ոչ զաւակը: Մենք կապրենք հեռու մէկս-մէկից, բայց իմ սիրտս ամեն բոպէ ձեզ կկանչէ իր մօտ ու կանիձէ իր ճակատագրին: (Լուռ): Ի՞նչպէս է ձեր փոքրիկ օրիորդը:

ՍԻՐ. Ամեն օր հարցնում է, «հայրիկը շուտ կգայ»: Ասում եմ՝ այո բալիկս, այո... շուտ կգայ. (աչքերը սրբում է թաշկինակով):

ՇՈՒՇԱՆ. (զալիս է. Սիրանոյշին): Բաւական է, քոյրիկս, բա-

ւական է, նա մեռաւ զնաց, պսակդ է հիմա, պսակդ: (Սամուէլին):
Բարեւ ձեզ, ինչպէս փոխուել էք, Տէր Աստուած:

ՍԻՐ. (լացակումամ): Ո՛հ, ո՛չ, սպանեցին, նա չմեռաւ:

ՍԱՄ. (ցնցւելով): Մի՞թէ սպանել են... ո՞վ...

ՇՈՒՇ. (ընդհատելով): Խնդրում եմ միք հարցնել...

ՍԻՐ. (ինքն իրեն): Այն Յուդան հիմա էլ աչքիս երևում է,
ինչպէս դաշոյնը խցկեց Պետրոսի սիրտը, Աստուած իմ, ինձ
թաղեցէք, չեմ ուզում, չէ՛, չէ՛, (լալով դնում է):

ՇՈՒՇ. Կուլկուլեանցի պէս բարեբար ու հարուստ մարդը
միայն նորա համար է պսակւում, որ երեխայ ունէ, ապօրինի
չմկտուի: Մի աղքատ կին, որի տունն էլ պէտք է ծախուէր Կուլ-
կուլեանցի պարտքի դէմ ու փողոցումը մնար, երկու ձեռքով
ընկել է ոսկի հորի մէջ, դարձեալ Պետրոս, Պետրոս է կանչում,
չեմ հասկանում:

ՍԱՄ. Պետրոսի սպանւելը, Սիրանոյշի պարտքը հողիս մի
ինչ որ չար բան է գողցակում: (Լուռ): Ի՞նչպէս են ձեր ծնողները:

ՇՈՒՇ. Հայրիկս անիծեց ինձ, նրա կամքին հակառակ զնացի
Զաքարիւ. մայրս էլ 3 տարի է բաժանւած հայրիկից, փոքրիկ
եղբայրս մօրս մօտ է, միշտ հարցնում է, հայրիկը երբ պէտք
է հաշտւի մայրիկի հետ: (Հառաչում է): Օհ... բաս սորան վերջ
չի՞ լինելու...

ՍԱՄ. Ինձ յայտնի է, որ ձեր բնական ջիւր ու ցան
անողը աղա Կուլկուլեանցն է, բայց ինչո՞ւ պէտք է ձեր հայրը
անիծէր ձեզ:

ՇՈՒՇ. Պարոն Կուլկուլեանցը հայրիկիս հաւատացրել է,
իբր Զաքարը վարակիչ հիւանդ է:

ՍԱՄ. Մի՞թէ հիւանդ է:

ՇՈՒՇ. Ո՛հ, սուտ է, հիւանդ չէ:

ՍԱՄ. Դորանից չեսոյ աչդ ստորին ազնիւ էք ասում:

ՇՈՒՇ. Այդպէս բարեգործ մարդուն ո՞վ կհամարձակւի ան-
ազնիւ ասել:

ՍԱՄ. Իսկ Զաքարը ի՞նչ է ասում:

ՇՈՒՇ. Նա էլ ասում է հայրդ է հնարել աչդ, Կուլկուլ-
եանցը ազնիւ մարդ է, չի ասիլ:

ՍԱՄ. Իսկ ինքը՝ Կուլկուլեանցը ի՞նչ է ասում. ինչո՞ւ չէք
բացատրութիւն պահանջում:

ՇՈՒՇ. Շատ եմ փորձել, չի լինում. ասում է անցածի
մասին չեմ սիրում խօսել:

ՍԱՄ. Իսկ դուք հաւատացած էք, որ Կուլկուլեանցը աղ-
նիւ մարդ է:

ՇՈՒՇ. Եթէ նայում եմ նորա անչափ բարի գործերին
և այն յարգանքը որ նա ունէ հասարակութեան մէջ, այնու-
հետեւ չեմ իմանում, հարազատ հօրս հաւատամ թէ նրան:

ՍԱՄ. (յանկարծ զայրանում է): Աստուած իմ, սրանք բո-
լորը աչքերը բաց կոյրեր են, ո՛չ, չեմ կարող տանել այս. (ա-
րագ զնում է):

ՏԵՍԻՒԼ 4:

Շուշան, Կուլկուլեանց, Սիրանոյշ, Մանուկ և Վարդան:

ԿՈՒԼ. (Սիրանոյշին): Դու բաղդաւոր ես, որ ինձանից
զաւակ ունես. վերջապէս դու ե՞րբ պէտք է ուրախանաս:

ՍԻՐ. Երբ Պետրոսս յարութիւն կառնէ:

ԿՈՒԼ. Թող այդ խօսքերը, ամօթ է, հիւրեր են գալու,
պսակդ է: Բաւական է, ես քեզ չեմ ստիպիլ, հեռացիր աչքիցս:
(Վարդանը գալիս է սպիտակ գոգնոցով, պատրաստում է սեղանը
ամեն ինչ ճաշելու):

ՄԱՆ. (գալիս է, Վարդանին ցոյց աւելւում է թոռը): Վար-
դան, ես այստեղ պէտք է նստեմ. դու զիտես էլի՞ ինչպիսի խր-
միջքներ է ինձ դուր գալիս: (Ուրախացած օգնում է սեղան
սարքելուն):

ՎԱՐԴ. (մի կողմ): Դասիդ մի բօթուկա բացախիմ տնելու
ըռաչին:

ՍԻՐ. (մօտենալով Կուլկուլեանցին): Ներիւր ինձ, ներիւր, էլ
չեմ տխրիլ...

ԿՈՒԼ. (երեսը դարձնում է մի կողմը զայրացած): Հեռա-
ցի՛ր, կորի՛ր Պետրոսիդ մօտ... իմ շունը Պետրոսիցդ հազար ան-
գամ բախտաւոր է... Ի՞նչ ես անդադար Պետրոս, Պետրոս
կանչում:

ՍԻՐԱՆ. (փաթաթւում է Շուշանին): Օգնիր ինձ քոյրս, օգնիր, օգնիր... (աչքերը սրբում է թաշկինակով):

ՇՈՒՇ. Ներեցէք, պարոն Կուլիկովեանց, աղաչում եմ:

ԿՈՒԼ. (երեսը ուրիշ կողմը ձեռքը մեկնում է):

ՇՈՒՇ. (շտապեցնում է Սիրանոյշին և նա գնում է Կուլիկովեանցի ձեռքը համբուրում):

ՄԱՆ. (Կուլիկովեանցին): Ահ, կեցցէք դուք, տղամարդ էք, տղամարդ: (Տալիս է օղի, Կուլիկովեանցը խմում է):

ԿՈՒԼ. Այսուհետև չլինիմ չլսեմ քո գեաղա Պետրոսի անունը, ինձպէս աղա մարդու կին ես դառնում. աչքերդ լաւ բաց արա, տէս:

ՄԱՆ. (Վարդանի ձեռքիցը վերցնելով շիշը բարձրացրած նայում է): Սա լաւ գինի է երևում, Վարդան:

ՎԱՐԴ. Տա 7 տարւայ քեօհնա կինի եա, հէնց քեզ հրմարա (մի կողմ ծիծաղում է): Թունդ քացախա, վեր խմեց, լոք լոքա ընելու:

ՄԱՆ. (համբուրում է շիշ, դնում սեղանին): Էլի բեր, Վարդան, սա քիչա:

ՎԱՐԴ. Հէփ վեր տա կտրտակես, էլի կպիրեմ, արխային կաց:

ՏԵՍԻԼ 5.

Սազանդարները հարևան սենեակում նազում են, չեն երևում. գալիս են հիւրերը, 1-ով, 2-ով, 3-ով մինչև 15 հոգի, բարևում են Կուլիկովեանցի և Սիրանոյշի հետ, շնորհատրում են, գալիս է և Սամուէլը, Զաքարը, Բարսեղը, Աստղիկը չկայ: Սեղանը արդէն պատրաստ է:

ԿՈՒԼ. Պարոնայք, ճշմարիտ մարդը պէտք է և ճշմարտութիւն սիրէ: (Նայելով իր ժամացույցին): Որոշած ժամից 10 րոպէ էլ դեռ անցէ, միւս հիւրերը ուշացան, ժամանակ է նրստել: (Հրաւիրում է): Համեցէք, համեցէք: (Ինքը նստում սեղանի վերևը, Սիրանոյշը աջ, Զաքարը ձախ, նստում են և միւսները ուտում են, լսում է դանակների ու ամանների աղմուկը):

ԶԱԳՍ. (Բաւական լուրթիւնից չեռոյ նշան է անում, սազանդարները չեն նազում): Պարոնայք, բաժակս բարձրացնելով, առաջարկում եմ մի թանկագին մարդու կենաց: (Բացականչելով): Ո՛վ է պարոն Կուլիկովեանցը: Նա մի անձնաւո-

րութիւն է, որ ներկայ ժամանակներումս չի ճարւիր: Ինձ հեռու կտանի, երբ նորա բարի դործերը մէկ-մէկ չիշեմ, մանաւանդ, որ բոլորիս յայտնի է. թողնելով այս հարցը, ես կառաջարկեմ բաժակներդ դատարկել թագաւորի և թագուհու կենացը: (Գոռում է): Ուռա՛, ռուա՛, ուռա՛... (ամենքը գոռում են):

ՄԱՆ. (խմում է քացախ): Անտէր մնայ դորա կենացը, չիզարս այրեց: (Ամբողջ մարմնով շարժւում է, բոլորը շփոթւում են ջուր և այլն օգնում): Այդ արջի ճուտ Վարդանն է ինձ դիտմամբ քացախ տւել:

ԿՈՒԼ. (Վարդանին): Ծի՛շտ է, Վարդան, դու ես տւել:

ՎԱՐԴ. Վէչ աղա, ես իրան րսեցի, վեր սա քոհնա կինի եա, նա էլ ասեց վէչինչ էլ բեր:

ԿՈՒԼ. Ուրախութիւն արէք, հարսանիքի ժամանակ մարդ էլ է մեռնում: (Սազանդարներին): Նւազեցէք: (Նւազում են Կուլիկովեանցը բաւական լուրթիւնից չեռոյ): Յայտնում եմ շնորհակալութիւն և թագուհու կողմից: Շուտով ես կլսէք աղա Կուլիկովեանցի բարերարութեան ծայնը: Այն, ինչ որ պէտք է նւիրեմ եկեղեցուն, դեռ չեմ ասիլ, բայց ծայնը (գոռալով) ծայն: (Նւազելիս չեն լինում, յանկարծ նւազում են. սազանդարներին) Սպասեցէք, սպասեցէք: (Չեն նւազում): Բայց ծայնը... (Իբրև ձեռքով դանդ է զարնում. ծայնն էլ նմանեցնում զանգին): Բ՛՛՛, բ՛՛՛, բ՛՛՛, բ՛՛՛ (ձեռքով անդգոյշ խփում է աջ ու ձախ նստողների աչքին, նրանք արտայայտում են աչքերի ցաւելը. Կուլիկովեանցը շարունակում է): Բ՛՛՛, բ՛՛՛, բ՛՛՛, (նւազում են):

ԲԱՐՍԵՂ. (քիչ չեռոյ): Ես կառաջարկէի յատուկ պարոն Կուլիկովեանցի կենացը. (գոռալով) մի՛թէ դա բարերարութիւն չէ, որ այսօր նա մի աղքատ ու անտէր կնոջ հետ պսակւում է:

ԲՈՂՈՐԸ. (միասին): Այ՛ո, այ՛ո, կեցցէ, կեցցէ պարոն Կուլիկովեանց:

ՍԱՄ. (գոռալով): Իսկ ես կասեմ՝ ոչ...

ԲՈՂՈՐԸ. (շփոթւում են. Կուլիկովեանք ուսերի շարժումով յայտնում է իր անմեղութիւնը):

ԶԱՔԱՐ. Պարոնայք, հարկաւոր է (Սամուէլին) այդ պարոնին դուրս անել այստեղից:

ՍԻՐ. (եռանդուն): Ես բողոքում եմ այդ կարգադրութեան դէմ: (Բոլորը հանգստանում են):

ՇՈՒՇ. (քիչ յետոյ): Պարոնայք, թոյլ տւէք առիթից օգտուել: Ահա Յ տարի է ինչ հայրս ու մայրս բաժանւած են, հայրս իմ և ամուսնուս հետ չէ խօսում, այս դրութիւնը անտանելի է, աղաչում եմ այստեղ ներկայ եղողներին, ևս առաւել աղա Կուկուլեանցից, հաշտեցրէք մեր ցրուած ընտանիքին:

ԿՈՒԼ. (զայրացած): Թողեցէք այդ հարցը, ես չեմ սիրում անցեալից խօսելը:

ԲՈԼՈՐԸ. Այո, այո, չարժէ: Պարոն Կուկուլեանցը կեցցէ, կեցցէ, ուռւ, ուռւ, ուռւ... (բղաւում են):

ԶԱՔ. (քիչ հարբած): Պարոն Կուկուլեանցի խօսքը ինձ համար թանկ է, քան աշխարհի բոլոր զիտութիւնները:

ԲԱՐՍ. (քիչ հարբած): Պարոն Կուկուլեանցի խօսքը տասը միլիոնից էլ լաւ է... (Կուկուլեանցը երգում է սաղանդարների հետ):

ԶԱՔԱՐ. Աշան, աշան, հէյ... հէյէյ...

ՄԱՆՈՒԿ. (բաժակը ձեռքին հարբած): Ինչո՞ւ աղա Կուկուլեանցը ինձ սիրում է, որովհետեւ զիտէ, որ ինձ համար մէկ է ինչ ուղում է անում է. բայց լաւ չի... Աստուծոյ ստեղծածներին այդքան չի կարելի չարչարել (խմում է. աչքերը սրբում, թաշկինակով) շատ է չարչարում... շատ...

ԿՈՒԼ. (Վարդանին): Դուրս տար օդրան այստեղից:

ՄԱՆ. (զոռալով Կուկուլեանցին): Աստուծոց չեմ վախենում, խօ ինձանից վախենում ես:

ԿՈՒԼ. (սիրալիր թւիցը բռնած նստեցնում է): Ես կատակ եմ անում, նստի՛ր, աղա Կուկուլեանցից չեն նեղանալ:

ԶԱՔ. Ես, ինչպէս բժիշկ, վկայում եմ, որ այս պարոնը (Մանուկին) զինու ազդեցութեան տակ է խօսում, չարժէ ուշը դարձնել:

ՄԱՆ. (Կուկուլեանցին): Սիրտս զազում լիքն է, հրամայիր սորան որ սպիչկեն չձօտեցնի, թէ չէ, որ վառւեց, դժւար կլինի հանգցնելը:

ԿՈՒԼ. Պարոն Զաքարը այնքան է ինձ յարգում, որ այս րոպէիս բեզնից ներումն կխնդրի:

ԶԱՔ. Եթէ այդ հարկաւոր է պարոն Կուկուլեանցին, պատրաստ եմ ներումն խնդրել: Պարոնայք, էքստրէններ խմենք խաղաղասէր պարոն Կուկուլեանցի կենացը: (Խմում են բոլորը): Բրաւօ, կեցցէ, կեցցէ...

ՄԱՆ. Աղա Կուկուլեանցի պէս խաղաղասէր մարդ երկնքումն էլ չի ճարւիլ: (Պարում են մէկ-մէկ երկուսով և այլն):

ԶԱՔ. Բարձրացնել պարոն Կուկուլեանցին. (ամենքը բարձրացնում են Կուկուլեանցին):

ՍԱՄ. Պարոնայք, բաւական է, հիմա լսեցէք պարոն Կուկուլեանցի անիրաւութիւնները...

ԶԱՔ. (բղաւելով): Դ՞ուրս, չիմար, ծեծել դորան. (ամենքը մօտենում են որ ծեծեն):

ՍԻՐ. (եռանդուն զնում է բոլորի առաջին կանգնում ու պաշտպանում Սամուէլին): Ո՛վ ուղում է նորան խփէ, առաջ պէտք է ինձ խփէ:

ՍԱՄ. (զոռալով): Կուկուլեանցը աւագակ է. (ամենքը մօտենում են, որ խփեն, Սիրանուշը խանդարում է, Սամուէլը զնում է):

ԶԱՔ. Պարոնայք, նորահարսի վարմունքը ի՞նչպէս էք զանում:

ԲԱՐՍ. Այդ իրաւունքը աղա Կուկուլեանցին է, նա կարող է ներել կամ պատժել: (Բոլորը) այո, այո, ճիշտ է, ճիշտ է...

ԿՈՒԼ. Պարոնայք, իսկական աղա մարդը պէտք է ներէ, ես ներում եմ: Երկրորդը, նորահարսը այնքան է ինձ սիրում, որ նա չուզեցաւ իմ պսակի օրը մի որեւէ խռովութիւն լինի, այդ էր իսկական պատճառը:

ԲՈԼՈՐԸ. Ժիշտ է, ճիշտ է: (Նստում են):

ԶԱՔ. Պարոնայք, ոտքի կանգնելով յայտնենք ցաւակցութիւն մեծահոգի աղա Կուկուլեանցին: (Ամենքը կանգնում են գլուխները խոնարհած, յետոյ նստում):

ԲԱՐՍ. (քիչ յետոյ): Մեր հայոց սովորութեամբ, պէտք է հարսն ու փեսան անպատճառ պարեն: (Բոլորը խնդրում են. պարում է Կուկուլեանցը, Սիրանուշը չի պարում, միւսները ծափ են տալիս բոլորի անձեռոցիկը կրծքներին խօթած):

ՏԵՍԻՆ 6.

Նոյնը և Լևոն. յետոյ Սամուէլ, քիչ յետոյ Աստղիկ և Յոյակ:

ԼԵՒՈՆ. (զուհետաւած ու պատառւած հագուստով մօտենալով Կուլիկուլեանցին պարելու բոպէին ձեռքը մեկնած): Կապոտեցէք սորան, սա մարդասպան է: (Ամենքը մի բանի վայրկեան մնում են լուռ քարացած. Կուլիկուլեանցը պարի ձեռով, միւսները կարծես ուզում են ծափ տալ, Լևոնը մատը մեկնած, Սիրանոյշը գլխիցը սեղմած):

ՍԻՐԱՆ. (դէպի Լևոնը, գոռալով): Սա է, սա է Պետրոսիս սպանողը: (Թուլացած ընկնում է, դուրս են տանում Սիրանոյշին, թուլացած ընկնում է և Կուլիկուլեանցը բաղմոյցին և ձեռքով ցոյց է տալիս, որ դուրս տանեն Լևոնին):

ԶԱՔ. (բղաւելով): Դորա լեզուն հարկաւոր է կտրել: (ձեռքով ուզում են դուրս տանել):

ՍԱՄ. (Լևոնին նրանց ձեռքից ազատելով): Սպասեցէք, խելադարւած էք դուք:

ԼԵՒՈՆ. (գոռալով): Փաստ ունիմ, փմստ:

ԱՄԵՆՔԸ. (խկոյն յետ են քաշւում լսում է): Փմստ, փմստ:

ԼԵՒՈՆ. Մենք քաղցած էինք, սա մեզ կաշառեց, յետոյ մատնեց, ես բերդից փախայ հեռու աշխարհի խուլ անկիւնները: Գնացէք, փախէք հեռու սրանից (ցոյց տալով Կուլիկուլեանցին) մարդակերների, կապիկների գաղանների մօտ, ես երկու տարի նրանց մէջ եղել եմ, ոչ մի տեղ այսպիսի չար ու թունաւոր արարած չկայ. ասածներս փաստ են:

ԱՄԵՆՔԸ. (միասին): Սուտ է, սուտ է... փաստ ցոյց տուր, կենդանի չենք թողնիլ քեզ (ուզում են մօտենան ձեռքն):

ՍԱՄ. Պարոնայք, խնդրում եմ ձեզ, լսէք սորան մինչև վերջը, ասում է փաստ ունիմ:

ԼԵՒՈՆ. (ծոցից հանում է թերթը, օդի մէջ դողացնելով): Ահա փաստ... Երբ դաշոյնով պատռեցի Ռուբէնեանցի սիրտը, նա կիսամեռ. ձայնով հրամայեց, որ սպասեմ. մնացի քարացած

արիւնոտ դաշոյնը ձեռիս կանգնած, և նա այս թերթը տւեց: (Տալիս է թերթը Սամուէլին):

ԿՈՒԼ. (ուզում է ընկած տեղից բարձրանայ): Սուտ է, սպանեցէք դորան (ու ուժասպառ նորից ընկնում):

ԼԵՒՈՆ. (ծոցից հանում է ևս թերթ): Ահա ևս թերթ, որ գրել է Ռուբէնեանցի հասցէն այդ դարշելին (տալիս Սամուէլին): Ձեմ մոռանում այն բոպէն, երբ Ռուբէնեանցը բերանն ու աչքերը մեծ բաց արած, ծախ ձեռքով դաշոյնով պատռած տեղից բռնած, աչք ձեռքը մեկնած դէպի ինձ, դժոխային անէծք թափեց գլխիս ու ասաց. «Նղովեալ լինիս յաւիտեան, եթէ բոլորի առաջ չխոստովանւես»): Այդ խօսքերը ամբողջ երեք տարի է կրակ դառած սիրտս այրում է: Հիմա զգում եմ, որ այդ կրակը հանգաւ, այլևս չեմ վախենում մանդկանցից: (Չուզում է): Խովստովանւում եմ ձեր բոլորի առաջ, (ցոյց տալով Կուլիկուլեանցին) այս հրէշի ցանկութեամբ սպանեցինք Ռուբէնեանցին և Պետրոսին:

ՍԱՄ. (մի ձեռքով թերթերը բռնած, միւս ձեռքով դրլխիցը):

ԱՄԵՆՔԸ. (մօտենում են նայում. լսում է): Նրա ձեռքն է, ճիշտ է...

ԶԱՔԱՐ. Բայց ի՞նչ է դրած...

ՍԱՄ. Դէհ, լսեցէք ձեր բարերարի արարքը. (կարդում է) «Իմ և Պետրոսի սպանութիւնը կատարւել է Մեծիւմ Կուլիկուլեանցի ձեռքով, անմեղներին չմեղադրէք. Ռուբէնեանց»): (Ցոյց է տալիս միւս թերթը բոլորին) ահա այս վայրենի ձեռքով դրած Ռուբէնեանցի հասցէն:

ԱՄԵՆՔԸ. (նայում են): Ճիշտ է, կապոտենք այս վայրենուն... (Բռունցքները դողացնում են Կուլիկուլեանցի վրայ):

ՍԱՄ. (գոռալով թերթը խփում է Կուլիկուլեանցին): Ահա, բո զանգի ձայնը, դարշելի արարած:

ԿՈՒԼ. (տեղից թռչում է, ծոցից հանում է ատրճանակը): Ահա սատկիր. (արձակում է Լևոնին, Սամուէլը Կուլիկուլեանցի

ձեռքից բռնում է բարձրացնում, ատրճանակը տրաքում է դէպի առաստաղ):

ԼԵԻՈՆ. (դաշոյնը հանում է): Այս դաշոյնը դու ես ինձ տւել, սատկիր շան պէս (ուզում է սպանել):

ՍԱՄ. (խանգարում է): Սպասիր, չար մարդու վերջը այդ չէ:

ԼԵԻՈՆ. (չէ սպանում, դաշոյնը ձեռքին հեռանում է պատից կաշում):

ԿՈՒԼ. (ընկնում է և դիմում օդնութեան, որին դիմում է նա իր ձեռքի անձեռնոցիկով երեսին է զարնում ու երեսը նորանից դարձնում): Ազատեցէք, օգնեցէք, մեռնում եմ:

ՎԱՐԴ. Ժողիկ շան տղա: (Կուլկուլեանցին) Հէնց հախտա սատկի, խալխերին ըրեցիր, խրվեցիր, բոլա-հերիքա: (Թքում է հեռանում):

ԿՈՒԼ. (Զաքարին): Օգնիր, մեռնում եմ:

ԶԱՔ. Այդ մեռնել չէ, այլ սատկել է: Ո՛վ է մեղաւոր, անշուշտ նա, ով որ քեզ աղա Կուլկուլեանց է ասել: Նրանց թւում և ես. (ինքն իրան) այո, աղնիւ Ռուբէնեանց, այս չար գաղանք քեզ չկարողացաւ ջնջել աշխարհից, դու ապրում ես: (Սամուէլին) Ահա քո կենդանի պատկերը, որի առաջին գլուխ եմ խոնարհում: Գնանք, ընկերս, ազատիր ինձ այս կեղծ շրջանից, քո գաղափարը սուրբ է ինձ համար (փաթաթւում են):

ԿՈՒԼ. (Մանուկին): Գոնէ դու օգնիր:

ՄԱՆ. (մինչև այդ սառնասիրտ ուտելիս խմելիս է լինում): Հարսանիքդ գլխիս հարամեցիր. (ու շարունակում է ուտել):

ՇՈՒՇ. Հայրիկ, այս գաղանք ձեզ խաբել է:

ԲԱՐՍ. (Կուլկուլեանցին): Դու բոլորին օձի պէս կծել ես այդ պատիժը քիչ է, քիչ. զաւակս, զաւակս, (փաթաթւում է Շուշանին) ուր է մայրդ. Աստղիկս, ո՞ւր ես, եկ ներիր ինձ աղաչում եմ:

ԱՍՏԳ. (գալիս է Կուլկուլեանցին): Ես եկայ օրդ սեացնեմ, արդէն սեացրել են:

ԲԱՐՍ. Աստղիկս, ներիր ինձ, աղաղաչում եմ (փաթաթւում են):

ԶԱՔ. (Բարսեղին և Աստղիկին): Ներեցէք ձեր որդուն (փաթաթւում է նրանց հետ):

ՍԱՄ. (գոռալով) Սիրանոյշ, հոգեակս, ռոտեղ ես, եկ տես (գնում է Սիրանոյշի հետ գալիս ցոյց տալով Կուլկուլեանցին). Ահա ընկած է այն հրէշը, նա այլևս երկիւղալի չէ:

ՍԻՐԱՆ. (մաղերը գզգզած վրալի զարդերը նետում է Կուլկուլեանցին) յետ ստացիր, զարշէլի, հոգիս զգում էր, որ դու ես Պետրոսիս նահատակել: Սատկիր, շատ ուրախ եմ. վերջապէս ազատւեցայ: (Սամուէլին): Հիմա քոնն եմ, տար ինձ որտեղ կուգես. (փաթաթւում է):

ԿՈՒԼ. (կիսամեռ): Այդ բոլորը սուտ է ես... ես... աղա... աղա...

ՅՈՒ. (այդ մօմենտին մտնում է խելագար ձեռքին հաւաքած անտառի չոփեր, տերեւեր, ցեխոտ երեսով, պատառւած հաղուստով): Աղա, սրանք քեզ համար եմ բերել, ստացիր. (ու թափում Կուլկուլեանցի վրայ գոռալով): Այրւիր...

ԿՈՒԼ. (զարհուրում է ու բարձր ասում): Ահ... (ու մեռնում):

ԼԵԻՈՆ. (Յուլիին): Ընկերս, խելագարւել ես արդէն դու (ու փաթաթւում է):

ՅՈՒ. (իր հագուստը կտոր կտոր պատռում է թափում Կուլկուլեանցի վրայ գաղար կրճելով):

ՍԱՄ. (ձեռքերը մեկնած դէպի Կուլկուլեանցը): Ահա չար մարդու վերջը, մնում է ոտից բռնել ու գցել աղբի մէջ:

ՀԱՆԴԱՐՏ ԻԶՆՈՒՄ Է ՎԱՐԱԳՈՅՐԸ:



ጣኒጦዋ ና ረከከ

Կարապետ Պարոնեանց
Երկու ոստիկան
Սամուէլ
Կարապետի կնոջ
դէպի նախասենեակ:
սրախս ցանկուծիւնները
թաւիր
համբերուծիւնդ
Սամուէլը
սպրթնեց:

ԳԻՆՆ Է 30 ԿՈՊ.

ԴՐՃԻՂ՝ МОСКВА, Армянский пер. в Армянской церкви,
кв. № 9., А. Агаянцу.

ՀՀ Ազգային գրադարան



NL0321469

18.729

